

6014

1914 № 2101

2303

Գ. Ե. Բ. Լ. Կ.

20 ՏԱՐՈՒԱՅ ԿՈԶՄԱՐ

(Օթօղօքի ներկայացման համար կազմված կատալոգ)




Թ ի ֆ լ ի ջ

Հպատակ «Հայպետհոգ»

1914

891.99

L-52



arm
6014

02 FEB 2011

891.99

L-52


Գ. Լ. Բ. Ա.

20 ՏԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԱՐ

(Յիշողուրիւններ ուսի խորհից, իսկական կետեմից)



• • •



Թ. Ֆ. Ի. Զ.
Տպագրան «Հայպետանո»
1914

02.05.2013

33423

20 ՏԱՐՈՒԱՅ ԿՈՇՄԱՐ



60861-67

20 ՏԱՐՈՒՅՑ ԿՈՇՄԱՐ

(Յիշողաւրինենց սրբի խորքից, խսկական կեանեցից)

Ը

Ուրեմն դու, սիրելի՝ ընկերուհի, փափագում ես
իմանալ իմ կեանքի պատմութիւնը՝ սկսած այն օրից,
երբ աւարտեցինք դպրոցը և ճակատագիրը շուտով
բաժանեց մեզ՝ քեզ տանելով հեռաւոր երկիր, իսկ
ինձ թողնելով մեր ծննդավայրում:

Ա՛խ, սիրելիս, ծանր է ինձ համար վերյիշել
և վերապրել այն տառապանքները, որ կրել եմ իմ
քսանամեայ ամուսնական կեանքում: Բայց քանի-որ
փափագում ես այդ, ուրախութեամբ կը գրեմ, մանա-
ւանդ-որ ինքու էլ անյաղթելի պահանջ եմ զգում սիր-
ուըս բանալու քեզ պէս մի մտերիմ ընկերուհու, որին
այնքան սիրել եմ, սիրում եմ, և որի մասին պահել
եմ ամենաքաղցր յիշողութիւններ: Սակայն, մտերիմդ
իմ, եթէ յիշողութիւններս լրիւ չլինին և կամ գուցէ
ոչ խստիւ յաջորդական, այդ պէտք է վերագրել լոկ
ամուսնական կեանքի չափազանց բարդ լինելուն: Եւ մի
այնպիսի կեանք, որպիսին իմն է եղեւ, ամբողջովին
այնպիսի կեանք, որպիսին իմն է եղեւ, ամբողջովին

մար: Բայց այն՝ ինչ որ հնարաւոր պիտի լինի գրի առնելու, լինելու է ճշմարտութիւն, միմիայն ճշմարտութիւն, վասնզի յոդնել եմ, յոդնել՝ քսան տարի շարունակ սուս ու կեղծիք լսելուց ու տեսնելուց: Եւ հէնց այդ իսկ պատճառով իցէ-թէ՝ անգութ ձեռքերով բզիկ-բզիկ արուած սրտիս մէջ կուտակուածը թղթին յանձնելով, որոշ չափով հոգեկան թեթևութիւն զգամ: Զէ-որ կեանքի խորթ զաւակների միակ սփոփանքը՝ իրանց քաշած տարապանքներն ուրիշներին պատմեն է: Հետեապէս՝ երջանիկ եմ որ քո մէջ գըտնում եմ մի կամաւոր ունկնդիր:

Բայց արդեօք համբերութիւն կ'ունենամս կարդալու բոլորը, ինչ որ պիտի պատմեմ քեզ մտերմի անկեղծութեամբ:

Հարցնում ես.—ինչպէս պատահեց որ ես կեանքըս կապեցի մի մարդու հետ, որին հիմա ատում եմ սրտիս ու հոգուս ամբողջ թափով, իմ ամբողջ էութեամբ, իմացականութեանս ամբողջ ուժով:

Ես դեռահաս էակ էի՝ լի վարդագոյն յոյսերով ու քաղցը երազներով: Ինչպէս-որ ծաղիկը սիրում է արել, այնպէս էլ ես էի սիրում կեանքը, որի դէմ ոչ ոխ ունէի, ոչ էլ քէն: Ժպտում էի նրան իմ պատանեկական անմեղ ժպիտով, և ինձ այնպէս էր թվում, թէ նա էլ ինձ է ժպտում ու սիրալիր է դէպի ինձ: Անչափ ու անսահման էր հաւատս դէպի կեանքը:

Եւ մի օր նա կանգնեց իմ առջև այն մարդու կերպարանքով, որին տինչում է ամեն մի օրիորդ, և որը ապագայում այնպէս անողորմաքար պէտք է ջախջախէր իմ տենչանքներն ու քաղցը երազները:

Երբ նա սկսեց հետամուտ լինել ինձ, ես չետաքրքրուեցի ոչ նրա անցեալով, ոչ ներկայով, ոչ շրջանով և ոչ էլ նրա արտաքինով: Իմ ուշադրութիւնս

գրաւեցին նրա հոգին ու սիրուը, նրա բարոյական աշ-խարհը: Իմ ուօմանտիկ երևակայութիւնը ենթադրեց թէ գտել է նրա մէջ անոյշ երազներիս մարմացումը—տղամարդը՝ բառիս ընդարձակ իմաստով: Թհղ նա լինէր վերջին չքաւորը, բաւական էր, որ ես կարողանայի նրան սիրել և սիրուել նրանից, ու այնուհետև պատրաստ էի՝ այդ փոխադարձ սիրոյ անունով կրել ճակատագըի բոլոր հարուածները:

— Օրիորդ,—ասաց նա ինձ մի օր,—միք նայիլ իմ ու կեղեին. Գեղան Կոռուանեանը միայն իրա հոգով ու սրտով կարող է պարծենալ ձեզ մօտ:

Այդ պարզ դարձուածը ինձ շատ դիւր եկաւ, և նա տիրեց իմ սրտին:

Գուցէ այդ մի տեսակ հիպնօզ էր, որ զրկեց ինձ կամքի ոյժից և նիրհեցրեց բանականութիւնս, ճշտութեամբ չեմ կարող յիշել և ոչ մանաւանդ բացատրել: Եւ ես մի օր, վերջապէս, մերժելով ձեռքս լինդրողներին, որոնց թիւը սակաւ չէր, խոստացայ Գեղան Կոռուանեանին:

1892 թուականի սեպտ. ամսի 2-ին պէտք է կատարուէր մեր պսակադրութեան հանդէսը, բայց մօրս մահուան պատճառով յետաձգուեց մինչև 27-ը: Թէկ այդ ժամանակամիջոցը ևս շատ քիչ էր անմոռանալի մայրիկիս սուզը՝ ընդունուած սովորութեամբ պահած լինելու համար, սակայն նշանածն՝ իբրև պետական ծառայող, արձակուրդով էր եկել, անկարող էր երկար մնալ:

Պսակադրութիւնը կտապրուեց: Նոյն օրը, որպէս հարսանիկան ընծայ, նա վիճականութեան երկու տոմսակ նուիրեց ինձ:

Այդ աննշան դէպը յիշեցի այստեղ որոշ նպատակով: Բան այն է, սիրելիս, որ այդ ընծայի շնոր-

մար: Բայց այն՝ ինչ որ հնարաւոր պիտի լինի գրի առնելու, լինելու է ճշմարտութիւն, միմայն ճշմարտութիւն, վասնզի յոդնել եմ, յոդնել՝ քսան տարի շարունակ սուտ ու կեղծիք լսելուց ու տեսնելուց: Եւ հէնց այդ իսկ պատճառով իցէ-թէ՝ անզութ ձեռքերով բզիկ-բզիկ արուած սրտիս մէջ կուտակուածը թղթին յանձնելով, որոշ չափով հոգեկան թեթևութիւն զգամ: Զէ-որ կեանքի խորթ զաւակների միակ սփոփանքը՝ իրանց քաշած տարապանքներն ուրիշներին պատմելն է: Հետևապէս՝ երջանքի եմ որ քո մէջ գըտնում եմ մի կամաւոր ունկնդիր:

Բայց արդեօք համբերութիւն կ'ունենամ կարդալու բոլորը, ինչ որ պիտի պատմեմ քեզ մտերմի անկեղծութեամբ:

Հարցնում ես.—ինչպէս պատահեց որ ես կեանքըս կապեցի մի մարդու հետ, որին հիմա ատում եմ սրտիս ու հոգուս ամբողջ թափով, իմ ամբողջ էութեամբ, իմացականութեանս ամբողջ ուժով:

Ես դեռահաս էակ էի՝ լի վարդագոյն յոյսերով ու քաղցր երազներով: Ինչպէս-որ ծաղիկը սիրում է արել, այնպէս էլ ես էի սիրում կեանքը, որի դէմ ոչ ոխ ունէի, ոչ էլ քէն: Ժպտում էի նրան իմ պատանեկական անմեղ ժպիտով, և ինձ այնպէս էր թվում, թէ նա էլ ինձ է ժպտում ու սիրալիր է դէպի ինձ: Անչափ ու անսահման էր հաւատու դէպի կեանքը:

Եւ մի օր նա կանգնեց իմ առջև այն մարդու կերպարանքով, որին տիհնչում է ամեն մի օրիորդ, և որը ապագայում այնպէս անողորմաբար պէտք է ջախ-ջախէր իմ տեսնանքներն ու քաղցր երազները:

Երբ նա սկսեց հետամուտ լինել ինձ, ես չհետաքրքրուեցի ոչ նրա անցեալով, ոչ ներկայով, ոչ շրջանով և ոչ էլ նրա արտաքինով: Իմ ուշագրութիւնս

գրաւեցին նրա հոգին ու սիրուը, նրա բարոյական աշխարհը: Իմ ումանտիկ երևակայութիւնը ենթաղըեց թէ գտել է նրա մէջ անոյշ երազներիս մարմնացումը—տղամարդը՝ բառիս ընդարձակ իմաստով: Թող նա լինէր վերջին չքաւորը, բաւական էր, որ ես կարողանայի նրան սիրել և սիրուել նրանից, ու այնուհետեւ պատրաստ էի՝ այդ փոխադարձ սիրոյ անունով կրել ճակատագրի բոլոր հարուածները:

—Օրիորդ,—ասաց նա ինձ մի օր,—միք նայիլ իմ ու կեղաին. Գեղան կոռւանեանը միայն իրա հոգով ու սրտով կարող է պարծենալ ձեղ մօտ:

Այդ պարզ դարձուածը ինձ շատ դիւը եկաւ, և նա տիրեց իմ սրտին:

Գուցէ այդ մի տեսակ հիպնոզ էր, որ զրկեց ինձ կամքի ոյժից և սիրնեցրեց բանականութիւնս, ճշտութեամբ չեմ կարող յիշել և ոչ մանաւանդ բացատրել: Եւ ես մի օր, վերջապէս, մերժելով ձեռքս ինչըրողներին, որոնց թիւը սակաւ չէր, խոստացայ Գեղան կոռւանեանին:

1892 թուականի սեպտ. ամսի 2-ին պէտք է կատարուէր մեր պսակադրութեան հանդէսը, բայց մօրս մահուան պատճառով յետաձգուեց մինչեւ 27-ը: Թէս այդ ժամանակամիջոցը ևս շատ քիչ էր անմոռանալի մայրիկիս սուզը՝ ընդունուած սովորութեամբ պահած լինելու համար, սակայն նշանածու իբրև պետական ծառայող, արձակուրդով էր եկել, անկարող էր երկար մնալ:

Պսակադրութիւնը կատարուեց: Նոյն օրը, որպէս հարսանիկան ընծայ, նա վիճակահանութեան երկու տոմսակ նուիրեց ինձ:

Այդ անշան դէպքը յիշեցի այստեղ որոշ նպատակով: Բանն այն է, սիրելիս, որ այդ ընծայի շնոր-

հիւ առաջին անգամ բացուեցին իմ աչքերը՝ Գեղանին լաւ ճանաչելու համար, և ահա ի՞նչպէս.

Սովորական այցերից ու ձեւականութիւններից յետոյ մենք ուղևորուեցինք Գեղանի պաշտօնատեղին—Սալ—ն, որ մի խուլ զաւառական քաղաք է Անդըր-կովկասի մի անկիւնում։ Տեղ հասնելուն պէս նա պահանջեց, որ իր նուիրած տոմսակները վերադարձնեմ իրան։ Զարմացական հարցիս պատասխանեց։

—Գիտե՞ս ի՞նչ, Գոհարինէ. դու անփորձ ես, կարող ես այդ տոմսակները կորցնել, իսկ ինձ մօտ նըրանք պահով կը լինին։

Հարկաւ, առանց մի վայրկեան իսկ տատանուելու, հաւատացի և իրա նուէրը յետ տուի։ Այդ օրից բաւական ժամանակ անց երբ մի օր կատակով հարցրի։

—Տոմսակներս դեռ մեծ գումարներ չեն շահեւնա առանց շփոթուելու պատասխանեց։

—Ա՛խ, սիրելիս, տոմսակները ես նուիրեցի եղբայրներիս։

—Ի՞նչո՞ւ։

—Որովհետեւ նրանք շատ են աշխատել, որ ես արժանանամ քո ձեռքին։

—Ուրեմն դու վարձատրել ես նրանց միջնորդութիւնը, —առաջի ծիծաղելով։

—Այն, եթէ կամենաս։

—Բայց չէ՞ռ մենք առանց միջնորդների ենք ամուսնացել։

Գեղանը ոչինչ, չասաց, գրկեց ինձ ու համբուրեց։ Դրանով էլ ինդիրը թէս փակուեց, բայցեայնպէս այդ հասարակ դէպքը անախորժ տպաւորութիւն թուղեց վրաս։ Հարկաւ այդ անախորժութեան պատճառը տոմսակների նիւթական արժեքը չէր։

Գեղանը, ինչպէս պատմեց ինձ, շատ վաղուց է մտադիր եղել ձեռքս խնդրելու, բայց լաւ իմանալով որ ծնողներս կը մերժեն, չի վստահացել այդ քայլն անելու։ Հէնց այդ միջոցներին էլ տեղի ունեցաւ իմ նշանադրութիւնը մի ուրիշի հետ, որ դատախազի օգնականի պաշտօն էր վարում։ Մօտ երկու խաղի շանական մալուց յետոյ՝ ինձ անյայտ պատարի շանուած մնալուց յետոյ՝ ինձ անյայտ պատառով, ծնողներս վճռեցին նշանը յետ տալ։ Գեղանը՝ երբ այդ բանն իմանում է, ենթադրում է թէ նշանի յետ տալու մտադրութիւնը, իբր—թէ, որոշ չափով անուանկոտրութիւն լինելով ինձ համար, ծնողներս ուրախութեամբ կը համաձայնին ինձ կնութեան տալ իրան. ուստի ինդրում է ձեռքս, սակայն մերժումն է իրան. ուստի ինդրում է անում հօրս։ Հայրս այդ բանը գիտե՞ն չի յուսահատեսանում։ Բայց այդ բանը Գեղանին չի սկսում մի ամբողջ տացնում, այլ աւելի յամառօրէն է սկսում մի ամբողջ տարի հետամուտ լինել ինձ և իրա եղբայրներից մէկի միջոցով նորից դիմումն է անում հօրս։ Հայրս այդ բոցին զիմումն է անում հօրս։ Այդ սկսակենեակում սաստիկ զբաղուած լինելով և պէին զբասենեակում սաստիկ զբաղուած լինելով և կամենալով որ չխանգարեն իրան, ասում է՝—լաւ, կը կամենալով Այդ անորոշ պատասխանից թէս չէր կարետեսնենք։ Այդ անորոշ պատասխանից կը լինի, սալի ենթադրել թէ գրական պատասխան կամար այդկայն Գեղանի խորամանկ եղբայրների համար այդկայն դիմում էլ բաւական է լինում։ Որ լուր տարածեն քաղաքում, թէ հայրս հաստատ խօսք տուաւ։ Թարմ լուրի աղդեցութեան տակ մեր բարեկամները գալով շնորհապատճեան տուաւ էին. իսկ հայրս նոյնիսկ Գեղանից հեռագիր տուաւ, որով իրա շնորհակալութիւնն էր յայտնում ստացաւ, որով իրա շնորհակալութիւնն էր յայտնում խոստանում էր աշխատել շուտ գալ և նշանն անձամբ ու խոստանում էր աշխատել շուտ գալ և նշանն անձամբ տալ։ Ծնողներս մնացին զարմացած և անել գրութեան մէջ, Մանաւանդ լինել մայրս, որ լինելով նահապեմ տական հասկացողութեան տէր, երկիւղ է կրում, թէ տական հասկացողութեան տակ երկրորդ անգամը լինելով, կարող է նշանիս յետ տալը երկրորդ անգամը լինելով,

բամբասասէր հասարակութեան համար նորից խօսակցութեան առարկայ դառնալ: Հօրս հետ խորհրդակցելուց յետոյ, վճռում են, թէև ակամայ, ինձ Գեղանին կնութեան տալ:

Պահկուելուցս յետոյ ձեռքս ընկաւ. Գեղանի և նրա եղբայրների նամակները: Գեղանը գրել էր եղբայրներին.—Ես այս բազգաւորներից չեմ, որ Դ—ները իրանց աղջկան կնութեան տան ինձ: Իսկ եղբայրները պատասխանել էին.—Միամիտ եղիր. մենք այնպիսի լուրեր ենք տարածել ու այժմ էլ տարածում, որ Գոհարինէի ծնողները՝ ուղենչուղեն, ստիպուած պէտք է համաձայնեն:

Ահա այդպիսի աշխատանքի համար էր տումսակներս եղբայրներին տուել:

Մի անգամ երբ խնդրեցի Գեղանին որ պատմէ ինձ իր անցեալ կեանքի մասին, նա ասաց.—Անցեալս այնպէս վատ է եղել, որ լոկ յիշել իսկ չէի կամենալ՝ ուր մնաց թէ պատմէի քեզ, այն էլ հիմա, երբ անչափ երջանիկ եմ զգում ինձ....

Ես ինքնաբաւականութեամբ ժպտացի, իսկ նա շարունակեց խօսքը.

—Եթէ զու միքիչ տգեղ էլ լինէիր, ես էլի կ'ուզէի քեզ, որովհետեւ ես լաւ էի ճանաչում թէ քեզ և թէ յարգելի ծնողներիդ: Իսկ շատ առաջուց ձեռքդ չխնդրելուս պատճառն այն էր իսկապէս, ինչպէս ասացի, որ համոզուած չէի, թէ ծնողներդ կը համաձայնեն: Եւ եթէ չինէր նշանդ յետ տալու առիթով քաղաքում տարածուած՝ պառաւական անմիտ բամբասանքները, դժուար թէ ծնողներդ համաձայնէին....

Գեղանն ինձ ծանօթացրեց իրա ազգականներից միայն մի քեռանց և մի մօքրանց հետ,—թէև դրանց և չէր յարգում,—իսկ հօրեղբօր որդիների և միւս

մօրաքոյրերի հետ՝ ոչ, որովհետեւ դրանց դէմ սաստիկ սրդողած էր, թէ ինչո՞ւ էին նրանք շարունակ պնդում որ Դ—ենք իրան աղջիկ չեն տալ, իսկ նշանը տալուց յետոյ էլ ասել էին.—Արդեօք պիտի կարողանանս գոնէ քիչ էլ է այնպէս լաւ պահել կնոջդ, ինչպէս-որ նա պահվում է ծնողների տանը:

Այս քաղաքը, ուր պաշտօնավարում էր Գեղանը, անհամեմատ աւելի վատ էր, քան իմ ծննդավայրը, որի տաղտուկները քեզ լաւ ծանօթ են: Այդ իսկապէս քաղաք չէր, այլ մի ընդարձակ աւան, որի բնակչութիւնը բաղկացած էր գլխաւորապէս կիսարարարուու թուրքերից: Կովկասի այն խղճուկ վայրերից մէկն էր, որոնց միակ օազիսը կազմում են գաւառապետը՝ իրա օգնականներով, հաշտարար դատաւորը, ոստիկանապետը, բժիշկը և միքանի ուսուցիչներ: Ոչ թատրոն, ոչ ժողովարան և ոչ մի որևէ հասարակական զրոսավայր, որոնք այնքան անհրաժեշտ են փոքրիշատէ զարգացած մարդու համար:

Ուրեմն կարող ես երևակայել իմ վիճակը, որ նոր էի ոտ դրել կեանքի շէմքին ու բացի ընտանեկանից, նաև արտաքին համոյքներ վայելու բուռն փափագ ունէի:

Մենք իրեն նորապսակներ այցելեցինք մի շարք ընտանիքների և ստացանք փոխ-այցելութիւններ:

Աւանդ, դրանով էլ սահմանափակուեց մեր շփումը արտաքին աշխարհի հետ: Այլևս ոչ մի երթեւեկ, ոչ մի փոխարձ հիւրընկալութիւն: Ինչո՞ւ:—Որովհետեւ Գեղանը՝ մի անհասկանալի յամառութեամբ ոչ-ոքի մօտ չէր ուզում գնալ և ինձ էլ արգելում էր գնալու:

Մի օր կատակով ասացի:

—Գիտեմս, Գեղան, երեկի մօմէօն ու Զիւկտատան այնքան չեն սիրել իրանց տեսակցութիւնը, որքան

մենք սիրեցինք մեր մենաստանային կացութիւնը: Արդարեւ մարդիկ կարող են կարծել, թէ մենք երդուել ենք ճգնաւորի պէս ապրել:

Գեղանը զգաց որ կատակ չեմ անում, որ ես լրջօրէն տիրում եմ առանց շրջանի, առանց հասարակութեան:

Նա պատասխանեց.

—Աւելի լաւ է ճգնաւոր լինել, քան վարակուել ապականութեամբ:

—Ո՞րն է այդ ապականութիւնը:

—Այն վարք ու բարքերը, որ տիրում են այս քաղաքի հասարակութեան մէջ:

—Արդեօք այդ վարք ու բարքերը առաջ էլ կային, թէ իմ գալուց յետոյ երեան եկան:

—Կային:

—Հապա ինչու այն-ժամանակ շփվում էիր այդ հասարակութեան հետ:

—Այն-ժամանակ այլ էր, իսկ այժմս ուրիշ: Այն-ժամանակ ես ամուրի էի, իսկ այժմ ամուսնացած:

Կարդղ ես երևակայել, սիրելիս, որ ես տակաւին չգիտեի թէ ինչ տարբերութիւն կայ ամուրի մարդու և ամուսնացած մարդու բարոյական հայեացքների մէջ, Գեղանն էլ չբացատրեց ինձ այդ: Սակայն երկար ժամանակ չմնացի խաւարում: Շուտով իմ միամիտ տարակուսանքը փարատուեց և իմ հոգեկան աչքերը նշմարեցին կեանքի առաջին աղտեղութիւնը:

Պատմեմ եղելութիւնն այնպէս, ինչպէս-որ էր:

Տեղացիների մէջ մի բաւական տարիքաւոր հայուհի կար, որ ամուսնացած էր մի ոռւս այրի չինովնիկի հետ: Մեր այցելութեան միջոցին ես նկատեցի, որ այդ կինը մի տեսակ անհաշտ աչքով է նայում ինձ և շատ անքաղաքավարի է. նա ոչ-միայն անուշադիր

թողնելով ինձ, շարունակ գեղանի հետ է խօսում, այլև երբեմն մէջքն ինձ է դարձնում:

Այս հանգամանքն ինձ վրայ խիստ անախորժ տպաւորութիւն գործեց, և երբ մի օր այդ մասին գանգատուեցի մի ծանօթ տիկնոջ,

—Երեխայ էք, —գոչեց նա, խորհրդաւոր ժպտաւով. —Երեկում է որ կեանքը ղեռ իր տգեղ կողմերը ցոյց չի տուել ձեզ: Երանելի՛ հասակ:

—Դրանով ինչ էք կամենում ասել, տիկին:

—Ուզում են ասել որ զուք չգիտէք այն, ինչ որ ամբողջ քաղաքը գիտէ: Այդ կինը ձեր ամուսնու սիրուհին է եղել:

—Սիրուհի՛, —գոչեցի ես սոսկալով. կարծես սուր ոլաքով ծակեցին սիրաս:

Այն, սիրելիս, ես այդչափ անմեղ էի և անտեղեակ աղամարդ կոչուած էակի ապականութիւններին:

Ես հէսց նոյն օրը երեկոյեան սրտիս դառնութիւնը յայտնեցի Գեղանին: Հպարտութեան և ամօթի զգացումը թոյլ չտուաւ ինձ ինգրին մօտենալ ուղղակի: Ես նրա շուրջը պառյաներ գործեցի:

—Ինչու այդ հայուհին երեսն այնպէս յամառութեամբ դարձնում էր ինձանից, հարցըի:

—Որովհեաւ նա երեսի վրայ արատ ունի:

—Բայց այդ արատը ես չնկատեցի, թէև տեսայ նրա ամբողջ երեսը: Առա, Գեղան, ով է այդ կինը:

—Թողնենք, չարժէ նրա մասին խօսել, սիրելիս:

Եւ այդ ասելով Գեղանն ինձ գրկեց ու համբուրեց այնպիսի աւելնով, որ մի վայրկեանում չքացաւ իմ մէջ ծագած չար կասկածը:

Սակայն ինձ վիճակուած էր նրա նախկին սիրուհուց կրել երկրորդ՝ աւելի զգալի վիրաւորանք:

Ծննդեան տօնի նախօրեակին՝ ի-միջի այլ հրաւիրողների տեղական բժիշկն անձամբ գալով մեզ մօտ, ինդրեց որ թաթախման երեկոյեան անպատճառ գընանք իրանց մօտ և միասին տօնենք հայկական սովորութեամբ։ Ամուսինս տանից բացակայ էր, դժուարանում էի դրական պատասխան տալ աչքի առաջ ունենալով նրա կոպիտ բնաւորութիւնը։ Բայց երբ շատ խնդրեց, ստիպուած եղայ խօսք տալ գնալու ենթադրելով թէ ամուսինս այնքան անքաղաքավարի չի գտնուիլ որ չյարգէ այդ պատուալոր ընտանիքի թախանձանքը։ Բայց արի տես որ երբ եկաւ և իմացաւ թէ խօսք եմ տուել, սաստիկ բարկացաւ և գրաւոր ներողութիւն խնդրեց նրանցից։ Ապա ինձ ստիպեց գնալու հետս անքաղաքավարի վարուող աիկնոջ ամուսնացած խորթ աղջկայ տուն։ Ես շատ աշխատեցի համոզել ամուսնուս, որ եթէ բժշկի խնդիրը մերժեց, ապա լաւ է որ այդտեղ էլ չգնանք, չլսեց, և մենք գնացինք։ Ի-հարկէ այդտեղ էր նաև ամուսնուս հոմանի տիկինը, որ իրա պարտքը համարեց նորից վիրաւորել ինձ։

—Գիտէք, տիկին, --ասաց ինձ խօսակցութեան միջոցին չարախինդ ժպիտով, —դուք լուսնի նման էք երեսում։

Զգիտեմ այդ ըոպէին ինչի նման էի՝ լուսնի թէ արեգակի, միայն գիտեմ, որ տգեղ չէի։ Վիրաւորանքը շատ պարզ էր։

Տուն վերադառնալով, ասացի ամուսնուս.

—Ի՞նչ ուզում ես արա, Գեղան, ես այլս չեմ կարող այդ կնոջ երեսը տեսնել։ Ես իմ արտաքինով երբէք չեմ պարծեցել՝ համեստութիւնը համարելով կնոջ զարդը, բայց թոյլ տալ մի օտար կնոջ այդ տեսակ կոպիտ նկատողութիւններ, կը նշանակէ վիրաւո-

րել նոյնիսկ քեզ։ Զէ-որ այնքան օրիորդների միջից ինձ ես ընտրել։ հետեւաբար՝ ես պարտաւոր եմ յարգել քո ճաշակը, իսկ դու էլ պարտաւոր ես պաշտպանել ինձ։

Իմ խօսքերն ազդեցին Գեղանի վրայ և նա թոյլ տուաւ ինձ ընդհատել ծանօթութիւնս իր նախկին հոմանու հետ։

Եւ այդպէսով, մենք բոլորովին անջատուեցինք հասարակութիւնից։ Սալ—ում վարած կեանքը գարձաւ միանգամայն անապատային, մի վայրում, որ առանց այն էլ ամայի էր ինձ համար. որովհետև բացի մեզանից և թուրք տանտիրոջից ուրիշ բնակչութիւն չկար այդ մասում։ Տեղի բոլոր հիմնարկութիւնները, խանութները և թէ բնակչութիւնը գտնվում էին թուռ գետի միւս ափին, որտեղից մենք այնքան հեռու էինք ապրում, որ նամակաբերը չէր կարողանում իրա ժամանակին հասցնել մեզ մեր հասցէով եկած նամակներն ու լրագիրները, ասելով որ Ս—ից դուրս անապատում ենք ապրում, և մենք ստիպուած յատուկ մարդ էինք ուղարկում փոստատուն։ Մեր այդպիսի տարօրինակ կեանքի համար սալեանցիք ճգնաւոր էին կոչում ամուսնուս։

Մի անգամ երբ ամուսինս գործով գնացել էր սահմանը, նոր գաւառապիտը այցելութեան եկաւ կը նոջ հետ։ Մանօթանալուց յետոյ տիկինն ասաց ինձ։

—Ճարմանալի է որ ամուսինդ առանց Զեզ է գնացել։

—Ի՞նչ կայ զարմանալու, նկատեցի ես։

—Որովհետև ամենքը ևս ասում են, թէ նա այնքան խանդոտ է, որ ուր որ գնում է, միշտ հետն է ատառում Զեզ՝ ուշ չդարձնելով ոչ ցրտին, ոչ բուք ու բորանին։

Այդպիսի կեանք վարելը թէև անչափ գժուար էր
ինձ համար, սակայն դէպի ամուսինս տածած սէրս
ինձ ոյժ էր տալիս անտրատունջ տանելու:

Բ

Մօտեցաւ մեր ամուսնութեան առաջին ամառը:
Պէտք է ասեմ, սիրելիս, որ ամուսնուս պաշտօ-
նատեղին ամբողջ կովկասում յայտնի է իր վատա-
սող կլիմայով, մանաւանդ ամառը:

Այնտեղ երբեմն արեգակի ջերմութիւնը համսում
է 50 աստիճանի, միենոյն ժամանակ, տիրում է այն-
պիսի խոնաւութիւն, որից մարդու սսկորներն են
տամկանում: Բայց գլխաւոր չարիքը նրա միջատներն
են, մանաւանդ մոծակները, որոնք իրանց խայթոցով
մարդու մարմինը վէրքերով են ծածկում:

Մի օր ինչ-որ բշտիկներ երեացին վրաս: Հար-
կաւ ես այդ վերագրեցի մոծակների խայթերին, սա-
կայն աղախինս, որ երկար տարիներ ապրում էր
Ս—ում, նայեց բշտիկներին ու ասաց.

—Տիրունի, դրանք մոծակի կծածներ չեն, ես
լաւ գիտեմ:

—Հապա ի՞նչ են, հարցըրի:

—Չգիտեմ, այդ ուրիշ բան է, դիմեցէք բժշկին:
Ես սաստիկ վախեցայ և յայտնեցի ամուսնուն.
բայց նա վորանակ հանգստացնելու իր երիտասարդ
կնոջը, նորից անտեղի կերպով զայրացաւ վրաս, որ
հաւատում եմ աղախինու բարբանջամներին:

Մի ամիս չանցած, մի օր ես գողացրի և այն-
քան վատ զգացի ինձ, որ ատիպուած եղայ անկողին
մտնել: Գեղանը տուն վերադահնալով նրա տեսաւ ինձ
անկողնում, բարկացաւ:

—Վեր կաց, —գոչեց նա:

—Բայց տկար եմ, —ասացի, զարմանալով նրա
դայրոյթի վրայ:

—Դու տկար չես, այլ քո երեակայութիւնն է
տկար: Վեր կաց. ես չեմ ուզում, որ դու պառկած
լինիս:

Ստիպուած կատարեցի նրա անտեղի պատուէրը:
Չգիտեմ ի՞նչ գերբնական զօրութեամբ՝ այդ մարդն
արդէն այնքան տիրել էր իմ կամքին, որ ես սնզօր էի
դիմագրելու նրա անմիտ քմահաճոյքներին իսկ: Արդեօք
սիրում էի նրան այն բուռն ու ջերմ սիրով, որ այն-
քան անգութ է կնոջ համար: Անտարակոյս այս, վասն-
գի զգում էի, որ կեանքն առանց նրան այլևս ոչինչ է
ինձ համար: Զգում էի, որ պատրաստ եմ նրա համար
զոհել ամեն ինչ, կը ել ամեն տառապանք, հան-
դուրժել ամեն վիրաւորանքի մի խուլ վայրում, հեռու
բարեկամներից ու մտերիմներից, հեռու հասարակու-
թիւնից, զուրկ ընկերական կեանքի բոլոր զուարճու-
թիւններից, մենումենակ, ինչպէս ճակատագրի քմահա-
ճոյքով լերկ ժայռի գագաթին բուսած մի ծառ:

Բայց եայնպէս հետզհետէ եկայ այն դառն գիտակ-
ցութեան՝ որ Գեղանի խանդոտութիւնը բոլոր օրինաւոր
ամուսինների նման ոչ թէ անկեղծօրէն ինձ սիրելուց
էր, այլ միայն շահասիրութիւնից: Նա շատ էր վա-
խենում որ ես կարող եմ թողնել իրան և ընդմիշտ
հեռանալ, հետևապէս ինքը կը զրկուէր ինձանով ամեն
կերպ օգտուելուց: Եւ նա օգտուեց ինձանով այնքան
ժամանակ, որքան անհրաժեշտ եղաւ իրան՝ թէ դիրք
ձեռք բերելու և թէ մանաւանդ հարստանալու համար,
որով նա հիմա շատ է պարծենում իրան մօտիկ չճա-
նաչողների մօտ:

Եւ հիմա երբ յիշում եմ կը աճներս այդ մար-



դուց, մազերս փշաքաղվում են, մարմինս սարսռում. չեմ կարողանում ինքս ինձ հաշիւ տալ՝ թէ ո՞րն էր արդեօք այն բռնակալ ոյժը նրա մէջ, որ այնպէս գերեց իմ աղատասէր հոգին։ Ասել՝ թէ ես մի կամագուրկ էակ էի, մէկն այն հէք արարածներից, որոնք միշտ ուրիշների ստուերի մէջ են պատսպարվում, չեմ կարող։ Բնութիւնն ինձ չէր զրկել աղատասէր ձգտումներից, իսկ ծնողներս երբէք չեն աշխատած մեռցնել իմ այդ ձգտումները։

Ա՛հ, չգիտեմ, սիրելիս, և չեմ ուզում երկարացնել, ես ոչ թէ հպատակուեցի Գեղանին, այլ ստրակացայ նրան։ Եւ իմ հութիւնը այն աստիճանին հասաւ որ վերջիվերջոյ սկսեց նրան էլ ձանձրացնել։ Այսպէս մի օր՝ մի ինչ-որ տնտեսական սիալիս համար ինձ յանդիմանելիս երբ տեսաւ որ ինձ չեմ արդարացնում, բարկացած գոչեց։

Գիտես, Գոհարինէ, դու կարող ես ինձ խելացացնել քո հեղութեամբ։ Զէ-որ դու էլ մարդ ես, ինչու չես պաշտպանում քեզ։

— Նոյնիսկ չընդդիմախօսած կամ մի անմեղ կարծիք յայտնելուս համար անգամ չեմ աղատվում քո բարկութիւնից ու անարդարացի յարձակումներից, եթէ ընդդիմախօսեմ, չէ-որ դրութիւնս պէտք է աւելի անսախանձելի դարձնեմ։ Բացի դրանից մի յայտնի հեղինակ ասում է։ «Ամուսնական կեանքը միահեծան իշխանութիւն է մէկի և հլու հպատականութիւն միւսի համար»։ Ես բարւոք եմ համարում հպատակուել, քան իշխել։

Ամուսինս այնքան բռի ու կոպիտ էր, որ իմ հեղ պատասխանը հչ-միայն չմեղմացրեց նրան, այլ ընդհակառակը՝ նա «իշխել» բառն ըմբռնեց՝ բիրտ, նիւթական իմաստով և աւելի խստացրեց իրա բռնութիւն-

ները, որ ես այնպիսի ինքնայօժարութեամբ ընդունել էի յանուն այն ընտանեկան բաղդաւորութեան, որի մասին իմ վառ երկակայութիւնս միշտ երազել էր։

Նա ինձ յանդիմանում էր ու նախատում նոյնիսկ մի չնչին սիալիս համար, որ առաջանում էր երիտասարդական անփոքնութիւնից։ Կամ կերակրի աղն էր պակաս լինում, կամ թէյը չէր ժամանակին պատրաստվում, կամ սփոռցներն ու անձեռնոցիկներն էին շուտ մաշվում լուացուելուց, կամ ուշ էի զարթնում, վաղ քնում—այդ բոլոր աննշան բաները քրէական յանցանքներ էին երևում նրա աչքում, որոնց համար ստրուկի հալածանքներ էի կրում շարունակ։

Ես ոչ բողոքում էի, ոչ էլ տրտնջում, այլ ամեն կերպ աշխատում էի արդարացնել նրան՝ նրա զայրացկոտութիւնը վերագրելով այն զրկանքներին, որ նա կրել է կեանքի մէջ։

Տասնուերեք տարեկան հասակում հօրից զրկուելով, մնացել է անտէր, անպաշտպան, կրել է հազար ու մի նիւթական ու բարոյական տառապանքներ։ Ուրեմն ինչպէս կարելի էր քնքուշութիւն պահանջել մի մարդուց, որ ինքը բնաւ չէր հանդիպել քնքուշութեան։ Թաղ շաբունակէ հալածել. ես կ'աշխատեմ իմ համբերութեամբ, իմ հեղութեամբ զոնէ մասամբ մեղմացնել նրա կոշտ բնաւորութիւնը։

Աւաղ, որքան սիալվում էի, որքան մոլորուած էի, որ չգիտէի, թէ ձիւնից սառած մարդուն կրառվ չեն տաքացնում, այլ նոյն ձիւնով։ Որքան տհաս էի, որ չգիտէի, թէ նա կայ ու կը մնայ մինչեւ իրա կեանքի վերջը նոյն բծախնդիրն ու գիւրագըրգիուը, նոյն անտանելի ինքնահաւանն ու մանաւանդ զզուելի գլատը։

Լուցկին ինչ է, հասարակ ու էժանագին լուց-

կու համար անգամ ահագին տեսարաններ էր սարքում, ամբողջ օրը հանգստութիւն չէր տալիս, բղաւում էր, կովում, թէ ինչու շուտ է հատնում լուցկին։ Որպէսզի լուցկիները շուտ չվերջանան և ես ազատ մնամ գլխացաւանքութիւնից, մտածեցի լուցկիները մէջներից կիսել, որ երկու անգամ շատանան։ Մի օր երբ գրչահատը ձեռքիս զբաղուած էի իմ այդ նորահնար գիւտով, ամուսինս ներս գալով հարցրեց։

— Այդ ինչ ես անում։

— Հապա ինչ անեմ, պատասխանեցի, լուցկին շուտ հատնելու համար շարունակ կովում ես հետո, ես էլ կէս-կէս եմ անում որ ուշ հատնի, որպէսզի էլ չկուես։

Ես որ իմ սեպհական դրամագլուխն ունէի, մի կոպէկ ծախսել իսկ չէի կարողանում։ Չէր թոյլ տալիս գոնէ կարգին հագնուեմ։ Ամուսնուս համար կարծես ամօթի զգացմունք ասուած բանը բոլորովին գոյութիւն չունէր։

Ամառը կարճ ժամանակով գնացինք մեր ծնընդապայրը, ուր որոշ թեթեութիւն զգացի հարազատներիս շրջանում։ Մոռացայ կրածս անախորժութիւնները և նորից ինձ այնպէս թուաց թէ կեանքը ժըպտում է ինձ։ Բայց երբ յիշում էի առաջիկայ աշունը, երբ մտածում էի վերադարձիս մասին, մոայլ մըտերը դարձեալ պաշարում էին ինձ։

Ես վճռեցի մենակ չվերադառնալ, ուստի ինդրեցի գեղանին, որ իրա մօրն էլ տանենք հետներս՝ այն յուսով թէ այդ կինը կարող կը լինէր կոպիտ որդու վերաբերմունքը մեղմացնել դէպի ինձ գէթ այնչափ, որչափ հնաբաւոր կը լինէր։

Սոսկալի մոլորութիւն։ Ոչ-միայն յոյսս չարդարացաւ, այլև բոլորովին դրա հակառակը պատահեց։

Հէնց գալու առաջին օրից մայրը որդու կողմը բռնեց։ Դա մի կարճահասակ, հաստամարմին կին էր, մեծ քթով, մեծ բերանով, մէջքը կորացած, նրա բերանում մի հատ ատամ չկար, ինչպէս և փոքրիկ աչքերի մէջ բարութեան նշոյլ։ Իրա պատմելով մի անգամ ամուսինը բերանին այնպէս էր խփել, որ բոլոր ատամները թափուել էին։

Նոյն միջոցներին մեզ մօռ հիւր եկաւ նաև Գեղանի փոքր եղբայրը։ Միջին հասակով, մօր պէս կորացած մէջքով մի արարած էր դա, որ կեանքի մէջ միայն մի նպատակ ունէր՝ լաւ ուտել և լաւ ապրել։

Ստեղծուեց մի տեսակ երբեակ համաձայնութիւն։

Յաճախ նրանք առանձնանում էին ու ինձնից ծածուկ փսփսում, որովհետև հէնց-որ նկատում էին մօտենալս, իսկոյն լուռմ էին։ Երբ այդ առիթով Գեղանին իմ անբաւականութիւնը յայտնեցի, որ ինձանից ծածուկ խօսելով երեքով, վիրաւորում էր ինձ, նա ըստ իր յատուկ սովորութեան պատասխանեց կոպտաբար։

— Այդպէս բան չկայ, այդ քո երևակայութիւնն է։

— Եթէ չկայ, էլ ինչու համար են այդ փսփսոցները, միթէ ես այս տան անդամներից չեմ……

Մայրը հովանաւորում էր որդուն, եղբայրը քըծնում էր եղբօրը, և ես էի մենակ նրանց մէջ անտէլ ու անպաշտպան, որպէս վշերի մէջ բուսած մի ծաղիկ։ Աւելին կ'ասեմ։ Իմ ընտանեան կեանքում ես մի անլեզու ստրուկ էի՝ զուրկ բոլոր իրաւունքներից։ Մայրը շարունակ լարում էր որդուն իմ դէմ, որպէս մի չար ոգի, որին բարձրագոյն հաճոյք էին պատճառում իմ հոգեկան տառապանքները։ ամեն ինչ որդու համար և ոչինչ ինձ համար։ այդ էր նրա միակ նշանաբանը։

Եւ ես նկատում էի որ մօր այդպիսի անսիրտ վարմունքը դէպի ինձ ուրախութիւն է պատճառում որդուն և մի տեսակ շոյում նրա եսը:

Վերջապէս սկսեցի զգալ, որ այնտեղ չեմ ընկել, ուր ձգտում էի: Պատասեկական վառ երևակայութեանս յօրինած ընտանեկան իդիլիան բոլորովին չքացաւ: Մուայլուեցին վարդագոյն երազներս: Կեանքը փոխարինուեց անգոյն գոյութեան, որ կարելի էր համարել բուսական, եթէ չինէր այնքան դաժան: Զգացի որ ճակատագրի անողոք ձեռքը կորզել է ինձ ծնողներիս փաղաքուշ գոգից և գամել մի ցուրտ ժայռի, ուր ես դատապարտուած եմ յաւիտենական տանջանքների: Զգացի որ Գեղանի համար տենչալին ոչ իմ երիտասարդութիւնն է եղել, ոչ իմ գեղեցկութիւնը, ոչ-մանաւանդ իմ հոգին ու սիրտը, այլ իմ օժիտը: Զգացի որ բիրտ գոււառացին մնացել է նոյնը, ինչ որ եղել է ի ծնէ, որ ոչ բարձր ուսումը, ոչ մայրաքաղաքի մէջ անցկացրած հնգամեայ կենցաղը և ոչ միջավայրը նրա հոգեկան աշխարհի վրայ բարերար ներգործութիւն չեն ունեցել:

Ես իրաւունք չունէի ոչ-միայն առանց ամուսնուս, այլև առանց նրա մօր ցանկութեան տանից դուրս գալ: Մինչև իսկ իրաւունք չունէի իմ կամքով քնել, ուտել, խօսել, զբոսնել....

Ամաշելով պէտք է ասեմ որ շատ անգամ օրս քաղաք էի անցկացնում: Ամուսինս հացը որոշ բանակութեամբ էր բերել տալիս ու ինքն էլ ճաշէ ճաշ էր միայն ուտում, նախաճաշելու սովորութիւն չունէր. որովհեան անչափ շատ ծինելուց փակվում էր ախորժակը. բայց բարկանում էր, երբ ես նախաճաշում էի: Մի անգամ սաստիկ քաղց զգալով՝ անկարող եղայ ինձ գունչների միացել է մի կտոր հաց կերայ: Երբ սեղան նըս-

տեցինք, Գեղանն իսկոյն նկատեց որ հացից կերուած է ու սաստիկ բարկացաւ: Այդ օրից սկսած՝ ամօթից և թէ մանաւանդ երկիւղից, որ էլի այնպէս չբարկանայ, աւելի լաւ էի համարում քաղցից տանջուել և ձեռք չտալ հացին: Բայց նա էլի բարկանալու առիթ գտաւ. սկսեց բղաւել, ճղաւել, թէ ինչո՞ւ մի ամսում քսան գրվանքայ իւղ է գնացել, երբ տեսնում էի մըշակներին փողոցում, գետնի վրայ նստած ցամած հաց ուտելիս, հազար երանի էի տալիս նրանց՝ որ թէն ցամաք, բայց հանգիստ ու կուշտ ուտում են, ինչքան իրանց սիրտն է ուզում....

Մի օր էլ ամուսնուս խանդարուած խելքին չգիտեմ ինչ իջեց, ինձնից պահանջնց, որ իրա համար մի ձեռք հազուստ կարեմ: Որքան էլ ասացի որ կարուձև չզիտեմ, տղամարդու կոստիւմ կարելը իմ բանը չէ, չլսեց: Ստիպուած եղայ փորձել հմտութիւնս և, ի-հարկէ, փչացրի, որի հետևանքը եղաւ ահագին կուլւ:

Մի գիշեր հիւանդացայ, սաստիկ վատ զգացի ինձ. բայց երկիւղ կրելով որ ամուսինս զրա համար էլ կը բարկանայ, ոչինչ չասացի, այլ լուռ տանջուեցի մինչեւ առաւօտ. բայց ցաւիս սաստկութիւնից այնքան թոյլ էի, որ մնացի պառկած: Գեղանի գընալուց յետոյ խնգրեցի նրա մօրը որ ինքը հսկէ իսոհարարի վրայ, բայց նա մերժեց, ասելով.—Գեղանից վախենում եմ. մթերքներից շատ տամ պէտք է բարկանայ, քիչ տամ էլի պէտք է բարկանայ: Լաւ է որ վեր կենաս և ինքդ հսկես:—Եւ ես ստիպուած՝ վերկացայ և երերուն քայլերով գնացի խոհանոց:

Պարզ էր որ մայրը ևս վախենում էր որդուց: Նա մի օր ինձ ասաց.

—Ամուսնուս ընաւորութիւնը այնքան վատ էր, որ երբ մեռաւ, տիրելու փոխանակ անչափ ուրախա-

ցայ. կարծեցի մի ծանր բեռ ընկաւ ուսերիցս....
ինչպէս երևում է, ամուսինս ժառանդական հիւ-
լանդութեան հետ ստացել էր նաև հօր անտանելի
բնաւորութիւնը, և եթէ դրա վրայ աւելացնենք ամուրի
ժամանակուայ վարած կեանքի մէջ ստացած հիւնդու-
թիւնը ևս, ապա ամեն ինչ պարզ կը լինի ու հասկանալի՝
թէ ինչու էր նա այնպէս անհանդուրժելի չար, նա-
խանձ, զայրացկոտ ու կոռուարար: Նա հետո կովում էր
ոչ-միայն մի չնչին, մի աննշան առիթով, այլև բոլո-
րովին առանց որեւէ առիթի: Երբ ասում էի:

—Ինչի՞ մէջ ես ինձ մեղադրում. ասա, որն է իմ
յանցանքը, ուզում եմ ուղղուել, միշտ էլ պատասխա-
նում էր:

—Ես քեզանից լաւ կին երբէք չեմ ունենալ:

Տարօրինակ հասկացողութիւն ունէր այդ մարդը
իրերի մասին: Այս եթէ լաւ կին էի, հապա էլ ինչու
էր կեանքս դառնացնում՝ ամեն բոպէ հետո կոռւելով:

Բայց նա միայն ինձ հետ չէր կովում, այլ
ամենքի հետ՝ թէ մեծի և թէ փոքրի, թէ մարդ-
կանց և թէ կանանց հետ. ուսուցիչ ժամանակ կոռւեց
ուսուցիչների ու տեսչի հետ և նրանց էլ կոռւա-
ցրեց միմեանց հետ, որի պատճառով դպրոցից հեռացրին:
Սալ—ում թուրք չէր մնացել որ հետը կոռւած չլինէր:

Պատմեմ մի անօրինակ գէպք, որ երբէք չեմ
մոռանալ: Այս մէկը իմ բոլոր գանգատներից աւելի
գունեղ կերպով կարող է պատկերացնել բեղ թէ ինչ է
եղել իմ դրութիւնը:

Առաւօտ էր: Թէյ էինք խմում: Թվում էր թէ
ամեն ինչ խաղաղ է, ընտանեկան փոթորիկի ոչ մի
պատճառ չկայ: Բայց ոչ, յանկած երկինքը մթագնեց
և բարձրացաւ մի սարսափելի փոթորիկ: Դեղանը գու-

նատուեց, կատաղեց և, ձեռն ուժգին սեղանին զարկե-
լով, գոռաց՝ «Անառակ»:

Ես ցնցուեցի և ապշած նայեցի նրա կատաղի
աչքերին:

—Անառակ,—կը կնեց նա,—այս ինչ է: Նայի՛,
տես: Նա թէյի բաժակը դրեց իմ առջեւ և բոռնցք-
ները սեղմեց:

Ես նայեցի բաժակին: Թէյի մակերեսոյթը ծած-
կուած էր թանձը իւղով: Մնացի շուարած. Թէյը ես
էի ածել, կանխապէս բաժակը խնամքով լուանալուց
ու մաքուր սրբիչով սրբելուց յետոյ:

—Այս ինչ է, գոռաց նա դարձեալ:

—Զգիտեմ... բայց զարմանալի է:

—Զարմանալու ոչինչ չկայ. դու ուզում ես ինձ
թունառոել:

Պահ մի արիւնս սառաւ երակներիս մէջ, լեզուս
կաշկանդուեց: Ես թունառորդի... ուրեմն ես մար-
դասպան:

Ես այլևս ոչինչ չասացի, և մէկ էլ վայրկենա-
բար իմ միտքը լուսաւորեց մի կասկած: Տեսարանին
ներկայ էր Գեղանի մայրը, որ գլուխը կը ծընի թեքած,
լուս լուսմ էր որդու զարհուրելի մեղադրանքը:

—Ինչու չէք պաշտպանում ինձ,—դիմեցի նրան.—
չէ՞-որ ձեր ներկայութեամբ բաժակը լուացի ու թէյն
ածեցի:

—Իմ գործը չէ, —ասաց նա, շփոթուեց ու լռեց:

Հանելուկը պարզուեց միայն հետևեալ օրը: Օգ-
տուելով իմ վայրկենական բացակայութիւնից, մայ-
րը որդու բաժակի մէջ մի գդալ ձեթ էր ածել:

Պատճառը, կը հարցնես: Պատճառը, սիրելիս, նոյն-
քան կոպէտ, որքան և միջոցը: Նա ամեն կերպ աշ-
խատում էր իմ վարկը կոտրել որդու աչքում: Նա

վախենում էր՝ մի՛ գուցէ Գեղանը ինձնով յափշտակուելով, մոռանայ իրան և միւս որդիներին։ Նա կարծում էր որ եթէ այդպէս լինի, իրանք կը մնան անպաշտպան, ուստի Գեղանի մօր և եղբայրների միակ սկզբունքն էր՝ ինչքան կարելի է շատ շահագործել իրանց հարազատին։

Բաժակի անմաքուր լինելու մասին երբ յայտնեցի ամուսնուս, նա սկզբում իրան վշտացած ձևացրեց՝ մօրը մեղադրելուս համար, բայց յետոյ ծիծաղեց ու ասաց.

—Քոի ջուրը յաճախ է լինում այդպէս իւղու։

—Եթէ գու այդ գիտէիր, նկատեցի դառնացած, հապա ինչո՞ւ զայրացար այն աստիճան, որ քեզ թոյլ տուիր այնպիսի վիրաւորական խօսք ասել ինձ։

—Անցեալը մի՛ յիշիր, ասաց ու շտապով դուրս եկաւ տանից։

Գեղանն անկասկած իրաւունք ունէր՝ բացի սիրելուց, նաև հպատակուել մօրը, ես այդքանը հասկանալու չափ գիտակցութիւն ունէի և չէի դիմագրում։ Բայց յանուն որդիական խոնարհութեան նա չէր տատանվում յաճախ ստորացնել ինձ այդ գուեհիկ կնոջ առջև։ ահա այդ էր վիրաւորականը։

Եւ ցաւալին այն է, որ իմ կը ած հալածանքները աւելի նիւթական ճիմք ունէին, քան բարոյական։ Իւ այդ Գեղանի անհանդուրժելի ժատութիւնն էր։

Մի առաւօտ, չդիտեմ ինչպէս՝ մի որդ էր ընկել թէյիս բաժակի մէջ։ Երբ վերցրի բաժակը, ցնցուեցի։ Բաժակը ընկաւ ձեռքիցս յատակի վրայ և փշուեց։

—Ի՞նչ արիր, յիմար, —գոչեց ամուսինս զայրացած, ձեռն ամուր սեղանին զարկելով։ —այդ բաժակն ինձ համար աւելի թանգ էր, քան ինքդ։

—Հանգիստ կաց, —ասացի ես, կարողանալով զըս-

պել զայրոյթն, —ես մէկի փոխարէն տասը կը գնեմ։ —Տեսէք, տեսէք, —մէջ մտաւ Գեղանի մայրը, —չի էլ ամաչում, գոռողանում է բերած օժիտով։

—Տիկին, կարծեմ ես երբէք ձեզ մօտ չեմ պարծեցել իմ օժիտով։ Թանգն ինձ համար հարստութիւնը չէ, այլ իմ ամուսնու հանգստութիւնը և մանաւանդ նրա մէրը դէպի ինձ, եթէ միայն կայ։

Իմ խօսքերը թէկ մեղմացրին ամուսնուս և նա էլ ոչինչ չասաց, սակայն նրա այնպիսի անխիղմ վարմունքից համոզուեցի որ նա ինձ չի սիրում. իսկ եթէ ինձ յամառօրէն հետամտել է և եղբայրների օգնութեամբ ամեն ստոր միջոցի դիմել՝ ինձ ուզելու համար, դրա պատճառն անշուշտ գրամօժիտիս վրայ աչք ունենալն է եղել։

¶

Ես ինձ մենակ, անտէր ու անպաշտպան էի ըղպում այն աստիճան, որ գիշերային խաւարն անգամ սարսուռ էր բերում վրաս, չէի կարողանում մթութեան մէջ քնել, այլ լամպարս միշտ վառ էի թողնում սեղանի վրայ։

Այդ հասարակ բանն անգամ յանցանք էր Գեղանի մօր՝ այդ մարմնացած ժամատութեան աչքում։ Հէնցոր քուն էի լինում, նա ծածուկ մտնում էր սենեակս ելամպարի պատրոյզն իշեցնում, որպէսզի քիչ նաւթ վառուի։ Այդ բանից առաջանում էր մուխ, և ես ամեն առաւօտ զարթնում էի գլխացաւով։

Իմ երկիւղը խաւարից, իմ գարշանքը մկներից ու առնէտներից, իմ ահը մողէսներից, իմ սարսափը կարիճներից —այս բոլորը նրանց համար հարստի աղջկայ նազուբազներ էին։ Ես մեղսուր էի, որ իրանց պէս չէի սնուել։

Ամեն անգամ մեր սենեակներում մողէս տեսնելիս ճշում էի երկիւղից, իսկ Գեղանը բռնում էր ձեռքով և դուրս շպրտում այնպէս սառնարիւն, կարծես քար էր դէս զցում:

Իմ կացութիւնը քանի գնում, այնքան դժուարանում էր, Խորթ միջավայրում ես միշտ զգում էի իրը մի անկոչ հիւր։ Արդեօք աւելի լաւ չի լինիլ, եթէ բաժանուեմ այս մարդուց, մտածում էի յաճախ։ Եթէ ես մենակ մնալով երջանիկ չեմ լինիլ, գոնէ հոգեակս հանգիստ կը լինիմ…

Ամառուայ սկզբին պատրաստուեցի գնալ դարձեալ իմ ծննդավայրը՝ մերձաւորներիս տեսութեան։ Այդ ինձ համար կատարեալ մի տօն էր։ Ուղևորուելուցս միքանի օր առաջ ամուսինս՝ չեմ յիշում ինչ պատճառվ, դարձեալ զայրացաւ և, ըստ սովորութեան, սկըսեց գորգուալ։

—Զուր ես կատաղում, —ասացի ես անվրդով, —ահաւասիկ ես գնում եմ ծնողներիս մօտ և դժուար թէ վերադառնամ։

Հստ երևոյթին նա չէր սպասում իմ կողմից մի այդպիսի մտադրութեան։ Նրա դէմքը գունատուեց, շրթունքներն սկսեցին դողալ։

—Ի՞նչ, —գոչեց նա. —դու ուզում ես բաժանուել ինձնից։

—Այն, —պատասխանեցի ես վճռաբար։ Խոստովանվում եմ, ինքս էլ չէի հաւատում իմ ասածին։

—Աա, հասկանալի է. դու ուզում ես ազատ լինել, որպէսպի…

Ես զգացի, որ նա ուզում է ինձ վիրաւորել, ուստի շտապեցի ընդհատել նրան։

—Չհամարձակուես, առանց այն էլ դու ինձ շատ

ես վիրաւորել։ Այն, ես չէի կամենալ վերադառնալ այս դժողքը։

Նա միքանի վայրկեան խորհեց և յետոյ՝ աչքերը աչքերիս յառելով, ասաց ամենադրական եղանակով։

—Ես քեզ չեմ թոյլ տալ ինձնից բաժանուել…։

Ես գնացի ծննդավայրս։ Այնտեղ ես հանդիպեցի իմ երաժշտութեան նախկին վարժուհուս։ Դա և իրա ամուսինը շատ հակառակ էին Գեղանի հետ ամուսնանալուս։ Յիշեցի նրանց խօսքերը հարսանիքիցս միքանի օր առաջ։

—Օրիորդ, ասացին ինձ այն-ժամանակ, մենք չենք կարող չնորհաւորել ձեզ։

—Ինչու, —հարցը ես զարմացած։

—Որովհետև համոզուած ենք որ դուք չեք կարող այդ մարդու հետ բաղդաւոր լինել։ Նա աղքատ ու բազմանդամ ընտանիքի զաւակ է, որի հոգսը պէտք է լինի իւրայիններին օգնել. բացի դրանից, ուր նա ծառայում է, այնտեղի կլիման սարսափելի վատ է. ծառայում է, այնտեղի կլիման սարսափելի վատ է. կը կորցնէք ձեր առողջութիւնը։ Աւելի լաւ է ամուսնանաք մեր ընդհանուր ծանօթ գատախազի օգնականի հետ։ Ամենքը ևս այն կարծիքի են որ նա աւելի ընդունակ է ձեզ գնահատելու և երջանկացնելու։ Թէս ծնողներդ Գեղանին են հաւանում, սակայն սխալվում են։ Հաւատացած եղէք որ մենք ձեզ սիրում ենք ինչպէս մեր հարազատ աղջկան և սրտանց ցանկան չեն մեր երջանկութիւնը, ինչ որ Գեղանը ձեզ չի կարող տալ երբէք։

—Պատճմուը։

—Արդէն Ասացինք. նա աղքատ է, դուք հարուստ։

—Այդ քիչ է։

—Ոչ, այդ շատ է, օրիորդ։

—Դիցուք, շարունակեցէք:
 —Երկրորդ՝ այլ է ձեր կրթութիւնն ու ձաշակը,
 այլ է նրանը:
 —Յետի:
 —Դուք բնաւորութեամբ իրար չեք ընկնիւ:
 —Օրինակ:
 —Դուք հեզ էք, նա ոչ, դուք նրբազգած էք, նա
 րիրա. դուք ներողամիտ է, նա անչափ կրքու. դուք
 անյիշար էք, նա վերին աստիճանի քինախնդիր:
 Կօմպլիմաններ մի անէք ինձ, տիկին, —ասացի
 ես շփոթուելով, —իմ արժանաւորութիւններն այդքան
 մեծ չեն: Ինձ թվում է նոյնիսկ, որ նշանածու անհա-
 մեմատ շատ լաւ է ինձանից:
 —Օրիորդ, —գոչեց վարժուհիս, —պատիւ է րերում
 ձեզ համեստութիւնը, բայց թոյլ տուէք ինձ մնալ
 իմ համոզմունքի մէջ:
 —Ենթադրենք մի վայրկեան, թէ իմ ապագայ
 ամուսինն ու ես հակոտնեաններ ենք. սակայն չէ-որ
 Շօպէնհաուէրն ասում է՝ «կօնտրաստներն են միմեանց
 սիրում ու միանում»:
 —Օրիորդ, պարագոքսները զեղեցիկ են գըքերի
 մէջ, ստկայն կեանքն ուրիշ պատկերներ է տալիս
 մեզ: Նորից կրկնում ենք՝ դուք չեք կարող այդ մար-
 դու հետ բաղդաւոր լինել. նա այն չէ, ինչ-որ երե-
 սում է:
 Այս, որքան ափսոսում եմ որ չլսեցի դրանց:
 Բայց ինչպէս իմանայի թէ այն արտաքուստ քաղա-
 քավարի, բարի ու առաքինի երևացող մարդու հոգին
 քոլորովին գատարկ է և ներքին աշխարհն իսպառ աղա-
 ւաղուած այն աստիճան, որ բարձրագոյն կրթութիւնն
 իսկ չի ազդել վրան: Չէ-որ նա ամեն կերպ աշխա-
 իսկ չի ազդել վրան: Զէ-որ նա ամեն կերպ աշխա-
 տում էր հասկացնել ինձ, որ ես և միմիայն ես

նրան գրաւողը և ոչ թէ իմ դրամօժիտը, իմ շըջանը,
 նա յաճախ ասում էր մեր նշանուած ժամանակ.
 —Օրիորդ, եթէ դուք լինէիք վերջին ազգատի
 դուսարը, ես դարձեալ ձեզ կ'ընտրէի կեսնքիս ըն-
 կերուհի:
 Թոյլ տուը ինձ, սիրելիս, առաջ րերիլ այդ ժա-
 մանակուայ ստացածս մի նամակը նրանից:
 «Եթէ մի բան կայ, որով կարող եմ պարծենալ,
 այդ այն է՝ որ կեանքումս կեղծ կամ անազնիւ բան
 չեմ արած երբէք. այս, զբանով կարող եմ պարծենալ:
 «Նշանուելուցս առաջ ես շատ անգուն գիշերներ
 եմ անցկացրել մտածելով քո մասին և ապա թէ վճռել
 կեանքս կապիլ քեզ հետ:

«Ես շատ հպարտ եմ, այդ կը վկայէն քեզ ամենքը,
 որոնք ճանաչում են ինձ ի մօտոյ, և լաւ իմացիր, որ
 ոչ մի գումարով ես իմ ազատ կամքս ու ցանկութիւնս
 չեմ ծախիլ: Ինչ որ անում եմ, անում եմ սրտանց և
 ոչ զանազան հաշիւններ ի-հակատի ունենալով: Եթէ քեզ
 ուղեցի՝ վերադասելով հազարաւոր ուրիշ աղջկներից,
 որոնք ուրախութեամբ կը կապէին իրանց կեանքը իմ
 կեանքի հետ, այդ նրանից է, որ քո մասին անչափ
 շատ գովասանք եմ լսել. ես անկարող էի չվարուել այս-
 պէս, ինչպէս որ վարուեցի: Ապագան քեզ ցոյց կը տայ
 և կը հաւատաս, որ եթէ ես ընդունակ լինէի ինձ ծա-
 խելով կին առնել, շատ թանգ գին տուողներ կային
 ինձ: Պիտի աշխատես ճանաչել ինձ, որ համոզւես,
 թէ երբեմն սև մորթու տակ սպիտակ հոգի է լինում.
 Թոյլ պարծենկոտութիւն չլինի այս խօսքերը: Գիտ-
 ցած եղիր որ այսուհետև քո պատիւն իմս է և այդ
 պատուի համար ամեն րոպէ պատրաստ եմ ուրախու-
 թեամբ կեանքս զոհել:
 «Գուցէ զարմանալի համարես, բայց իմ մէջ

սաստիկ զարգացած են քնքուշ զգացմունքները, որոնք երբեմն պակասում են նոյնիսկ կանանց. ուրեմն քեզանից կը լինի կախուած՝ պահել այդ զգացմունքները և օգուտ քաղել քո երջանկութեան համար: Կարճ՝ նշանուելուց յետոյ ես դատարել եմ ինձ համար ապրելուց, այլ ապրում եմ քեզ և միայն քեզ համար»:

Ի՞նչպէս կարող էի չյափշտակուել այդպիսի մի երջանիկ հեռանկարով ու անտարբեր մնալ դեպի մի այդպիսի վառ սէր: Թողարկում, ասացի, այդպէս լինի. նա՝ ինձ համար, ես՝ նրա համար: Մենք փոխադարձ սիրոյ շղթաներով կը միացնենք երկու կեանք և կը կազմենք մի լիակատար երջանկութիւն:

Եւ ես ամուսնութեանս հէնց առաջին օրից վը ձնեցի լիովին անձնատուր լինել Գեղանի կամքին: Առաջին տարին իմ այդ ստրկութիւնն ինձ համար այնքան հաճելի էր և այնքան անհրաժեշտ, որ երբ ես պէտք է ժամանակաւորապէս բաժանուէի ամուսնուցս իմ ծննդավայրը գնալու՝ հօրս տեսութեան, արտասուրը խեղում էր ինձ: Երբ գնացը հեռացաւ կայարանից, ես երկար ժամանակ երեխայի պէս հեկելում էի վագոնում:

Մի օր՝ Գեղանի պահարանից երբ ուզում էի մի գիրք վերցնել, ձեռքս ընկան միքանի նամակներ: Դու էլ զիտես, սիրելիս, թէ հրքան մենք՝ կանայքս հետաքրքիր ենք մեր ամուսիների թղթակցութիւնների վերաբերմամբ: Ես այդ նամակները կարդացի ծայրէ-ի ծայր: Գրուած էին նրանք Գեղանի եղբայրների և մօր կողմից: Աստուած իմ, հրքան քծումն, նրքան լալկանութիւն կային այդ անգրագէտ մարդկանց գրած նամակների մէջ: Նրանցից իւրաքանչիւրը ոչ այլ ինչ էր, բայց եթէ մուրացկանի աղերս:

Կասկածելու այլևս տեղիք չկար. Գեղանը ինձ

հետ ամուսնացել էր՝ եղբայրներին ու մօրը նիւթապէս ապահովելու նպատակով:

Ես զգուանքով դէն շպրեցի այդ թղթերը:

Այդ տխուր օրերին հայրս մահամերձ էր, ես տառապում էի, որ նրա սնարի մօտ չեմ և որդիական գուրգուրանքով չեմ թեթեացնում նրա վերջին ըռպէսները:

Մի առաւօտ հեռագիրը գուժեց նրա մահը: Արտասուրը բարացաւ իմ աչքերում: Այնպէս թուաց ինձ, թէ մի ծանր յանցանք եմ գործել: Շտապեցի ճանապարհի պատրաստութիւն տեսնել, որպէսզի գոնէ թաղմանը ներկայ լինիմ: Բայց ամուսնուս զաժանութիւնն այստեղ ևս կանգ չառաւ նոյնիսկ իմ մեծ վշտի առաջ: Նա ինձ թոյլ չտուաւ գնալու: Այդ օրը առաջին անգամ չկարողացայ ինձ զսպել և արտայայտեցի իմ զայրոյթը, որի հետևանքն եղաւ ի-հարկէ ընտանեկան մի սոսկալի փոթորիկ:

Ամիսներ անցան մինչեւոր Գեղանը համաձայնեց թոյլ տալ ինձ ծննդավայրս գնալու: Բայց էլ ինչ գնալ. հայրս չկար, մեծ եղբայրս հիւանդ, որ իրա կնոջ հետ գնացել էր արտասահման:

Մնացինք ծնողներիս տանը ես ու կրտսեր եղբայրս, որ դեռ զիմնազիօնի աշակերտ էր:

Ամուսինս թողեց իրա պաշտօնը և տեղափոխուեց:

Նա նպատակ ունէր հօրս գործերը իրա ձեռքն առնելու, և հասաւ նպատակին, որովհետեւ ոչոք չընդդիմացաւ նրան:

Մենք վճուեցինք հաստատուել հօրս ամայի տանը, բայց խորամանկ պառաւը հակառակուեց: Պարզ էր թէ նա չէր ուզում, որ հեռու լինիմ իրա ճիրաններից: Ես ստիպուած եղայ ընկնել դարձեալ այն շըր-

ջանը, որ այժմ ոչ-միայն խորթ, այլև ատելի էր ինձ համար:

Թուլութեանս համար կշտամբիր ինձ, սիրելիս, որքան կամենաս, իրաւունք կ'ունենաս. Ես չեմ թագցնում իմ թուլութիւնը: ԶԵ-որ ես վճռել էի քաժանուել ամուսնուց, րայց ես քաջութիւն չունեցայ այդ քայլն անելու: Քաջութիւն չունեցայ, որովհետեւ հասարակական կարծիք կոչուած բռնակալը ստրկացրել էր կամքս:

Ամեն ինչ ու ամեն բան զգուելի էր ինձ համար այդ շրջանում՝ նրա ատելութիւնը, և սէրը, և հայնոյանքները, և օրհնութիւնը: Ես տառապում էի հոգով: Կեանքը մի անտանելի լուծ էր թվում ինձ, Կարող ես երևակայել իմ մենակութեան աստիճանը, Եթէ ասեմ՝ թէ միակ տանելի անձն այդ տան մէջ հօրս վաղեմի խոհարարն էր, որ այժմ ծառայում էր մեզ մօտ: Դժբաղդաբար նա էլ շուտով թողեց իրապաշտօնը, ասելով Գեղանի մօր երեսին.

—Ես անկարող եմ ծառայել ձեզ նման մարդկանց:

¶

Ես հարստահարվում էի կատարելապէս:

Սկսուել էր մի այնպիսի շահագործութիւն Գեղանի մօր և եղբայրների կողմից, որ մեծ ճանապարհի վրայ աւազակների ձեռքն ընկած մի ճամբորդի վիճակում էի զգում ինձ: Մերժել չէի կարող, որովհետեւ մեր գործերի կառավարիչը ամուսինս էր: Մի օր նա եղբօրը մի կլոր գումար տուաւ հօրս դրամարկղից՝ իրը-թէ թղթի առևտուր սկսելու համար:

Առևտուր չսկսուեց, գումարը չքացաւ: Մի ուրիշ առևտուր սկսեցին. նոյն հետևանքն ունեցաւ: Ես՝ որ

դրամական հաշիւների մէջ շատ անփորձ էի ու դիւրահաւան, նոյնիսկ նո՞ւ մի օր քննելով նրանց մատեանները, մի շարք գեղծումներ գտայ:

Բայց ի՞նչ էին նիւթական զրկանքներս բարոյականի հետ համեմատած: Ես պատրաստ էի զոհել ամբողջ կարողութիւնս, միայն թէ հոգեկան անդորրութիւն ունենայի: Աւաղ, նա չկար:

Իմ ծննդավայրում, բազմաթիւ ազգականներիս ու ծանօթներիս շրջանում անգամ հասարակութիւնից անջատուած էի նոյնչափ, որչափ օտար քաղաքում, ուր ես այնքան տառապել էի մենակութիւնից:

Եւ իմ այդ վիճակում ամուսնուս բռնակալութեանը միացաւ նաև խանդի զգացումը: Նա խանդոտում էր ինձ ամենքի վերաբերմամբ՝ թէ ծանօթի թէ անծանօթի, թէ երիտասարդի թէ ծերի, թէ գեղեցկի թէ տգեղի: Նա ինձ թոյլ չէր տալիս ոչ մի տեղ գնալ ոչ-միայն մենակ, այլև իրա հետ:

Ցիշեմ հետեւեալ դէպքը: Մենք ազգականներից մէկի մօտ ճաշի էինք հրաւիրուած: Ամուսինս խօսք տուաւ գնալու և ինձ էլ տանելու: Ժամանակից մի վոքը առաջ ես հագնուեցի ու սպասեցի նրան: Նա եկաւ և տեսնելով ինձ գուգուած-պատրաստ, կատաղից առանց որևէ պատճառի: Կարծես մի մեծ յանձանք էի գործել:

Մենք չգնացինք ճաշի: Յետոյ իմացայ ամուսնուս կատաղութեան պատճառը. ճաշին հրաւիրուած է եղել մի ինչ-որ եկուոր երիտասարդ, որին չէի ճանաչում և որի անունն անգամ լսած չէի մինչև այդ օրը:

1896 թուականի գարունն էր, Թագաւոր-Կայսեր թագաւորութեան օրը: Ամբողջ քաղաքը զուարձանում էր այգիներում ու փողոցներում:

—Գնանք այգի, —դիմեցի ամուսնուս:

—Չի կարելի:

— Ինչու:
 — Մայրս մենակ կը մնայ տանն ու կը տիրի:
 — Թող նա էլ մեզ հետ գայ:
 — Նա ծեր է, շուտ կը յոդնի:
 — Կառքով կը զբօսնենք:
 — Թանգ կ'արժենայ:
 — Ես կը վճարեմ:
 — Այդ միևնոյն է:
 Եւ այսպէս՝ ամեն մի բանի դէմ մի պատրուակի:
 Այն ինչ՝ ինքը գնում էր ամեն տեղ՝ ուր կամենում
 էր և երբ էլ որ ցանկանում էր:
 Չորս տարի էր անցել իմ ամուսնութիւնից. օժի-
 տիս հագուստների ձեզ վաղուց էր մօդայից դուրս ե-
 կել, հարկաւոր էր նորերը կարել տալ, սակայն թոյլ
 չտուաւ. Ես փորձեցի հին հագուստներիս ձեզ փոխել
 տալ. այդ էլ թոյլ չտուաւ, սաելով՝ կարող են փշա-
 ցնել թանկագին կտորները:

Մանօթներս կարծում էին թէ ժլատը ես եմ,
 իսկ ես՝ յիմարս դատարկ ու սին ինքնասիրութիւնից
 դրդուած, չէի հերքում, չկամենալով ամուսնուս վարկը
 նսեմացնել:

Նա ինքը հագնվում էր շատ համեստ:

— Պէտք է ինայոդութիւն անենք, որպէսզի մեր
 ծերութեան համար մի բան յետ գցենք, — տսում էր
 նա յաճախի:

Սակայն բայցի նրանից որ թոյլ չէր տալիս գոնէ
 իմ անձնական փողով կարգին հագնուեմ, այլև եղրօրս
 ընծայած թաւիշէ դերիացուս տարաւ շուկայ և վաճա-
 ռեց: Այդպիսի տգեղ արարքը անհաւատալի կը թուայ
 քեզ և թէ ամեն լսողի, բայց այդիբողութիւն է:

Գուցէ ծիծաղես, նոյնիսկ չհաւատաս, եթէ սաեմ
 որ երբ մի՞ օր երեք կոպէկանոց նամականիշ ուղեցի,

նա իսկոյն հանեց տուաւ, բայց և անմիջապէս պա-
 հանջեց ու ստացաւ Յ կոպէկը: Կամ երբ հատնում էր
 թանաքը, չէր առնում, ասելով՝ «Քանի-որ դու էլ
 ես բանացնում, ուրեմն դու նս առ, ինչու պէտք
 է միշտ իմ գրպանից ծախսեմ»:

Անշուշտ դու այժմ ծիծաղում ես, սիրելիս. սակայն
 իմ սրտից արիւն էր գնում նրա այդ աստիճան գծու-
 ծութիւնից: Բայց դեռ լսիր:

Մի անգամ երբ ուզում էի թէյիս բաժակի մէջ
 երրորդ կտոր շաքար գցել, պառաւը նկատեց՝ «Նատ
 ես գցում»: Այդ օրուանից սկսեցի կծովի խմել. սա-
 կայն այդ ևս չօքնեց. հիմա էլ ամուսինս նկատեց.

— Իու թէյը կծովի խմելով, շաքար աւելի ես
 բանացնում:

Մի օր էլ լսեցի թէ ինչպէս Գեղանի մայրը ա-
 սում էր միւս հարսին.

— Երկու շիշ գարեջուր մի գնիլ սեղանի վրայ,
 մէկն էլ բաւական է. չեմ. նկատել որ նա տղամարդու
 պէս է խմում:

Պարզ էր որ ինձ էր ակնարկում, ուստի այդ
 օրուանից դադարեցի գարեջուր խմելուց:

Ամուսնուս խաթեր համար այդ ևս կարելի էր
 հեշտութեամբ տանել. բայց ինձ համար անտանելի էր
 այդ տհսակ փնթի մարդկանց հետ միևնոյն յարկի տակ
 ապրելը. թվում էր թէ դրանք ամենքը ևս մաքրասի-
 րութեան մասին ամենաթոյլ գաղափար իսկ չունին:
 Ամեն ըովէ վրաները այնպիսի կեղտոտութիւններ էի
 տեսնում, որոնց մասին գրել ամաչում եմ:

Բացի իմ երկու հօրեղբօր որդկերանցից ուրիշ
 նչ մի ազգական չունէի. սակայն դրանք էլ՝ լաւ իմա-
 նալով ամուսնուս կծծի բնաւորութիւնն ու առասպե-
 լական ժլատութիւնը, շատ ուշուց էին գալիս մեզ

մօտ, թէպէտև մենք յաճախ էինք լինում նրանց մօտ:
իսկ ամենից տարօրինակն ու հետաքրքրականն
այն էր որ ամուսինս չէր կամենում որ ես ժպտամ,
կամ լաւ տրամադրութեան մէջ լինիմ: Օրինակ՝ մեղ մօտ
հիւրեր եղած ժամանակ բնական էր և պատշաճութիւնն
էլ պահանջում էր որ ուրախ երևամ, թէև սրտիցս ա-
րիւն էր կաթում, սակայն այդ բանը դիւր չէր գալիս
նրան:

Երբեմն ես մենակ գնում էի ամուսնուս քեռանց
կամ մօքրանց, որոնք շատ յարգանքով էին վերաբեր-
վում դէպի ինձ: Մի օր էլ իր դրանց մօտ էի, Գեղա-
նի մօրաքոյրը խնդրեց ինձ համոզել իրա ամուս-
նուն, որ նա չմերժէ աղջկան տալ այն տղային, որ
խնդրում է իրանց աղջկայ ձեռքը: Ես այդ տղային
ճանաչում էի իրրե լաւ տղայ, ուստի կարողացայ հա-
մոզել հօրը:

—Թանի-որ դու հաւանում ես, ասայ նա, համա-
ձայն եմ:

Հարսանիքի օրը ինձ խնդրեցին որ գնամ նորա-
հարսի շորերը հագցնեմ. ես պատրաստուեցի գնալու,
սակայն ամուսինս, առանց որևէ պատճառի ոչ ինքը
գնաց և ոչ էլ թողեց որ ես գնամ: Վերջը երբ հարսի
եղայրը եկաւ, Գեղանը նրա մօտ ցոյց չտուաւ որ
քիչ առաջ չէր թողնում ինձ գնալ նրանց տուն. նա
դիտեր իրան ցոյց տալ ուրիշների մօտ: Զնայելով իր
անտանելի կոպտութեանը, սաստիկ կեղծաւոր էր ու
ճարպկօրէն այնպէս էր հաւատացրել շրջապատողներին,
որ ինքը անկեղծութեան տիպար է. այդ էր պատճառը
որ ոչ-ոք նրան կեղծաւոր չէր համարում: Ինչիէ.
գնացի հարսանիք: Սակայն նորապահները նոր էին
եկել եկեղեցուց, որ տալիս ամուսինը մօտենալով
ինձ առաց, որ Գեղանը շատ է բարկացել և պահան-

ջում է որ իսկոյն տուն վերադառնամ: Ես ստիպուած
եղայ՝ գլխացաւս պատրուակ բռնելով՝ վերադառնալ:
Ուղըս չէմքից ներս գնելուս պէս սկսեց բղաւել
վրաս, թէ ինչնու գնացի: Առհասարակ նա չէր կա-
մենում որ իրանց աղջկանների մօտ գնալ-գալ
ունենամ:

Սիրելիս, դէ հիմա մի բոպէ մտիր դրութեանս
մէջ և պատկերացրու քեզ իմ հոգեկան կացութիւնը,
երբ ամեն կողմից ականջիս էր հասնում, թէ ամու-
սինս՝ վարկս գցելու անմիտ նպատակով, իմ մասին
ամենաաննպաստ տեղեկութիւններ էր տարածում: Այս-
պէս՝ նա աշխատում էր ամենքին հաւատացնել որ ես
կուտարար եմ, որ ես, իբր-թէ, ընկնաւոր եմ, թալ-
կացող ու էլ չգիտեմ ինչ, որի պատճառով էլ ինքը
անբաղդ է: Բայց էլ չէր մտածում որ եթէ իսկապէս
ես իր ասած հիւանդութիւններից գոնէ մէկն ու մէկը
ունենայի, անկարելի էր ծածկել այդ, ինչպէս որ՝ հա-
կառակ իր թափած ճիգերին ու խորամանկութիւննե-
րին, ոչ-ոքից ծածուկ չմնաց իրա հիւանդութիւնը:
Թէև զարմանալի չէր լինիլ, եթէ այնպիսի հոգեկան
տանջանքներ կը լուցս յետոյ իրօք հիւանդանայի:
այլ զարմանալին այն է որ այնպիսի քաշածներիցս
յետոյ դեռ առողջ հմ մնացել:

Պառաւը հրճվում էր որդու անտեսութեամբ,
մանաւանդ նրա խստութիւններով իմ վերաբերմամբ:

Մի օր ես լրջօրէն պահանջեցի Գեղանից բաժան
ապրել մօրից ու եղայրներից: Հակառակ սպասածիս,
նա համաձայնուեց և մենք մի տուն գնեցինք, կար-
գադրեցինք հարկաւոր վերանորոգութիւններն անել
ու գնացինք մի առամանակ թիֆլիզ:

Երբ վերադարձանք, զգացի որ թակարդն եմ
ընկել: Եղեակայիր՝ մեր սեպհական պունը գրաւել

Էին Գեղանի մայրն ու եղբայրները Այդ մարդկանց
պրտկերեսութիւնը սահման չունէր:

—Մարդ Աստուծոյ, —գոյսեցի ես մինչև հոգուս խոր-
քը վրդովուած, —չէ-որ այս տունը գնեցինք միայն
մեզ համար:

Նա չարախինդ կերպով ժպտաց և ամենայն սառ-
նութեամբ պատասխանեց.

—Ո՞չ, սիրելիս, այս տունը ես նուիրել եմ մօրս:
—Ինչու և ո՞ր իրաւունքով:

—Հարազատ որդու իրաւունքով, որ պարտաւոր
է կատարել իր որդիական պարտքը: Ես մօրս խոստա-
ցել էի մի տուն և ահա ուրախ եմ որ վերջապէս կա-
լողացայ խոստումս կատարել:

—Իմ փողով:

—Ո՞չ, մեր փողով, շեշտեց նա, որովհետեւ մեր
մէջ չկայ իմ ու քո. մեր կարողութիւնն անբաժան է:

—Այս-ժամանակ թոյլ տուր ինձ հեռանանալ այս
տանից. ես այլևս անկարող եմ մօրդ ու եղբայրներիդ
հետ մի յարկի տակ ապրել:

—Դու ոչ մի տեղ չես հեռանալ: Դու կ'ապրես
այնտեղ, ուր ես եմ ապրում և այնպէս՝ ինչպէս ես եմ
կամենում: Այս են պահանջում իմ որդիական պար-
տականութիւնն ու ամուսնական իրաւունքը. այս են
պահանջում հասարակական կարծիքը և մեր հայրերի
ու նախահայրերի սրբազն աւանդութիւնները....

Եկ անիծեցի՝ այդ պարտականութիւնն էլ, այդ
իրաւունքն էլ, բոլորը, բոլորը՝ ինչի պատճառով թա-
ռամում էր իմ ծաղիկ կեանքը:

Իբրև-թէ այդքանը քիչ էր: Երեաց որ ամուսինս
վատ բնաւորութեան հետ ուրիշ հիւանդութիւն ևս ունի,
որի հետևանքն էր մեր անզաւակ լինելը:

Այս, սիրելիս, գուցէ քեզ համար ձանձրալի է

այս մանր-մունը դէպքերի նկարագրութիւնը, բայց
դրանք ահազին գեր են խաղացել իմ կեանքում, և
եթէ այսօր իմ հոգին աղաւաղուել է ու սիրտս փըշ-
րուել, պատճառը հէսց դրանք են:

Ի՞նչ ուզում են թող ասեն փիլիսոփաները. մեր
կեանքը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մանր-մունը դէպքերի
ու դիպուածների մի անվերջ շղթայ: Ես տանջվում էի
այն մտքից, որ իմ երազած երջանիկ ամուսնական
կեանքը փոխուել էր հէնց այդ տեսակ աննշան դի-
պուածների, և այն մարդը՝ որին իդէալական էի երա-
զել, ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի սարսափելի պրօզայիկ
արարած: Ո՞ւր մնացին նրա բոլոր սքանչելի խօսքերը,
մըր մնաց «սև մորթու տակ թաքնուած պայծառ հոգին»:

Ես ինձ զգում էի կատարելապէս պաշարուած
թշնամիներով: Իմ դէմ կազմուել էր մի դաշնակցու-
թիւն, որի հետ կուռելու համար երկու միջոց ունէի՝
կամ արհամարենել հասարակական կարծիքն ու Գոր-
դեան հանգոյցը խորտակել մի հարուածով և կամ դի-
մել նոյն միջոցներին, որոնք իմ հակառակօրիների սո-
վորական զէնքերն էին, այն է՝ խորամանկութեան, բան-
սարկութեան, խարէութեան ու քսութեան: Բայց ես
ընդունակ չէի թէ մէկի և թէ միւսի համար: Ես միայն
մի բան կարող էի անել—տանջուել:

Եւ ես տանջվում էի:

Մի օր Գեղանը պահանջեց, որ ես ստորագրեմ
մի թուղթ, որով պիտի նրա եղբօրը տրուէր՝ մի
ինչ-որ գործի համար 15,000 ռուբլի իմ հայրական
կարողութիւնից: Ես չստորագրեցի: Պարոն ամուսինս
կատաղեց, գազան կարուեց ու... ձեռք բարձրացրեց
վրաս....:

Այս, սիրելիս, այդ օրին էլ հասայ:

Արտասահմանից վերադարձաւ հիւանդ եղբայրս
կնոջ հետ:

Արդէն համբերութեանս բաժակը լցուել էր: Ես
վճռեցի գեհենից փախչել և եղբօրս հովանաւորութեան
տակ մտնել:

Գնացի՝ ծնողներիս տուն:

Բայց չեր անցել մի ամիս, երբ մի օր ինձ մօտ
եկաւ Գեղանի եղբօր կինը և աղերսից վերադառնալ:
Նա հաւատացրեց ինձ, որ իմ հեռանալուց յետոյ Գե-
ղանը տանջվում է անհունապէս, մինչեւ անդամ հիւան-
դացել է:

Հարկաւ մերժեցի:

—Ի՞նչ, բացականչեցի. վերադառնալ դէպի այն
տաժանկիր աշխատանքի վայրը, ուր այնքան տառա-
պել եմ: Երբէք:

Աւաղ, այս անդամ էլ յաղթողն իմ թուլութիւնն
եղաւ. երբ եղբայրս ու նրա կինը ևս թախանձեցին
ինձ՝ զիջցի:

Այս անդամ Գեղանը համաձայնեց բաժանուել
մօրից ու եղբայրներից, և մենք մեզ համար առանձին
ընակարան վարձեցինք:

Բայց փոխուեց միայն տանջանքներիս վայրը,
իսկ նրանք մնացին նոյնը: Հակառակորդներս իմ տանն
անդամ ինձ հանգիստ չթողին իրանց ինտրիգներով,
մանաւանդ մուրացկանութեամբ: Մի օր Գեղանի մօր
խոհանոցից մամավարն ին գողացել, պէտք է գնել
նորը, միւս օրը եղբօր ժամացոյցն է կորել, պէտք
է ուրիշը գնել, մի ուրիշ օր փողամանը, ևայլն, ևայլն,
անվերջ: Եւ այդպէս հարստահարելով ինձ, դարձեալ
չէին ինսայում ոչ-միայն իմ, այլև իրանց հարազատի
պատիւը: Նրանք ամուսնուս պատուի համար վիրաւո-
րական լուրեր էին տարածում իմ մասին:

Ե

Մի օր ամուսինս ճաշից յետոյ, առանձնացած
իրա սինեակում հանգստանում էր: Ես ևս գնացի այն-
տեղ, որովհետև հետալ զրոյց անելու պահանջ էր
զգում: Եւ երբ ներս մտնելով՝ կամնցայ նրան փա-
ղաքշել՝

—Հեռացիր ինձնից, —գոչեց յանկարծ, —դու ինձ
դաւաճանում ես:

Մարդու կեանքում լինում են այնպիսի վայր-
կետններ, երբ զայրոյթից կարկամվում է: Հարկաւոր
եղաւ բաւական երկար միջոց, մինչեւ որ ոյժ ունեցայ
արտասանելու:

—Դաւաճանում եմ: Արդիօք ում հետ:

—Այդ քեզ է՝ յայտնի:

—Ո՞վ ասաց:

—Այդ իմ գաղտնիքն է:

Ես մի վայրկեան կարծեցի, թէ ամուսինս կա-
տակ է անում և ծիծաղիցի: Նա կրկնեց, երեքինեց-
իրա զրպարտութիւնը:

Հեկեկանքը խեղդեց ինձ, դառն, անզուսպ հեկե-
կանքը, որ մեր սեռի միակ սփոփանքն է:

Միքանի օրից յետոյ նրա քոյրն էլ երեսիս շպըր-
տեց նոյն զրպարտութիւնը:

—Վերջապէս ասացէք, թէ ով է ինձ անբաստա-
նողը, գոչեցի ես:

—Մի օր կ'իմանաս, —պատասխանեց ամուսինս:

—Սկսաւ էք ասում քոյր ու եղբայր...: Այն, ստում
էք: Դուք ինքներդ էք հնագել այդ. դուք՝ մայր ու
աղջիկ: Դուք խիզճ չունիք, հոգի չունիք, դուք օք օրի
վրայ աւելի ու աւելի էք թաղվում տղմի մէջ: Զեղ
համար անմարսելի է իմ բարոյական մաքրութիւնը,

որովհետև ինքներդ անմաքուր էք: Դուք իմ զգուանքին անգամ արժանի չեք, այլ իմ արհամարհանքին միայն: Եւ ես արհամարհում եմ ու անուշաղի՛ թողնում ձեր ստոր զրպարտութիւնը...:

Ծնողներիս շնորհիւ Գեղանը իմ ծննդավայր Ա.—ում քաղաքագլուխ ընտրուեց: Թէս պէտք է ասել, որ հասարակութեան մէջ նա վայելում էր խելօք, գործունեայ և եռանդուն մարդու հոչակ: Միամիտները հաւատում էին մինչև անգամ նրա բարոյական... մաքրութեանը, նրա... հոգու ազնւութեանը: Ի՞նչ արած, սիրելիս, մարդիկ սովոր են նոյնիսկ ուրիշների ամուսնական արժանաւորութիւններին նայել հասարակական արժանիքների պրիզմայով: Լաւ գործիչ է, նշանակում է նաև լաւ ամուսին է: Ոչ-ոք չգիտէր, որ այզ է Գեղանը հասարակութեան մէջ, այլ է իրա յարկի տակ:

Դառնալով հասարակական լնտրելի, նա հրաժարուեց հօրս գործերից, յանձնեց նրանց մեծ եղքօրս գործավար-խնամակալին:

Սա ամուսնուց հաշիւ պահանջեց ու յետոյ էլ երք 3,000 ոռուրի բացի համար խնդրեց Գեղանից մուրհակ տալ, նա բարկացաւ թէ:

—Միթէ ինձ չէք հաւատում, որ մուրհակ էք պահանջում:

—Այստեղ հաւատալու կամ չհաւատալու բան չկայ, նկատեցի ես.—չէ-որ ինքդ էլ մի չնչին հաշիւ լինելիս կրկնում ես՝ պէտք է հաշիւները մաքուր ու որոշ լինին: Հետևապէս եթէ հիմա չես կարող պակաս մնացած 3,000 ոռուրին լրացնել, ոչրեմ մուրհակ տուր, որպէսզի խնամակալը հանգիստ ու ապահով լինի:

Պէտք է տեսնէիր թէ իմ այդ խօսքերից ինչպէս կատաղեց Գեղանը և չտուաւ մուրհակ:

Խնամակալը մեծ ջանք գործ դնելով միայն կարողացաւ դրամօժիտս ազատել Գեղանի ճանկերից: Այս հանգամանքը գրգռեց նրան և նա վճռեց վրէժ առնել... ի-հարկէ ինձնից: Սկսուեց մեր մէջ դրամական մանր-մուսք հաշիւների մի երկար շարան, որից ես էլ ստիպուած եղայ յետ պահանջել եղբայրներին տուածս 2,000 ոռուրին, բայց նա ծիծաղեց, ասելով՝

—Որ չունին, մուտեղից տան. բացի դրանից այդ կը նշանակէ մէկ գրպանից հանել, միւսի մէջ դնեմ:

—Այն, այդ ասածդ ճիշտ կը լինէր միայն այնժամանակ, եթէ գոնէ քո կոպէկները չխնայէիր ինձնից, այն ինչ դու Յ կոպէկանոց մարկայի փողն էլ ես պահանջում ինձնից, էլ ես ինչպէս չպահանջեմ իմ 2,000 ոռուրին:

Երբ տեսայ որ պարոնս ոչինչ չի ուզում անել ստանալիքիս համար, քրոջ մարդուն ուղարկեցի եղբայրների մօտ, որ վերցրած 2,000 ոռուրին վերադարձնեն, իսկ նրանք լրբարար պատասխանել էին թէ իրանք վճարելու միտք չունին. Եթէ կամենում է՝ այսօրուանից շուտը չի լինի՝ թող դատարանին դիմէ:

Ես հէնց այդպէս էլ արի ու գործը տարայ՝ ստանալով 2,000 ո., թէս իրանք չվճարեցին ի-հարկէր այլ ամուսինս վճարեց նրանց փոխարէն: Փողերս այդպէս դժուարութեամբ ստանալով, ակամայ յիշեցի հետևեալ ոտանաւորը, որ շատ սազում է այդ գործին.

Եյ, բարեկամք, ինչ բանի էք,

Զէք մտածում, թէ պարտք ունէք...

Գործ բռնեցիք, —հօրս ողորմի, —

Դէ, փողերը տուէք հիմի:

Թուղթ էք տուել, վախտն իմացէք.

Թալան հօ չի, մեղք եմ ես էլ...

Ախպէր, այսպէս բան, էք տեսել

Ոսկի տայ մարդ իրա ձեռքով,
Ու չկարենայ առնել գոռնվ.
Սրանից յետոյ դէ արի դու՝
Ու ձեռ մեկնիր այդպէս մարդու:

Երբ բոլոր դրամագլուխս իմ ձեռքն անցաւ, անմիջապէս մի տուն գնեցի, ուր և տեղափոխուեցինք:
Սակայն այստեղ էլ երեաց Գեղանի շահախնդրութիւնը.
տանս կենացողներից ինքն էլ ստանում ամսականները և գրանը գնում: Մէկ ուզում էի ասել բնակուղներին որ քրէները ուղղակի ինձ բերեն և ոչոքի չտան, և մէկ էլ յետ էի կանգնում այդ մտադրութիւնից չկամենալով ամուսնուս վարկը գցել օտարների աչքում: Եւ մինչև Արմ—իր տեղափոխուելու օրն էլ բնակարանների վարձը ինքն էր գրանում առանց ամաչելու:

Չեմ յիշում քանի տարի, բայց բաւական երկար ժամանակ Գեղանը վարեց քաղաքագլխի պաշտօնը:
Սակայն որքան էլ նա ճարպիկ լինէր, բայց գարծեալ չկարողացաւ թաքցնել իր իսկական բնոյթը: Նա հըռչակուեց որպէս կոպտութեան ու անկրթութեան տիպար: Զմոռանամ ասելու, որ իր այդ կոպտութեան պատճառով էր որ Սալ—ում քիչ մնաց սպանէին:

Նրա քաղաքագլխութեան օրով մեր ծննդավայրում բացուեց մի նոր օրիորդական դպրոց: Աւագվարժուհի հրաւիրուեց՝ Ծահսա Զլատկին անունով մի կրօնափոլիս հրէուհի. կարճ հասակով և կարմիր կոպերով մի էակ: Շուտով քաղաքում լուր տարածուեց, թէ ամուսինս այդ կնոջ հետ մտերմական յարաբերութեան մէջ է: Ինչպէս սովորաբար պատահում է՝ ամենից ուշ իմացողը ես եղայ:

Դու ես գիտես, սիրելիս, որ մենք՝ կանայքս մեր ամուսիններից կարող ենք տանել ամեն բան—և՝ զըր-

կանք, և հալածանք, և բոնութիւն, և նոյնիսկ ծեծ, բայց դաւաճանութիւն, օօ, այդ զարհուրելի է: Զգալ թէ այն մարդը, որ քո կողակիցն է, որին այսպէս թէ այնպէս սիրում ես, պատկանում է և մի ուրիշին—կը նշանակէ երկրային գեհենի տանջանքները կրել:

Ամուսինս անխնայ և անգիտօքէն ոտնատակ էր տալիս անձնասիրութիւնս, պատիւս, ամօթխածութիւնս: Նոյնն էին անում նաև նրա մերձաւորները—մայրը, քոյրը, եղբայրները: Ինչմէւ: Միթէ այն պատճառով, որ ես ամեն կերպ աշխատում էի նրանց վերաբերմամբ լինել հեզ, բարի, ներողամիտ:

Ինչպէս երևում է մենք՝ կանայքս, եթէ ուզում ենք, որ մեր իրաւունքները ճանաչուին ու յարգուին, պէտք է մեր արեան գնով պաշտպանենք նրանց, միշտ բողոքենք ու կոռւենք՝ առանց մեզ կորցնելու:

Ճիշում հմ մի ֆրանսիական ասացուած. «Եթէ շոյես ռամկին, նա քեզ կը բռնցկահարի, բայց եթէ բռնցկահարես՝ նա քեզ կը շոյի»:

Այն, սիրելիս, ամուսինս իմ վերաբերմամբ կատարեալ ռամկիկ էր, որովհետեւ ես նրան շոյում էի:

Ինքնօգնութեամբ իրանց համար ճանապարհ հարթած մարդիկ, հարկաւ, արժանի են ամեն յարգանքի, նոյնիսկ հիացման. բայց և նրանց նման անհանդուժելի արարածներ չկան աշխարհի երեսին: Որքան նրանք իրաւունք են ունենում պարծենալու իրանց եռանդով, խելքով, կամքի ուժով, նոյնքան ի չարն են գործ գնում այդ իրաւունքը:

Նրանք նապոլէօնի նման սիրահարուած են իրանք իրանց վրայ և արհամարհանքով են նայում հասարակ մահկանացուներիս: Ընկերական շրջաններում նրանք ուղղակի ձանձրալի են իրանց անսահման ուռուած «սաւ-ովլ: Ամենուրեք աշխատովմ են լինել մի տե-

սակ առանցք, որի շուրջը պիտի պտըտեն ամենքը, ուստի և ձգտում են նսեմացնել ուրիշներին. իրանց «Ես»-ի համար կատարեալ պաշտամունք են պահանջում:

Այն օրից երբ Գեղանն ընտրուեց քաղաքագույխ, իմ կեանքը կրկնակի դառնացաւ: Ես չգիտէի ինչպէս գոհացնեմ նրա «Ես»-ին, որ օր օրի վրայ ուռչում էր ու աւելի հրէշանում:

Կարող ես երեակայել, սիրելիս, թէ ինչ դարձաւ նա, երբ մեր նահանգի կողմից Պետական Դումայի անդամ ընտրուեց:

—Այն—բացականչեց նա ընտրութեան օրը,—այս աստիճանին էլ հասայ: Եւ մեմ պարտական իմ այս դիրքը. իմ և միայն իմ անձնական, արժանիքներին:

Այլևս չկարողացայ հանդուրժել ու ասացի:

—Ո՞չ լիովին:

—Ի՞նչ, —զարմացաւ նա իմ համարձակութեան վրայ:

—Այն, դու շատ էլ իրաւունք չունիս պարծենալու քո անձնական արժանիքներով: Թո կարիերայի մի մասը ուրիշներին ես պարտական:

Միքայէլը սրբեց անձեռոցիկով իր հաստ ու իւղու շրթունքները և, մի հեգնական հայեացք ձգելով ինձ վրայ, ասաց.

—Կը կամենայի իմանալ՝ ովքեր են այդ ուրիշները:

—Նախ և առաջ իմ ծնողները և յետոյ՝ ես:

—Ահա թէ ինչ. հետաքրքրական է իմանալ թէ այդ ինչպէս:

—Շատ պարզ է. մինչև ինձ հետ ամուսնալու դու պետական աննշան պաշտօնեայ էիր մի յետ ընկած վայրում և տարեկան չնչին ոռնիկ էիր ստանում: Համաձայնիր որ դու այն օրից յայտնի դարձար մեր

քաղաքում, երբ ինձ հետ ամուսնացար: Քեզ քաղաքագույխ ընտրեցին իմ հօր պարտապանները և այն անձինք, որոնց հանգուցեալն օգնել է իրա կեանքում:

Պարոնս լուռ կուլ տուաւ ճշմարտութեան այդ դառը գեղահատը:

Զ

Միքանի օր անցած ասացի.

—Դու Պետերը ուրդ ես գնում, ես անկարող եմ քեզ հետ գալ:

—Զեմ էլ ուզում, որ գաս:

—Շատ լաւ, Քեզ կատարեալ ազատութիւն եմ տալիս. մեր հանապարհներն այսուհետև բաժանվում են:

—Ի՞նչ ես ուզում ասել դրանով:

—Այն՝ որ այլևս իմ ոյժերն սպառուեցին, բաւական է, որքան տանջուեցի:

Նա չբարկացաւ, այլ ասաց.

—Գոհարինէ, դու շարունակ կրկնում ես, որ ես կոպիտ եմ, անգութ, չար, ժլատ, մի խօսքով՝ լաւ մարդ չեմ: Ասա խնդրեմ, այդ ինչիցն է, որ այսպիսի մի հակակրելի մարդ այնքան յարգուած ու սիրուած է ամենքից:

—Քեզ ոչ-ոք չի սիրում: Գալով յարգանքին, այդ գուցէ առաջ էր, իսկ այժմ այդ էլ չկայ:

—Չկայ և ի՞նձ են ընտրում ամեն անգամ հասարակական խոշոր պաշտօնների համար:

—Այս անգամ քեզ ընտրեցին պարզապէս նրա համար, որպէսզի պատուեն քեզնից:

—Ահա թէ ինչ. հետաքրքրական է թէ ինչից եղակացրիր այդ:

—Քաղաքում պարտուող լուրերը երբեմն ինձ էլ են

հասնում: Եւ այն՝ ինչ որ լսում հմ քո մասին, շատ անդամ խոցոտում է իմ ինքնասիրութիւնը: Զէ-որ ես քո ազգանունն եմ կրում և մեր բարոյական վարկերը կապուած են միմեանց հետ: Ահա հէնց այդ կապն է, որ ուզում հմ խորտակել: Ես վճռել եմ քեզնից բաժանուել, ահա իմ խօսակցութեան միակ նպատակը:

Նա չզարմացաւ, այլ՝

— Այն, — ասաց ամենայն հանգստութեամբ, — ես էլ եկել եմ այն եղրակացութեան, որ պէտք է բաժանուենք: Մենք անչափ տարբեր խառնուածքների մարդիկ ենք: Բաժանուենք. սակայն լաւ իմացիր, որ ես քեզ ապահարզան չեմ տալ:

— Այդ մասին, ես առայժմ չեմ էլ մտածում, այլ իմ միակ ցանկութիւնն է՝ ազատուելով քեզնից և քո մերձաւորներից, գոնէ հոգիկան անդորրութիւն վայելեմ:

Միքանի օր անցած՝ Գեղանը ուղևորուեց մայրաբաղաք, իսկ ես մնացի իմ ծննդավայրում:

Այնտեղ նա մնաց երկու ու կէս ամիս: Լուր ստացայ, որ գնացել է հանգային ջրերը բժշկուելու համար: Ես չէի սպասում որ մենք դարձեալ երբեք կը հանդիպէինք իրար: Համոզուած էի որ հանգային ջրերից նա կ'երթայ մի ուրիշ քաղաք: Երևակայիր, սիրելիս, իմ զարմանքը, երբ աշնանը մի օր նա եկաւ այն քաղաքը, ուր ես էի, և սկսեց թախանձել որ նորից միանանք: Օօ, պէտք է տեսնէիր, թէ նա ինչպէս էր փոխուել նա մեղայ եկաւ իմ առջև: Նա խոստովանուեց իր բոլոր տգեղ վարմունքները, իրա կոպտութիւնները իմ վերաբերմամբ և երդուեց այլևս չվշտացնել ինձ հործով: Իչ խօսքով:

Եւ եօ՛ միամիտս թէկ հաւատացի, բայց և այնպէս չընդունեցի նրա առաջարկը:

Նա նորից աղերսեց, նորից երդուեց, որ ինձ կը պաշտէ սրբի պէս:

Ասում են՝ սովորութիւնը երկրորդ բնոյթ է: Ինձ համար նա եղել է առաջինը, և ես կարծում եմ նոյնն է նաև ամենքի համար: Սակայն լանջ ես, որ գերասանը կարողանայ կամաւորապէս թողնել բհմը երկար տարիներ նրա մթնոլորտը շնչելուց յետոյ: Լանջ ես, որ արբշիոը բարոյական ոյժ ունենայ ինքնաբերաբար հրաժարուել ալքօհօլից: Ես կարծում էի թէ բաժանուելով ամուսնուցս, յաւիտեան կը մոռանայի նրա գոյութիւնը: Աւազ, ես մոլորուած էի: Բաւական եղաւ, որ նա երկար մեր քաղաքում, և ես արդէն անհանգստութիւն զգացի: Կարծես նա չէք եղել իմ անհուն տանջանքների անսպառ աղբիւը:

Եւ ես նորից վերադարձայ այն գեհենը, որից փախել էի այնպիսի գարշանքով:

Գեղանն առաջարկեց ինձ գնալ արտասահման՝ գքիչ հանգստանալու, քիչ բժշկուելու և միքիչ էլ զուարձանալու:

Մենք ուղևորուեցիք Վիեննա, ուր մնացինք ընդումենը մի շաբաթ: Հայրենիքից հեռանալիս ամուսինս չթողեց որ հագուստեղին վերցնեմ, ասելով թէ Եւրոպայում կարելի է նորերը պատուիրել: Իսկ երբ Վիեննայում կամեցայ մի-երկու ձեռք հագուստ պատուիրել, հակառակից, ասելով թէ Փարիզում աւելի լաւ և աւելի էժան են կարում: Դնացինք Փարիզ, ուր մնացինք երեք ամիս և սակայն ես մնացել էի ճանապարհի հագուստովս, որպինետև նա այնտեղ ևս արգելից ինձ փող ծախսելու:

Այդ մարդու ժամանութիւնն այնտեղը հասաւ, որ չթողեց գոնէ մի նոր ու տաք վերաբեր գնեմ և ես ստիպուած էի հնով դուրս գալ փողոց:

—Պարոն,—ասաց մի օր մի ռուս ժեներալի կին, որ նոյն հիւրանոցումն էր իջևանել, ուր մենք,—ինչու էք թոյլ տալիս, որ ձեր ամուսինը վաս հագնուի:

Ամուսինս ոչինչ չկարողացաւ պատասխանել, այլ միայն ստեց ասելով՝

—Նա Վիհնայում կը պատուիրէ այնքան հագուստ, որքան կամենայ. այնտեղ աւելի լաւ ու ճաշակով են կարում:

—Է՛ս, պարոն,—նկատեց ռուս տիկինը,—ինչպէս երեւում է, դուք այնտեղ էլ չէք պատուիրիլ: Ժլատ էք, պարոն: Տեսէք ինձ. ոչ իմ ամուսինն է ձեզ չափ հարուստ և ոչ ես ձեր ամուսնու չափ երիտասարդ, բայցևայնպէս դարձեալ հագնվում եմ շքեղ, ի-հարկէ կարողութեանս ներածին չափ: Գեղեցիկ կին ունեցողը գեղեցիկ էլ պիտի հազցնէ նրան:

Տիկնոջ հեռանալուց յետոյ ասացի.

—Տեսնո՞ւմ ես, Գեղան. Թէև տիմինը բոլորովին անծանօթ է մեզ, սակայն նա էլ է տեսնում, որ դու անչափ ժլատ ես և վատ բնաւորութեան տէր: Պարզ է որ տիկինը կարծում է թէ ես մի չուննորի աղջիկ եմ. բայց եթէ նա իմանար որ ես սեպհական դրամագլուխ ունիմ և հագնելիքներիս համար դու կոպէկ իսկ չես ծախսում ու չես ծախսելու, որ դու խարէութեամբ ես բերել ինձ այստեղ ու թոյլ չես տալիս որ գոնէ անհրաժեշտ շորեղէններս առնեմ, որովհետեւ դրանց տալիք փողերը քեզ հարկաւոր են, տիկինը աւելի խստութեամբ կը նախատէր քեզ...

Ծախսելը ամուսնուս համար հաւասար էր տանջուելուն, բայց ոչ թէ իրա սեպհականը, այլև իմը ինձ համար: Ես կարիք չունէի նրա դրամին, որով ես երբէք չեմ օգտուել: Բայց նա ժլատ էր ոչ-միայն իրա, աւելի խստութեամբ կը նախատէր քեզ...

այլև իմ ունեցածի վերաբերմամբ, որովհետեւ իմն էլ իրանն էր համարում:

Ինձ հետ մի տեղ գնալիս կամ բույլվարներում զբունելիս միշտ միքանի բայց ինձանից առաջ էր վաշզում: Քանի-քանի անգամ յանդիմանել եմ այդ բանի համար, բայց նա չէր հասկանում, կամ ուշադրութիւն չէր դարձնում:

Եւ ահա մի անգամ Փարիզի բազմամարդ փողոցներից մէկում՝ խուռն ամբոխի մէջ նրան կորցրի: Շատ դէսուղէն նայելով, երբ չգտայ, վճռեցի մենակ վերադառնալ հիւրանոց: Շանապարհս կորցրի, մոլորուեցի: Այն-ժամանակ ես միանգամայն անծանօթ էի Փարիզին:

Երկար թափառեցի դէսուղէն՝ տխուր, մտամոլոր: Հարկաւ, կարող էի կառք վերցնել, բայց մօտս դրամ չկար: Վերջապէս, յոզնած, ուժասպառ նստեցի առաջին պատահած ֆիակը և ասացի մեր հիւրանոցի հասցէն: Երբ տեղ հասանք, ինդրեցի հիւրանոցի կառավարչին՝ վճարել կառապանին:

Ի՞նչ ես կարծում, սիրելիս, ամուսինս ներողութիւն ինդրեց իրա անքաղաքավարութեան համար, կամ զջմաց: Ամեննեին: Ընդհակառակը՝ նա ինձ նախատեց և գոռաց ըստ իրա սովորութեան: Այն, այդ մարդը միշտ՝ գորգոռոցներով էր իւլացնում իրա խղճի ձայնը, եթէ միայն նրա մէջ խիղճ էր մնացել իմ վերաբերմամբ:

Բայց այս բոլորը ոչինչ է այն դառն կսկիծի համեմատ, որ ունեցայ մի դժբաղդ առաւօտ:

Նամակաբերը միքանի նամակ բերաւ. դրանց մէջ մէկը գրաւեց իմ առանձին ուշադրութիւնը:

Ամուսինս տանն էր:

Ես չկարողացայ հետաքրքրութիւնս զսպել, բայց

արի որ կարդամ: Բայց նախ նայեցի ստորագրութեանը. «Քո Ռահիսա»...: Դա այն հրէայ վարժուհին էր, որի հետ պարոնս մտերիմ յարաբերութիւնների մէջ էր:

Ես զգուանքով շպրտեցի նամակը նրա երեսին, միքանի անգամ կրկնելով.

—Անամօթ, անամօթ...

Տեղի ունեցաւ մի փոթորկալի տեսարան:

Նա կատաղեց: Նա՝ որ ոտքից մինչև գլուխ յանցաւոր էր իմ առաջ: Նա՝ որ ինձ դաւաճանել էր մի այլանդակ հրէուհու համար, որ ինքն իրան վաճառքի շուկայ էր գուրս բերել, այդ մարդը դեռ խանդուում էր ինձ: Եւ խանդուում էր առանց որևէ պատճառի, ամենագուեհիկ ձնով:

Առաջ բերեմ միքանի փաստեր նրա անսահման խանդուութիւնից:

Ամուսնութեանս առաջին տարիները Սալ—ում մի հարուստ կալուածատէր թուրք, որի երեսն անգամ չէ տեսել, հրապուրուել էր իմ արտաքինով: Մի օր պարոնս վերցրեց ատրճանակն ու գնաց նրան սպանելու: Բարեխաղդաբար, մարդիկ կարողացան նրան զսպել:

Մի ուրիշ անգամ եկ—ում, ուր նա բանկի կառավարիչ էր, մի օր տուն եմ վերադառնում և մեր սեղանատանը, սականում և ընդունարանում գքտնում: Եմ ծաղիկների փնջեր. իսկ նա կրակ կտրած գնում-զալիս էր սենեակի մէջ: Գիտենալով որ ժլատութիւնից նա փող չէր ծախսիլ ու այդքան ծաղիկ գնիլ, հարցըրի.

—Ո՞րտեղից են այս ծաղիկները, նա բարկացած պատասխանից:

—Քո ջերմ երկրպագուներից մէկն է ուղարկել:

—Ո՞վ է արդեօք իմ այդ ջերմ երկրպագուն,— Հարցըրի զարմացած...

Դուրս եկաւ որ դա իրա բարեկամներից մէկն է, որին հազիւ եղկու անգամ պատահած լինէի իրա ներկայութեամբ:

Նա չէր ուզում ըմբռնել, աւելի ճիշտը՝ նրա բարոյական կարողութիւնից շատ վեր էր ըմբռնելը, “որ ոչ-միայն ամուսնութեան առագաստի դէմ մեղանչելը, այլ սոսկ խարէութիւնն անգամ հակառակ է իմ խառնուածքին”:

Է

Մուսաստան վերադառնալիս Վիեննայում պարոնս բարեհաճեց գնել ինձ համար մի վերարկու, երբ այլևս հարկաւոր չէր, և մի ձեռք հագուստ:

Դէպքից օգտուելով դիմեցի Վիեննայի նշանաւոր բժիշներից մէկին: Բարեխաղդաբար նա լուրջ բան չգտաւ, բացի արեան սակաւութիւնից: Այնուամենայնիւ դարմանուել հարկաւոր էր, բայց այստեղ ևս ամուսնուս առասպելական ժլատութիւնը ցոյց տուաւ իր ահոելի կերպարանքը:

Նա ասաց.

—Այստեղ բժիշները շատ թանգ են վերցնում, դու կը բժկուես Պետերուբում:

Մեր վերադարձից միքանի ամիս անցած, ամուսինս հրաւիրուեց Ար—իր Առևտրական բանկի կառավարիչ:

Ես ուրախ էի որ հեռու պէտք է լինինք նրա եղբայրներից:

Բայց այստեղ ևս մեզ հանգիստ չթողեցին եղբայրները. նրանք շարունակ ոմբակոծում էին Գեղանին իրանց աղերսալի նամակներով:

Մէկն իրա որդու ուսման վարձն էր պահանջում կամ աղջկայ համար օժիտ, միւսը խանութ էր ուզում բաց անել, ևայլն, ևայլն:

Մեր բնակարանը քաղաքում բաղկացած էր միայն երեք անշուրք՝ սենեակներից, որովհետև Գեղանը՝ թանգութեան պատճառով՝ եղած մեծ, լաւ ու յարմար բնակարաններից ոչ մէկը չվարձեց։ Մեր վարձած բնակարանը՝ բացի փոքր ու շատ անյարմար լինելուց, այլև այն պակասութիւնն ունէր, որ վատ փողոցի վրայ էր. օրական միքանի հատ մեռել էին տանում թաղելու։ Մի օր դիմեցի Գեղանին։

—Գունէ տեղափոխուենք մի այլ փողոց. ծանօթներ չունինք, լոկ մարդկային դէմքեր տեսնելուց էլ եմ զրկուած, որովհետև յաճախակի յուղարկաւորութիւնները վրաս շատ վատ են ազդում, չեմ կարողանում լուսամտին մօտենալ։

Սակայն պարոնս ձևացնելով թէ ասածս չլսեց, դուրս գնաց տանից։ Առնասարակ նա միշտ ծանրականջ էր ձևանում կամ սուտ չհասկանալու դընում, երբ խօսակցութիւնը սրտովը չէր լինում կամ աննպաստ էր իրա համար։

Այստեղ ևս նա՝ իր մշտական սովորութեամբ խորշեց հասարակութիւնից։ Մենք ոչ մի տեղ չեինք գնում, հարկաւ մեղ մօտ էլ ոչ ոք չէր գալիս, բացի բանկի հաշուապահ Ալեքսանդր Լեկանովից։ Դա մի շատ համեստ և պարկեցտ երիտասարդ էր, որ ամենքի վրայ հաճելի տպաւորութիւն էր անում իր մաքուր բնաւորութեամբ։

Ամուսինս նրան յարգում էր ու սիրում ոչ-միայն իրքն շնորհնակ և բարեխիղճ պաշտօնեայի, այլև իրքն արժանաւոր մարդու։

Գեղանը յաճախ բանկի գրածերով գնում էր ուշը տեղեր։ Այդ միջոցներին միակ պահանջը, որին վստահանում էի ընդունել, դարձեալ Լեկանովն էր։

Մի օր նա գալով յայտնեց, թէ մի ինչ-որ

եկուոր դրամատիկական խումբ երեկոյեան մի շատ հետաքրքրական պիէս է ներկայացնելու։

Պէտք է ասած, որ ես շատ էլ կուշտ չէի թատրոնից. որովհետև ամուսինս իսկի սէր չունէր դէպի թատրոնը, իսկ ես անկարող էի առանց նրան որնէ տեղ գնալ։

Խնդրեցի Լեկանովին ինձ ընկերանալ թատրոն գնալու։ Նա ուրախութեամբ համաձայնեց և մենք գընացինք։

Պիէսն ինձ անծանօթ էր տակաւին։ Այդ իրաէնի Նօրան էր, որի մէջ այնքան գեղեցիկ ու ճիշտ կերպով նկարագրուած է առօրեայ կեանքի տափակութիւնից տառապող կնոջ հոգեկան աշխարհը։

Երրորդ խաղամիջոցին ֆոյէյում յանկարծ լսեցի ամուսնու ձայնը մօտիկից։

Երեսաց, որ ճամբորգութիւնից վերադառնալով, երբ խոհարարից տեղեկանում է, թէ թատրոնումն եմ, շտապում է այնտեղ առանց հագուստն անգամ փոխելու։

Երբ մօտեցաւ ինձ. նրա աչքերի մէջ չարութիւն կարգացի։

Վերադարձանք տուն, ուր մի այնպիսի տեսարան սկսուեց, որ ես անիծեցի թատրոնն էլ, պիէսն էլ, Լեկանովին էլ, ինձ էլ։

—Դու ինչպէս համարձակուեցիր առանց ինձ թատրոն գնալ։ —գոռաց նա։

—Ես մինչև այսօր չեմ կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ չի կարելի, որ առանց քեզ մի տեղ գնամ։

—Ես այդ չեմ սիրում։

—Դու շատ քան չես սիրում, մի՛թէ ես պէտք է քո կամքի ստրուկը լինիմ մինչև իմ կեանքի վերջը։ Մի՛թէ ես չպիտի ունենամ գոնէ իմ անմեղ ցանկու։

թիւնները, իմ ճաշակը, իմ պահանջները: Ասա, խընդ-
րեմ, ի՞նչ անէ մի կին, որի ամուսինը ոչ մի տեղ չի
տանում նրան, բաւական չէ, այլև չի կամենում
կարգին ընտանիքների հետ բարեկամական կատ պահ-
պանել: Ես հօ չեմ կարող շարունակ բանտարկուած
մնալ: Զէ-որ ես դեռ երիտասարդ եմ, ապրելու փա-
փաղը վառ է իմ մէջ. կամեցայ թատրոն գնալ ու
գնացի, ի՞նչ յանցանք կայ սրանում:

—Օտար տղամարդու հետ:

—Միթէ ուրիշ կանայք չեն գնում թատրոն ի-
րանց ծանօթների հետ:

—Ուրիշ կանայք լիրը են:

—Ամաչիր դիպլոմիցդ, Գեղան. չէ-որ նա քեզ
պարտաւորեցնում է յարգել կանանց:

—Ռչ մի դիպլօմ չի կարող ինձ համոզել, որ կի-
նը կարող է անել իրա կամեցածը: Բայց բաւական է,
այդ Լեկանովի համար այսուհետև իմ տան դռները
փակ են:

—Օ՞, ճանաչում եմ քեզ, ճանաչում եմ,—գո-
չեցի ես մինչև հոգոյս խորքը վրդովուած.—քո խան-
դոտութիւնը չափ ու սահման չունի: Դու ինձ խան-
դոտում ես ոչ-միայն կենդան մարդկանց, այլև մեռած-
ների վերաբերմամբ: Ցիշում ես այն լեհացուն, երբ
դեռ միայն նշանած էի: Ի՞նչ էր արել այն խեղճը:
Ոչինչ: Այլ միայն մաքուր սրտով հետամուտ էր եղել
ինձ մի ժամանակ, երբ օրիորդ էի, այն էլ՝ ձեռքս
խնդրելու մաքուր նպատակով: Մի օր ես կարդացի
նրա յանկարծահաս մահուան լուրը լրագրում և ար-
տայայտեցի ցաւակցութիւնս՝ իրը մի զգայուն մար-
դու Բայց դու գոռացիր վրաս, դու չկարողացար այդ
տիւտը բոլցին անգամ քո մարդկային բարձրութեան
վրայ մնալ...

Այդ օրից ես այլես չտեսայ Լեկանովի երեսը:
Այսպիսով մեր տունը գրկուեց իր միակ և վերջին
այցելուից:

Այն քաղաքում, ուր մենք ապրում էինք, ամառն
անհնարին էր մնալ՝ ցերեկուայ անտանելի շո-
քից, գիշերուայ խոնաւութիւնից ու մոծակներից,
ուստի գնացի հանգային ջրերը:

Երբ հանքային ջրերից վերադարձայ, ամուսնուս
տեղափոխեցին եկ—ը: Այդ քաղաքը՝ բնակիչների
անբարոյականութեան կողմից կովկասի քաղաքներից
առաջինն է, ասում էին. սակայն ամեն օր աւելի ու
աւելի էի համոզվում որ այդ քաղաքում ամուսնուց
աւելի անբարոյական մարդ չկայ. որովհետև ոչ մի
պատուազգաց մարդ իրան թոյլ չէր տալ ուշադրութիւն
իսկ գարձնել այն կանանց վրայ, որոնց հետամտելը
շատ սովորական բան էր ամուսնուս համար այն
աստիճան, որ թվում էր թէ այդ մարդը իսպառ զուրկ
է՝ ամօթի զգացմունքից:

Իսկ թէ ճիշտ է այդ, զրա ապացոյցը այն՝ որ
նոյնիսկ բարոյական լաւ համբաւ չունեցող Եկատերի-
նոդարցիք անգամ՝ Գեղանի վերին աստիճանի անբա-
րոյականութեան համար, նըան Արդուլ-Համբիդ են ասում,
և նա աւելի յայտնի է այդ մարդկերպ գաղանի անու-
նով, քան իրա իսկական անունով:

Այն տունը, ուր մենք բնակվում էինք, կառու-
ցուած էր ցամաքացրած ճահճի վրայ, այդտեղ ամառը
բացի սաստիկ խոնաւ լինելուց, ցերեկն էլ շոքն էր տան-
ջում, իսկ գիշերը մոծակներն էին անհանգիստ անում.
Հնայելով որ մենք կենում էինք՝ երկրորդ յարկում:
Ամենքը խորհներդ էին տալիս դուրս գալ այստեղից:
Սակայն Գեղանի ժլատութիւնն այստեղ ևս խոչընդու

եղաւ։ Բանն այն է որ տունը պատկանում էր բանկին և մենք բնակարանի համար վարձ չէինք տալիս։

Ը

Մէկ օր մի նամակ ընկաւ ձեռքս։
Գեղանի փոքր եղբօր կինն էր գրողը։
Լսիր, սիրելիս, և տես, թէ կինն ինչ ահռելի
տանջանքների է ընդունակ յանուն ընտանիքի։
«Յարգելի եղբայր»։

«Ընդունեցէք մեր բոլորի կողմից սիրալիր բարե-
ներ և նոյնը հաղորդեցէք ձեր յարգելի տիկին Գոհա-
րինէին»։

«Ես ձեզ երբէք չեմ գրել, ուստի անկասկած է որ
զարմանալու էք ներկայ նամակս ստանալով։ Իմ
համբերութեան բաժակը վաղուց է լցուել, ահա ինչու
համարձակուեցի գրել ձեզ։

«Թանկազին եղբայր, ես տանջվում եմ ձեր հա-
րազատ եղբօր ձեռքում։ Տանջվում եմ գիշեր-ցերեկ,
անընդհատ, անսահման։ Իմ տէրը՝ ձեր եղբայրը ան-
վերջ վիրաւորում է ինձ։—Ինչու, կը հարցնէք անշուշտ։
Պատճառը չկայ։ Նա ասում է, թէ իմ ծնողները, բացի
բերածս օժիտից, իբր խոստացել են նրան նաև մի
գումար ու այժմ չեն կատարում իրանց խոստումը։
Երդվում եմ ծնողներիս արևով, որ սուտ է այդ, նրանք
երբէք ոչ մի խոստում չեն արել։

«Ամեն օր ձեր եղբայրը կրկնում է։

—Ի՞նչ, դու չգիտես, որ փողի համար է, որ քեզ
պահում ենք։ Պահանջիր ծնողներիցդ, պահանջիր, և
ես քեզ այլս չեմ ծեծիլ։

«Եւ տամաներկու տարի է շարունակվում է իմ այս
գժոխային կացութիւնը։ տամաներկու տարի է՝ ԱՌ-

ոռւմ եմ. լոռւմ եմ, որպէսզի անարգանքի ու ատե-
լութեան առարկայ չդարձնեմ ձեր գերդաստանը, ձեր
տոհմի անունը։ Ա՞հ, օր չի անցնում, որ չարտասուեմ։
Եւ ինչու։ Միթէ ես եմ մեղաւոր, որ ձեր եղբայրը
բաւականաչափ աշխատանք չունի և ոչ էլ կեանքում
յաջողութիւն։ Ես ինչ իրաւունքով փող պահանջեմ իմ
ծնողներից, քանի-որ նրանք մի անգամ տուել են ինձ
հասանելիքը և վերջացրել։ Միթէ ես մեղաւոր եմ,
որ հայրը իրա զաւակի ուսման վարձը չի կարո-
նում վճարել։

«Ա՞հ, եղէք ներողամիտ, յարգելի եղբայր, նա-
մակս գրում եմ աղի արցունքներ թափելով։

«Խղճացէք ինձ, բարի եղէք, խնայեցէք ոչ ինձ,
այլ ձեր հարազատ եղբօր զաւակին։ Ուղարկեցէք նրա
ուսման վարձը։ Ես անկարող եմ այլս տանել այս
սոսկալի վիճակը։ Ահա երեք տարի է, որ ես անբու-
ժելի հիւանդ եմ։

«Վիշտս շատ է. մարելիք եմ ստացել, այնպէս
որ հինգ օրով ուշքի չեմ զալիս, մնում եմ այնպէս։
իսկ երբ ուշաբերվում եմ, երկար միջոց ինձ կորցրածի
պէս, եմ լինում։

«Օգնեցէք ինձ և ձեր բարի խորհուրդներով։ Ի՞նչ
անեմ, ում դիմեմ, ի՞նչպէս ազատուեմ ձեր եղբօր ան-
վերջ հալածանքներից։

«Ես այդ հալածանքները թաքցրել եմ և թաք-
ցնում եմ հչ-միայն օտարներից, այլև մերոնցից։ Թաք-
ցնում եմ յանուն ձեր գերդաստանի, որի անդամներից
մէկն էլ գուք էք, յարգելի եղբայր։

«Ներողամիտ եղէք, որ ձեզ ձանձրացնում եմ։ Ի՞նչ
արած, ես ուրիշ յոյս չունիմ, բացի ձեր աջակցութիւ-
նից։ Խղճացէք և միթէ մերժիլ այդ ոգնութիւնը։

«Խորին յարգանքով՝ Ձեր հպրա Ն... Ն...».

Ահ, սիրելիս, եթէ աղջիկդ օժիտ ունի, չտաս,
խսկ եթէ տալու լինիս, պահանջիր, որ նա չամուսնա-
նայ աղքատ երիտասարդի հետ։ Թող նա չհաւատայ
տղամարդկանց՝ իդէալների և բարձր գաղափարների
մասին արած գեղեցիկ խոսքերին։

Նրանք նման են այն շինովնիկներին, որոնք
պարծենում են, թէ երբէք կաշառք չեն վերցրել, մո-
ռանալով՝ որ ոչ-ոք իրանց կաշառք չի տուել, որ
կարողանային վերցնել։ Նրանք նման են այն գան-
ձապահներին, որ պարծենում են, թէ չեն գողացել
թաքցնելով՝ որ դրամարդկում գողանալու բան չի եղել։

Նրանք ազնիւ են այնքան ժամանակ, քանի աղքատ
են։ Նրանք գառներ են, երբ ճանկեր չունին, և գայլեր՝
երբ կարող են յօշտել։

Կնոջ նամակից շամ չանցած յայտնուեց մարդը։
Մի առաւտ, տանից դուրս գալու ժամանակ, ես նրան
հանդիպեցի փողոցում, մեր դուների մօտ։ Պարզուեց
որ նա եկել է դարձեալ մուրալու եղբօրից։ Ո՛վ իմա-
նայ, գուցէ հէնց ինքն էր ստիպել կնոշը՝ այն նամակը
գրելու։

Նա ստացաւ ուզածն ու գնաց։

Ճիշտ նոյն օքերին ես կամեցայ ինձ համար նոր
հագուստ պատուիրել հարկաւ իմ փողով, բայց ամու-
սինս թոյլ չտուաւ։

Մենք մի նոր փոթորկալի ընդհարումն ունեցանք։
Եւ զիջողք դարձեալ ես եղայ։ Այն, սիրելիս, ես զիջում
էի, շարաւնակ զիջում։

Նա այնպէս էր գորգոռում, որ փողոցի անցորդ-
ներն անգամ լսում էին։ Նա ցինիքաբար արհամարհում
էր մարդկանց կարծիքը։

Նա քծնում էր զօրաւորներին և հալածում
թոյլերին։

Երբէք չեմ մոռանալ նրա մի վարմունքը, երբ
քաղաքագլուխ էր։

Մի երեկոյ մենք կառքով անցնում էինք քաղա-
քի զիսաւոր փողոցներից մէկով։ Յանկարծ նա հրա-
մայեց կառքը կանգնեցնել։ Բաւական ուշ երեկոյ էր.
լապտեր վառողը, սանդուխի վրայ կանգնած, լամպա-
ըլ սրբում էր որ վառէ։ Դեղանը այնքան խփեց խեղճ
մարդուն, որ ձեռնափայտը կոտրուեց։

Լուսաւորութեան կապալառուն այդ միջոցին ա-
մուսնուս եղբայրն էր, և հէնց նա էր հրամայել լապ-
տերն ուշ վառել, և ուրեմն մեղաւորն ու ծեծի արժա-
նին իրա եղբայրն էր և ոչ թէ խեղճ լապտերա-
վառը։

Բայց պատահեց մի անսպասելի, նոյնիսկ ան-
հաւատալի բան։ այն մարդը՝ որ փախչում էր հասա-
րակութիւնից, թատրոններից, ակումբներից, այդ
մարդը յանկարծ միանգամայն այլակերպուեց։ Նա
սիրեց ընկերական խնճոյքները, զուարճութիւնները,
զբուանքները և դարձաւ ֆոանտ։ Նա պատուիրեց
իրա համար միքանի ձեռք վերջին տարագի հագուստ,
գնեց փայլուն կօշիկներ, մօդային շապիկներ ու փող-
կապներ, ձեռնոցներ, հեռավիտակ, գեղեցիկ ձեռնա-
փայտ, և այլն, և այլն։

Այնուհետև գիշերները վերադառնալով տուն շատ
ուշ, առաւտաներն էլ զարթնում էր շատ ուշ։ Հազնը-
վում էր ծանր ու բարակ, յարդարվում էր հայելու
առջև մի ամբողջ ժամ և յետոյ գնում ծառայութեան։
Վերադառնում էր տուն ժամի երեքին, շտապով ճա-
շում և առանց հանգստանալու, անմիջապէս զուրս էր
գալիս տանից։ Թէ ուր էր գնում և ինչն, չգիտէի։ Զեի
էլ հարցնում։

Այդ արտաքին փափոխութեան, հետ նկատելի էր

և ներքին իւրատեսակ փոփոխութիւն։ Առաջ նա կոպիտ էր, իսկ այժմ վերաբերվում էր դէպի ինձ մի տեսակ հեգնանքով։

Նա ծաղրում էր իմ արտաքինը, —որով մի ժամանակ այնքան հրապուրուած էր —, իմ խելքը, սիրտը, հոգին, որոնք իրանց հաւասարը չունէին նրա կարծիքով։

Նա ծաղրում էր ինձ ոչ-միայն երբ մինակ էինք, այլև ուրիշների ներկայութեամբ, այլև իմ բացակայութեամբ։ Նրա իւրաքանչիւր խօսքից, իւրաքանչիւր ձեից ու շարժումից ես զգում էի, որ նա ինձ իրան անրժան է համարում, և այդ անում էր այն մարդը՝ որ մի ժամանակ սողում էր իմ ոտների տակ։

Ամենքի մօտ պարծենում էր իրա հարստութեամբ, դիրքով. սակայն ում շնորհիւ էր այդ ամենը։ Օտար քաղաքում ոչ-ոք չէր ճանաչում իմ ծնողներին, ոչ-ոք չգիտէր իրա անցեալը, ուստի բնական է, որ ամենքը պիտի հաւատային իրան, ինչ որ էլ ասէր։ Իսկ ես յիմարս, դրդուած պատուասիրութիւնից ու ամօթխածութիւնից, լուսւմ էի և տանջվում։

Այժմ ես մենակ էի աւելի քան երեսէ։ Մենակ, որպէս անտէր, անօգնական մի որբ օտար շրջանում։ Ոչ մի տեղ չէի լինում, որովհետև ոչ մի տեղ չէր բարեհածում տանել, իսկ ես ոչ մի տեղ իրաւունք չունէի գնալու առանց նրան կամ առանց նրա հրամանի։

Կողմնակի լսում էի, որ ուսանց հարցին՝ թէ ինչո՞ւ է առանց ինձ երեսում հասարակութեան մէջ, նա պատասխանում է։

—Որովհետև կինս ներվային հիւանդ է, չի կարողանում հասարակութիւն տեսնել։

—Հապա ինչո՞ւ չէք բժշկել տալիս։

—Ախ, միք ասիլ, —պատասխանում է ստախօսը խղճի ամենայն անդորրութեամբ, —նա մի կատարեալ

գժրազգութիւն է ինձ համար. յամառում է, բժշկուել չի ուզում, չնայելով իմ անվերջ աղերսանքներին։

Եւ մարդիկ հաւատում էին նրան, և ես ներկայանում էի նրանց այնպիսի մի կին, որ թունաւորում է ամուսնու —իրա պաշտպանի, հովանաւորի ու կերակրողի գոյութիւնը։

Մի օր Գեղանն ինձ ծանօթացրեց իրա բարեկամ մի ծառայողի և նրա կնոջ հետ, որ երաժշտութեան ուսուցչունի էր։

Նրանց ազգանունն էր Տարատինով։

—Ի՞նչ հիանալի ամուսին ունիք, —ասաց ինձ մի օր տիկին Տարատինովան։ —Նա ձեզ սիրում է անհունապէս։ Քանի՛քանի անգամ նա իմ ներկայութեամբ երգուել է, թէ կհանքը չի խնայիլ ձեզ համար։

—Իրմաւ, —ասացի ես անտարբեր, լաւ հասկանալով այդ տեսակ երգումների արժէքը։

—Այն, այն, նա պաշտում է ձեզ։ Բայց ասացէք ինսդրիմ, ինչո՞ւ չէք ուզում բժշկուել ներվային հիւանդութիւնից։ Ինչո՞ւ չէք խնայում ձեր բարի և հոգատար ամուսնուն։

Այլևս չիմացայ այդ անամօթ միստիֆիկացիային. այդ անպատկառ կեղծիքը բորբոքեց իմ հոգին և ես նկարագրեցի ամուսնուն բնաւորութիւնն այնպէս, ինչպէս որ էր իրապէս։ Նկարագրեցի նրա վերաբերմունքը դէպի ինձ։ Բայց ոչ բոլորը, ոչ բոլորը, սիրելիս, վասնզի պատուասիրութեան զգացմունքը ստիպեց ինձ շատ բան թաքցնել։

—Այդպէս, համարական Տարատինովան ինձ լսելուց յետոյ. —ահա թէ ինչ։ Այն, այն, դրուար է ճանաչել տղամարդկանց նրանց վարած արտաքին կեանքից։

Մի օր ամուսինս ինքնաբերաբար խոստացաւ ինձ համար մի նոր հագուստ պատուիրել:

— Ենորհակալ եմ, սիրելիս, — ասացի ես հեգնորէն. — այդ մի մեծ վեհանձնութիւն է քո կողմից: Բայց ես վախենում եմ, որ իմ ճաշակը մի փոքր թանգարժենայ քեզ:

— Փոյթ չէ, թող թանգ արժենայ:

Մենք միասին գնացինք դերձակունու մօտ: Ես ջոկեցի մի ընտիր ու թանգ կտոր: Տասն օրից յետոյ հագուստս ստացայ, նրա հետ նաև հաշիւը: Պէտք էր վճարել ընդամենը 125 ռուբլի:

Գեղանը սարսափեց, երբ նայեց հաշուին: Նա գրանից հանեց 50 ռուբլի և, դնելով սեղանի վրայ, ասաց:

— Ես միայն այսքանը կարող եմ տալ, մնացեալի մասին ինքդ հոգա...

Եւ այսպէս՝ նրա առաջին և վերջին, նրա միակ նուէրն էլ իմ փողով եղաւ:

Գեղանը՝ թէ իր անտանելի ժլատութեան պատճառով և թէ հետո կովտաբար վարուելու համար, խոհարարուու աշքում խսկ իրա համարումը կորցրել էր մինչ այն աստիճան, որ մի օր ուղղակի ամուսնուս երեսին ասաց դառն հեգնութեամբ.

— Ես այս տան մէջ աւելի շատ իրաւունք ունիմ, քան ձեր ամուսինը:

Գեղանը ոչինչ չպատասխանեց, անշուշտ երկիւղ կրելով առ եթէ պատասխան տար, խոհարարուհին՝ էլ աւելի խիստ ու դառը խօսքեր կ'ասէր, և լուռ դուրս գնաց տանից:

¶

Վերջին ժամանակները սկսեցի այցելել օպերային թատրոն և ակումբը, ոչ յաճախ, այլ երբեմն-երբեմն: Դիտէի, որ այդ բանը հաճելի չէ ամուսնուս, բայց այնպէս այցելում էի, հարկաւ ոչ մենակ:

Ներս էինք մտնում թատրոն կամ ակումբ թէ չէ, ֆեղանն անմիջապէս ինձ թողնում էր մենակ և գնում ուրիշ կանանց հետ զրոյցի բոնվում:

Մի անգամ նա գնաց կարմիր մագերով մի հաստ կնոջ մօտ, որ մինչև նրա գնալը՝ մէնումենակ կանգնել էր ու շանթալի հայեացքներ էր գցում շուրջը:

— Ո՞վ էր այդ կինը, — հարցրի մի ժամ անցած, երբ բարեհաճեց ինձ մօտ գալ:

— Բարոնուհի Միլհառուգէնը, — պատասխանեց մի առանձին պարծանքով. — Պիտերբուրգում ահազին կապեր ունի. շատ հարուստ կին է:

— Բայց դու, դժւ ինչ կապ ունիս նրա հետ:

— Ուղում հմ նրա միջոցով Մայկօպում նաւթարեր հողիր վերցնել կապարով:

— Զարմանալի է, — ասացի ես հեգնորէն, — որ ամբողջ երեկոյ այս ահազին բազմութեան մէջ ոչ-ոք չմօտեցաւ այդ ահազին կապեր ունեցող բարոնուհուն բացի քեզանից....

Մի շաբաթ անցած մենք դարձեալ օպերայումն էինք: Այստեղից գնացինք կլուր ընթրելու: Հազիւ սեղան էինք նստել միը մի ծանօթի հետ, երբ յայտնուեց բարոնուհի Միլհառուգէնը:

— Գոհարինէ, — դիմից ինձ ամուսինս, — ուզում հմ բարոնուհուն էլ հրաւիրել:

Մեզ մօտ նստած պարոնը վրդովուեց:

— Եթէ այդ կնոջը հրաւիրէք, — ասաց նա, — ես

տիկին Գոհարինէին կը խնդրիմ, որ հետանայ այս-
տեղից:

—Ինչու, —հարցըրի:

—Զգիտեմ բարոնուհի է թէ կոմսուհի, —պատաս-
խանեց մեր սեղանակիցը, —գիտեմ միայն, որ ոչ մի
պատուաւոր կին չի կարող սեղան նստել մի այդպիսի
արարածի հետ:

Գեղանը շփոթուեց ու լոեց:

Մի ուրիշ երեկոյ դրամատիկական թատրոնումն
էինք. «Բարոնուհին» եկաւ և նստեց մեր կողքին:

Ես զայրոյթից սկսեցի դողալ: Հէնց-որ զործողու-
թիւնը վերջացաւ, ևս Գեղանին խնդրեցի տեղներս
փոխել կամ առն գնալ:

Նա չկամեցաւ: Ես՝ յուզմունքիցս շրթունքներս
կրծոտելով, զսպեցի ինձ մինչև ներկայացման վերջը:

«Բարոնուհին» նայում էր ինձ գրգորչ հայեց-
քով: Պարզ երեւում էր որ պատրաստվում էր որևէ վի-
րաւորանք հասցնել ինձ:

Բայց ես կանխեցի նրան:

—Զէիր կարող աւելի վայելուչ սիրուհի ընտրել
քեզ համար, —ասացի ես ամուսնուս այնչափ բարձր,
որչափ հարկաւոր էր, որպէսզի «Բարոնուհին» լսէ:

—Լիբր, —գոչեց նա. —դու իրաւունք չունիս վի-
րաւորելու մի պատուաւոր կնոջ:

—Լիբր է քո այդ պատուաւոր կինը, լիբր, —
արտասանեցի ես միանգամայն կորցնելով ինքս ինձ:

Փեղանը կարմրեց, կապեց և ոտքի ելաւ:

—Ես քեզ հետ տանը կը խօսեմ, —ասաց նա խեղ-
դուած ձայնով ու դուրս գնաց:

Ես մնացի մենակ: Դրութիւնս անտանելի էր:

—Հօրաքոյր, մի յուզուիր, բան չկայ, գնանք, —
լսեցի իմ գլխի վրայ մի անուշ ձայն:

Յետ նայեցի: Եղբօրս որդին էր. տասն'ութ տա-
րեկան մի հեզ, պարկեցաւ պատանի, որին աիրում էի
կեանքիցս աւելի: Նա կամեցաւ ինչ-որ ասել՝ ինձ
միսիթարելու համար, բայց պատանեկան բուռն զգա-
ցումները չթողին: Նրա մեղուշ աչքերի մէջ արցունք
նշմարեցի:

Տուն գնալով, ննջարանս գտայ տակն ու վրայ
եղած. ամուսինս մեր անկողնակալները հեռացըրել էր
միմեանցից, իսկ իմ բարձերն ու վերմակը շպրտել
դէսուդէն:

Տեսնելով ինձ, ինչպէս կատաղի գաղան յարձա-
կուեց վրաս և... ապտակեց:

—Ցաւում եմ, —գոռաց նա, —որ այս ապտակը
չտուի քեզ թատրոնում, ամբողջ հասարակութեան
առաջ:

—Դու աւելի սուր ապտակ տուիր ինձ այնտեղ:
Դու ոչ-միայն քո ամուսնու, այլև քո իսկ պատիւը
վայր գցեցիր՝ մի պոռնիկ կնոջ նստեցնելով ինձ հետ
կողք կողքի: Ահ, անասնական կրքերը այնքան են
կուրացըրել քեզ, որ այլես ոչ մի սրբութիւն գոյութիւն
չունի քեզ համար: Դու ոչինչ չես տեսնում, ոչինչ չես
լսում և ոչ իսկ քո իղճի ձայնը: Ահա թէ ում մօտ
ես կորչում գիշերները մինչև լոյս և ցերեկները մինչև
երեկոյ: Ահա թէ ում համար ես տանում այն նուէր-
ները: Այսքան տարի ես չկարողացայ յաղթել քո
ահասպելական ժլատութեանը, այդ պոռնիկը կարողա-
ցաւ... Այս, այս, դու չես կարող հերքել, քո փողերով
են գնուած նրա շքեղ հագուստները, նրա ակնեղէն-
ները, նրա թանկագին զլխարկն ու կօշիկները... Ամբողջ
քաղաքն է խօսում այդ մասին: Եւ ամենքը ես ծաղ-
րում են քեզ, ամենքը ես զգվում ու խոյս են տալիս
քեզանից ինչպէս բարոյական ժանտախտից: Ախտամնը,

ահա թէ ինչու չէիր ուզում ինձ հետ պատռաւոր ընտանիքներ այցելել: Նայիր հայելու մէջ մի՞թէ չես ամաչում անժամանակ քո ձերմակած մազերից, քո կորացած մէջքից, քո գէմքի կնճիռներից: Գնա, հեռացիր աչքիցս, գնա քո սիրունու մօտ, վայելիք նրա վաճառքի հանուած փաղաքշանքները, վայելիք ամենայն ազատութեամբ, ամենայն իրաւամբ. վասնզի նա է քո ընկերը և ոչ ես, նա է քեզ արժանի և ոչ ես: Բաւական է որքան շահագործեցիր ինձ անասնաբար: Ել ի՞նչ ես ուզում ինձանից, էլ ի՞նչ կարող եմ տալ քեզ: Այլես ոչինչ չմնաց իմ մէջ, ոչինչ: Գնա, հեռացիր, թնդ ինձ մենակ, անտէր, անպաշտպան. թնդ Աստուած ի՞նքն անէ քո գատաստանը....:

Երեկոյ էր Մենք թատրոնի դաների մօտ ենք: Ամուսինս մօտեցել էր կասսային տոմսակ գնելու: Ես հեռում կանգնած սպասում էի նրան: Սանդուխների վրայ կանգնած էր՝ մի նիհար, շիկածեր, ոսկրոտ դէմքով ու փոքրիկ, խորն ընկած աչքերով կին.

Երբորդական բալերինաներից մէկն էր, գեղարուեստի ամենաողորմելի տականքից:

Մի սպայ անցաւ այդ կնոջ մօտով և անփոյթ ձևով հարցրեց.

—Որսի՞ էք սպասում:

Բալերինան բարկացաւ և երեսը մի կողմը դարձեց: Վերջապէս Գեղանը գնեց տոմսակներն ու եկաւ և, ըստ իր ասիական սովորութեան, ինձ յետ թողեց ու ինքն առաջ վազեց: Բայց նկատելով բալերինային, յանկած կանգ առաւ, թողեց որ ես առաջ գնամ՝ իբր թէ քաղաքավարութիւնից զրդուած:

Բարձրանալով սանդխով, յետ նայեցի և ինչ տեսայ. կոպիտ ասիացին թիքուել և համբուրում էր բալերինայի ձեռքը. այն կնոջ՝ որ «որսի էք սպասում»:

Տեղական ակմբում շարաթը մի անգամ դիմականդէսներ էին լինում: Նրանց սովորական յաճախորդներն էին աղախիններ, խոհարար ու խոհարարուհիներ, սպասաւոր ու դայենակներ, կարանող ու լուացը-անող կանայք:

Պարում էին, թռչկոտում, բարձրաձայն խօսում, շատ անգամ էլ տափակ ու ցինիկ զուարձախօսութիւններ անում: Վերջը կանայք՝ մի-մի «կավալէրի» թեր մտած, գնում էին սեղանատուն ընթրելու:

«Կավալէրներն» իրանց «դամաներին» սովորաբար հիւրասիրում էին... խորովածով:

Մի օր հետաքրքրուեցի տեսնելու այդ գիմականդէսներից մէկը, հարկաւ ամուսնուս սիրած մթնոլորտին ծանօթանալու նպատակով: Ամուսինս թէն տարաւ ինձ, բայց, կարծում եմ, չափազանց զղաց:

Բանն այն է, որ այդ երեկոյ խեղճ մարդը իր սքանչելի բալերինայից բարոյական հարուած ստացաւ իմ ներկայութեամբ: Բալերինան նստած էր սեղանատանը մի երիտասարդի հետ: Ըսթրում էին և զուարթ զուարթ խօսում:

Ամուսինս բարեկեց նրան զլխով, պատասխան չստացաւ, երկրորդ անգամ բարեկեց, էլի պատասխան չստացաւ, դարձեալ բարեկեց, նոյն անաջողութիւնը: Զայրոյթից սկսեց շանթալից հայեացքներ գցել իրա Դուլցինէայի վրայ. դարձեալ նոյնը:

—Օծ, բարեկամս, —ասացի կէս-մին դառնութեամբ, կէս-մին կատակով, —ծերացել ես, շատ ես ծերացել, այլևս կանայք քեզ վրայ ուշադրութիւն չեն դարձնում....:

Այդիներում, թատրոններում, ակուբներում նա շարունակ համբուրում էր սրա ու նրա ձեռքը: Երբ հարցնում էի՝ ովքեր են այդ կանայք, դուրս էր գա-

լիս որ մէկը նշանաւոր Փաքրիկանտի աղջիկ է, միւսը ժեներալի թոռը, երրորդը մինխատրի քրոջ դուստրը, չորրորդը իշխանուհի, հինգերորդը կոմսուհի կամ բարոնուհի, բոլորն էլ մեծամեծ... գերդաստանների շառաւիդներ:

Եւ ամուսնուս այդ ակնյայտնի սուտն էր, որ ամեն բանից աւելի էր զայրացնում ինձ:

Ծանօթներս ինձ կարեկցում էին, ինչ որ խորապէս վիրաւորում էր ինձ: Շատերն էլ կշտամբում էին ինձ, որ ամուսնուս հասցրած այդ բոլոր հրապարակային վիրաւորանքները տանում եմ հեղութեամբ:

Ոչ-ոք չգիտէր, թէ ինչ սոսկալի դրամա է կատարվում իմ մէջ, որովհետև ոչ-ոքի չէի պատմում իմ կրածները:

Մի օր դիմեցի ամուսնուս.

— Լոիր, ես վարակուելու ցանկութիւն չունիմ, դու...

— Լոիր, — գոչեց նա, ոտը ուժգին յատակին զարկելով և անամօթաբար աւելացրեց. — Ես ապականուած կանաց հետ չեմ կապվում:

— Կը փափագէի իմանալ թէ ինչ կ'ասէիր, եթէ ես անէի գէթ մի հարիւրերորդականը քո արածների:

— Արա դու էլ նոյնը, ինչ որ ես եմ անում:

— Եւ չես ամաչում այդ խօսքերիդ համար:

— Ի՞նչ կայ ամաչելու:

— Եթէ ամեն մի կարգին մարդուն պատիւ չքերող խօսքերիդ համար չես ամաչում, պարզ է ուրեմն որ դու հասարակութիւնից էլ չես քաշվում:

— Եթէ շրջանի մեծաւորը հասարակութիւնից չքաշուելով՝ ապրում է սիրուհու հետ, ես ինչու պէտք է քաշուեմ. Եթէ այդ բանը նրա համար ամօթ չէ, ինձ համար ինչու պէտք է ամօթ լինի:

— Է՞ս, քանի որ դու այդպիսի վայրենի ու այլասեռուած մարդու հասկացողութիւն ունիս բարոյականութեան և պատուոյ մասին, մենք իրար չենք կարող հասկանալ: Նարունակիր վարել քո զեղիս կեանքը, ընդարձակիր քո անառակութիւնների շրջանակը: Բայց գոնէ պատշաճութեան սահմանը բոլորովին ոտնակոխ մի տալ: Մոլութիւնն իրաւունք չունի գլուխը բարձր պահելու: Վերջապէս խիղճ, գոնէ՝ միքիչ խիղճ ունեցիր....

Փ

Մի բան էլ էի նկատում այդ միջոցներին, այն որ ամուսինս անտարբեր չէր դէպի տիկին Տարատինովան ևս: Նա շարունակ յիշում էր նրա անունը մի առանձին քնքշութեամբ. «Եկատերինա Պավլովնան խելօք կին է, կըթուած է, ճաշակով է. Եկատերինա Պավլովնան այս ասաց, այն ասաց....»

Վերջապէս ամուսինս շատ էլ չէր աշխատում թաքցնել իրա զգացմունքները դէպի այդ կինը: Երեկոյթներում ու հանդէսներում յաճախ թողնում էր ինձ մենակ ու անհետանում նրա հետ: Ընթրիքների միջոցին միշտ նրա մօտ էր նստում և ամեն կերպ աշխատուկ էր հաճոյանալ նրան:

Երբ մեզ ճաշի կամ երեկոյթի էին հրաւիրում մի տեղ, Գեղանը միշտ որևէ պատրուակ էր գտնում ինձ հետ կոռուելու, որպէսզի չգնամ ու ինքն աղատ վայելէ սիրուհու ընկերութիւնը:

Տանտիկինների՝ հարցին, թէ ինչու ես իրա հետ չեմ, նա միենոյն պատասխանն էր տալիս.

— Ա'խ, տիկին, ամուսինս ներվային հիւանդ է. նա հասարակութիւնից խոյս է տալիս:

Զգիտեմ նրա խօսքին հաւատացողներ կային թէ
ոչ, բայց համոզուած եմ, որ ով ծանօթ էր իմ կենսա-
լինդ բնաւորութեանը, անշուշտ ծաղրում էր Փեղանին,
իրա հոգու խորքում:

—Ենթադրենք թէ չես ստում, -- ասացի մի
օր, —որ ես իրօք ներքային եմ, բայց միթէ այդ-
պէս են վարվում ներքային կնոջ հետ:

Այս ասելիս դաշնամուր էի նուագում. Գե-
ղանը մօտեցաւ և դաշնամուրի կափարիչը ծածկեց,
ասելով.

—Դադարիր, դու ցաւացնում ես գլուխս:

Տեսնմամ ես, սիրելիս, ես իրաւունք չունէի
նոյնիսկ երաժշտութեամբ զբաղուելու:

Եւ ամեն անգամ երբ ես նուագելիս էի լինում,
գալիս, դաշնամուրը փակում էր ու... բանալին հետը
տանում:

Նոր տարուն պէտք է հանդիպէր կլուբում. Խընդ-
րեցի, որ ինձ էլ տանէ հետը, մերժեց, ասելով.

—Այստեղ ընդունուած չէ որ կանայք կլուբում
հանդիպեն նոր տարուն:

—Գիտեմ, — նկատեցի, — միայն քո կնոջ համար
չի ընդունուած այդ: Լաւ, գնա և վայելիր կեանքը ու-
րիշների հետ:

Եւ մնացի տանը մենակ: Նա վերադարձաւ այն-
տեղից լուսաբացին... հարքած և՝ առանց պատճառի
էլի ձեռք բարձրացրեց վրաս:

Այս, նրա ձեռքը արդէն սովորել էր յաճախ բար-
ձրանալ վրաս:

Այդ օրերին հրէայ վարժուեռ մի նոր նամակը
բերին փոստից:

—Քո Ռախման տիրում է առանց քեզ, — ասացի,
նամակը կարդալուց յետոյ և շաղթեցի սեղանի վրայ:

— Ուրեմն դու դարձեալ բաց ես անում իմ նա-
մակներն ու կարդում:

—Այս, և միշտ պէտք է կարդամ:
Հրէուհին գրում էր.

«Բարեկ, Գեղան.

«Ես ձեզ սպասում էի տօներին: Զեկաք: Ցաւում
եմ: Անգութ ճակատագիր, ինչու մեզ չի վիճակուած
միենոյն քաղաքում ապրել: Կարելի է շուտով չտես-
նուենք, ուստի միքանի խօսք գրեմ իմ մասին: Այժմ
ես դասեր ունիմ տեղիս Առեւրական Դպրոցի վե-
րատիսչի շնորհով և վաստակում եմ ամսական 40
ոռուբլի: Քիչ է, բայց գոհ եմ: Գոհ եմ, որովհետեւ
բոլորովին առողջացել եմ: Ժամանակս տխուր չի անց-
նում: Ինձ հետամուտ են միքանի երիտասարդ պա-
րոններ, բայց ես ոչ-ոքի վրայ ուշադրութիւն չեմ
դարձնում, որովհետեւ ոչ-ոք ինձ չի հետաքրքրում: Ես
յիշում եմ ձեզ և միայն ձեզ: Նախանձում եմ երբ փո-
ղոցներում հանդիպում եմ փոխադարձ սիրով կապուած
զոյգերի: Ես ինքս ամաչում եմ իմ կզացմունքից: Մի-
թէ ձեր Ռախման երիտասարդացաւ: Անցեալ օրն ինձ
մօտ էր ուսուցիչ Պիկուլինը: Սիասին յիշեցինք ձեզ,
ձեր գործունէութիւնը: Բայց բաւական է: Քիչ եմ
գրում այս անգամ:

«Մպասում եմ անհամբեր ձեր նամակին:

«Ձեր Ռախման Ձլատկին»:

— Գմհ ես, — գոչեցի, երբ ամուսինս լուռ կար-
դաց և վերջացրեց հրէուհու նամակը: Դէհ, ահա քեզ
թուղթ ու գորիչ: Քրիր, որքան կամենաս. մի տանջիր
խեղճ հրէուհուդ. մի տանջիր, խեղճ է:

— Լոիիր, բաւական է: Ես այդ հրէուհուվ բնաւ
չեմ հետաքրքրվում և ոչ նրա նամակին կը պատաս-
խանեմ:

Հարկաւ ստեց, որովհետև յետոյ պատասխանեց։ Շատ չանցած՝ ձեռքս ընկաւ հրէուհու ելքրորդ նամակը։ Միքայիլս, դու կարող ես չկարդալ այդ նամակը, բայց ես առաջ պիտի բերեմ ամբողջովին, որովհետև այդ մի առանձին հոգեկան հաճոյք է պատճառում ինձ։

Ահաւասիկ։

«Բարեկ, Գեղան։

«Ստանալով ձեր նամակները, ես մտածեցի, երկար մտածեցի ձեր մասին։ Ես յիշեցի ձեր եռանդուն գործունութիւնը, երբ քաղաքագույն էիք։ Զարմանում եմ, ինչպէս միենոյն անձի մէջ կարող են անբաժան ապրել երկու իրարու հակառակ յատկութիւններ։ Ես միշտ ձեզ երևակայել եմ երկաթեայ կամքի տէր մի մարդ, որին ոչ-միայն առանձին անհատներ, այլև ամբողջ մի հասարակութիւն, ամբողջ մի քաղաք չկարողաւ յաղթել, որից ամենքը վախենում էին և որին, միենոյն ժամանակ, յարգում էին։ Մի մարդ՝ իր արտաքոյ կարգի խելքով ամենքից բարձր, ամենքից զօրեղ և ոչ մի խոչընդոտի առջև, կանգ չառնող։ Եւ ահա այդպիսի մի մարդ կախուած է մի կնոջից այն աստիճան, որ չի կարող ինքն իրան իշխել, չի կարող ունենալ սեպնական ցանկութիւններ և, որ գլխաւորն է, կախուած է մի կնոջից, որ շատ սահմանափակ խելքի տէր է։

«Այս, ինչպէս են այս երկու հակասութիւնները ապրում մի մարդու մէջ։ Զէ-որ նրանք կարող են հաշտուել միայն այն-ժամանակ, երբ փոխադարձ գորեղ սէր կայ։ Դուցէ այդ տարօրինակ երևոյթը կարելի է բացատրել անախորժութիւններից խոյս տալու ցանկութեամբ։ Բայց, հաւատացէք ինձ, կ'ոչնչացնէք մի պատճառ, երևան կը գայ անշուշտ մի ուրիշը։

Զէ-որ ես ինքս եղել եմ միենոյն վիճակում, երբ ապրում էի ամուսնուս հետ։ Երբեմն մարդուս վատ տրամադրութիւնն էր խանգարում, երբեմն նաև չէր կամենում գնալ այստեղ, ուր ես էի կամենում, երբեմն նրան թվում էր, որ մէկի հետ խօսում եմ չափազանց շատ, իսկ միւսի հետ ընդհակառակը՝ չափազանց քիչ։ Մերթ այս, մերթ այն և այսպէս անվերջ։ Սակայն երբ այդ բոլորն ինձ ձանձրացնում էր, այլես ուշադրութիւն չէի դարձնում և վարվում էի այնպէս, ինչպէս որ կամենում էի։ Այս, անախորժութիւններ լինում էին, բայց ես իմ ուզածն էի անում։

«Դուք ասում էք, որ անցեալս չյիշեմ։ ուրեմն դուք ենթադրում էք, թէ ես ցաւում եմ իմ դժոխային շղթաների մասին, կարօտում եմ իմ ամուսնական վաղաքանքներին։ Օօ, ոչ, հազար անգամ ոչ։ Ես միայն այժմ եմ ապրում, միայն այժմ եմ զգում ինձ մարդ, որովհետև միայն այժմ եմ իմ ռեսա-ի տէրը՝ անկախ, ինքնագլուխ։ Ես միայն ցաւում եմ առնասարակ իմ խորտակուած կեանքի մասին, ցաւում եմ, որ մի փոքր ուշ փշրեցի իմ շղթաները, որ երկար ժամանակ խղճացի մի մարդու, որ բնաւ ինձ չէր խղճում։ Ճշմարիտ է, այժմ մենակ եմ, բայց միթէ մենակ չէի, երբ նրա հետ էի և միթէ այն ժամանակ իմ մենակութիւնը աւելի թեթև էր։ Օօ, ոչ։

«Տօները ես անցկացրի ոչ ուրախ, ոչ տխուր։ Գրեթէ ամեն օր լինում էի կամ ծանօթներիս մօտ կամ թատրոններում ու երեկոյթներում։ Նոր տարուն հանգիպեցի մի ծանօթ ընտանիքում, ուր մնացի մինչև առաւոտեան 4 ժամը։ Յետոյ օթօմօթիլներով խմբովին գնացինք զրօննելու։ Բայց այդ գիշեր տխուր էի առանձնապէս։

«Նոր տարու օրը շատ ծաղիկներ ստացայ ու

շատերը եկան ինձ շնորհաւորելու։ Առհասարակ շատերի հետամտութեան պոարկան իմ, սակայն ես գիտեմ տղամարդկանց արժէքը։ Զբ-որ այլևս դժուար է ինձ հրապուրել գեղեցիկ ընչացքներով ու հաճոյախօսութիւններով։ Մի պարոն առաջարկեց ինձ խաղաղ ընտանեկան երջանկութիւն։ (յիշում էք Լ. Անդրէեվի պիեսը՝ «Մեր կեանքի օրերը»)։ մերժեցի։

«Մի ժամանակ ես էլ էի սիրում այն քաղաքը, ուր ապրում էիք դուք։ Բայց ոչ մի քաղաքի վարք ու բարքն այնքան ապականուած չեն, որքան այդ քաղաքինը։ Իսկ կանայք...»

«Դուք կարծում էք, որ մենք մինչև ամառ չենք տեսնուիլ, իսկ ես զգում եմ, որ եթէ կամենանք, կարսդ ենք տեսնուիլ... բարեկենդանին։ Յամինայն դէպս, ես երկու օր ազատ եմ լինելու։ Եթէ դուք բոլորովին չէք կարող գալ, այդ դէպքում ինքս կը գամ, հարկաւ, եթէ այդ անյարմար չի լինիլ ձեզ համար։ Բայց այդ թողնենք առայժմ, ով գիտէ մինչև այդ ժամանակ ինչեր տեղի կ'ունենան։

«Ներկայումս ես վաստակում իմ ամսական 90 ռուբլի, որ ինձ բաւական է։ Գնի էք արդիօք ինձանով։ Ասացէք բացարձակ։ շատ են ձեզ ձանձրացրել իմ նամակները։ Եթէ այն, այլևս չեմ գրիլ։ Դուք ինձ խորհուրդ էք տալիս վերցնել կեանքից ինչ-որ կարելի է վերցնել, բայց դուք ինքնիրդ, կարծեմ, շատ էլ չէք հետևում ձեր խորհրդին։ Առհասարակ շնորհակալ եմ ձեր խորհուրդների համար։ չէ-որ ես ձեզ համարում եմ իմ անկեղծ բարեկամը և կարծում եմ չեմ սխալվում։ Առնդ եղէ...»։

Նամակն անստորագիր էր, բայց մբթէ պէտք է ստորագրուած լինէր, որ հեղինակին ճանաչէի։

Երբ այդ նամակը զգուանքով շպրտեցի Գեղանի

երեսին, նա ոտքի ելաւ բորբոքուած, աչքերը վառուած, բոռնցքները սեղմած։ Բայց ես այլևս երկիւղ չունէի նրանից։

— Ա՞հ, երկչնտ, — գոչեցի ես, ազատութիւն տալով իմ սրտի մէջ տարիների ընթացքում կուտակուած թոյնին։ — Երկչնտ, միթէ չես կարող քո անթիւ հոմանիներից գէթ մէկի մօտ անկեղծ լինիլ։ Ինչու չես գըրում, որ բիւր անգամ խնդրել եմ քեզ ազատել ինձ և քեզ, չթունաւորել քո երջանիկ կեանքը՝ ինձ հետ մի յարկի տակ ապրելով։ Այն, քո հրէուհին իրաւունք ունի ինձ յիմար անուանելու։ Յիմար որ չլինէի, կը հաւատայի՞ քո ջերմ երդումներին, քո կրակոտ սիրոյ խոստովանութեանը։ Յիմար որ չլինէի, չէի տեսնիլ քո սև հոգին սև մորթուդ տակ։ Յիմար որ չլինէի, իդէալիստի և զաղափարականի դիմակիդ տակ չէին նկատիլ մի ողորմելի քաղցած գայլ, որ ճիրանները ծածկել էր բամբակով, որպէսզի կարողանար գրաւել ինձ... Ո՞հ... վախկնտ։ Քո ամբողջ ոյժը քո բիրտ բռունցքների մէջ է, որոնց այդպէս սեղմել ես և որոնք պատրաստ են մի անգամ ևս իրանց զօրութիւնը փորձելու եմ քնքուշ մարմնի վրայ։ Սակայն իմ ոյժը իմ հեղութեան, իմ խոնարհութեան ու պարկեցաւութեան, իմ ամօթի ու պատուասիրութեանս մէջ է։ Շարունակիր, շարունակիր քո ստերը, կեղտերը, քո անառակութիւնները։ Ես տասն'ութ տարի համբերել եմ և գեռ ոյժ ունիմ էլի համբերելու, որովհետեւ հէնց այս անվերջ համբերութեան մէջ եմ զգում սփոփանք, նոյնիսկ հոգեկան հաճոյք, նման այն հաճոյքին, որ զգում էին մաքուր խղճով քրիստոնեաները միջնադարեան ինկվիզիցիայի տանջանքներին ենթարկուելիս։ Մէկ նայիր, նայիր վրադ հայելու մէջ։ ուսերդ ցած են իջել անառակ կեանքի ծանրութեան տակ,

երեսդ թորշոմել է աշնանային տերեկի պէս, նրա կընճիռները չորացել են, կոպերդ ուռել. բիբերդ կարմրել անքուն գիշերներից: Մարմնաւոր որպիսի աղաւաղութն հոգեկան և բարոյական քայլայման հետ: Ի՞նչ այլանդակութիւն: Նայիր և համեմատիր ինձ քեզ հետ: Տասնութ տարուայ քո անգութ հալածանքներն ինձ այնքան չեն մաշիլ, որքան մաշիլ են քեզ անկառակի միայն վայել զուարձութիւնները...: Այն, ես յիմար եմ, իսկ դու խելօք, ես անզօր եմ, իսկ դու զօրաւոր: Բայց ես բարոյական եմ, դու անբարոյական, ես անարատ եմ, դու բազմարատ: Եւ ես ուզում եմ մնալ այն, ինչ որ կամ և հղել եմ: Ճիշտ է, ապրում եմ քեզ հետ, բայց զզվում ու գարշում եմ քեզանից...

ՓԱ

Ինձանում մի չար միտք ծագեց. քանի՞որ լինելով առողջ, ամուսնուս շնորհիւ հասարակութեան մէջ վայելում եմ ներվային կնոջ հոչակ, հասկա ինչուցոյց չտամ այդ մարդուն, թէ ի՞նչ ասել է ներվային կին:

Եւ վճռեցի հէնց այդպէս էլ անել:

Նախ և առաջ ես դիմեցի մի՛ իմ կարծիքով անծանօթ փաստաբանի: Կեանքս նկարագրեցի մանրամասնօրէն, բաց արի մեր բոլոր ընտանեկան գաղտնիքները, ցոյց տուի պատուարժան ամուսնուս սիրային նամակները և ապա խորհուրդ հարցրի թէ ի՞նչ պէտք է անեմ:

Փաստաբանը՝ որ հակառակի պէս ամուսնուս ծանօթ դուրս եկաւ, լսեց ինձ ամենայն ուշագրութեամբ, և երբ ամուսնուս սիրուհու նամակներն էլ կարդաց, ասաց.

— Անկասկած է որ ձեր ամուսինը մեղաւոր է ձեր առաջ, բայց եթէ գուք դատարանին դիմէք, ահագին խայտառակութիւն կը լինի ամուսնուդ համար, որի հետ դեռ ապրում էք մի յարկի տակ:

Պարզ էր որ փաստաբանը չուզեց գործն ստանձնել. ուստի ինդրեցի ասել թէ հրքան պէտք է վճարեմ խորհրդի համար, բայց նա բացէիբաց հրաժարուեց գրամից: Ես վերադարձայ տուն՝ լաւ զդալով իմ անպաշտպան լինելու:

Նոյն օրը երեկոյեան ինքս իմ արած քայլը պատմեցի Գեղանին ու սկսեցի ներվային ծիծաղով ծիծաղելու:

— Դու խելագարուել ես, — ասաց նա:

— Ո՞չ, սիրելիս, ես ներվային եմ...

Ապա արտագրեցի հրէայ վարժուհու՝ ամուսնուս գրած վերջին նամակը և ուղարկեցի մի... քաղաքի Առեւտրական դպրոցի վերատեսչին, որի միջոցով նա դասեր էր գտել: Ես խնդրեցի վերատեսչին, որ այդ նամակը հասցնէ հրէուհուն, աւելացնելով, որ ինքս չգիտեմ նրա հասցէն, թէ և շատ լաւ գիտէի: Միևնոյն ժամանակ, մի ուրիշ նամակ էլ ուղարկեցի մի ուսուցչի, որի հետ հրէուհին լաւ ծանօթ էր, և ինդրեցի նրան յայտնել իրա բարեկամուհուն, որ վերատեսչի մօտ նամակ ունի: Այդ մեքենայութեանս հետևանքն այն եղաւ որ հրէուհին զրկուեց դասերից ու ստիպուած եղաւ մի... քաղաքից հեռանալ ամօթահար, եթէ միայն այդպէսներն ընդունակ են ամաչելու:

Գեղանն իմացաւ արածս և ասաց.

— Դու խելագար ես:

— Ո՞չ, սիրելիս, ես ներվային եմ:

Գեղանը ստիպուած էր պաշտօնական գործով Պետերբուրգ գնալ: Պահանջեցի՝ ինձ էլ հետը տանէ:

Մերժեց: Ճշացի, գոռացի, աղաղակեցի ու վերջն իմն արի. գնացի Պետերբուրգ:

Այստեղ ամուսինս ինձ թախանձեց դիմել որևէ նշանաւոր բժշկի օգնութեան:

—Ինչո՞ւ համար, —հարցրի:

—Որովհետեւ հիւանդ ես:

—Իսկ ի՞նչ ասեմ բժշկին:

—Ասա որ, ասա որ... ներվային ես:

—Ո՞չ, սիրելիս, ես կ'ասեմ, որ խելադար եմ:

—Եւ կը հաւատայ:

—Աւելի լաւ ինձ համար:

Գնացինք մի յայտնի պրօֆէսօրի մօտ: Նա մանրամասն քննեց ինձ ու ասաց.

—Տիկին, դուք ոչ մի հիւանդութիւն չունիք. ձեզ ոչինչ հարկաւոր չէ. ահա ձեղ Վալերիանեան կաթիներ. այս ևս միշտ ընդունելու կարիք չկայ, այլ կ'ընդունէք միայն սաստիկ վրդովուածդ ժամանակ:

Իսկ ամուսնուս քննելուց յետոյ, միքանի դեղատոմն գրեց և շատ պատուէրներ տուաւ:

Մի օր գնացի փողոց քանիմի բան գնելու. տուն վերադարձիս տեսայ ամուսնուս պառկած: Հարցիս թէ ինչո՞ւ է պառկել, տես թէ ինչ պատասխանեց.

—Այսօր սովորականից շատ աւելի վատ եմ ըգգում ինձ. Նեսկի պրոսպեկտում ման գալիս, ինձ այնպէս թուաց թէ ետքից քաշեցին: Ես կարծեցի դու կը լինիս, բայց երբ յետ նայեցի, ոչ-ոք չկար: Եւ այդ կրկնուեց միքանի անգամ. ես հազիւ կարողացայ տուն հասնել: Այժմ մի տեսակ ընկճուած ու անհանգիստ եմ:

—Ասել է թէ, նկատեցի, ոչ թէ ես պէտք է գնայի Բելստերնի մօտ, այլ դու...

Պետերբուրգից վերադառնալուց յետոյ մի օր, այն էլ դէպքի բերմամբ, մի սոսկալի բան իմացայ:

Ինձ ասացին, որ Գեղանն աշխատում է հոգեկան հիւանդների բուժարան տալ ինձ:

Ես սթափուեցի և վճռեցի պաշտպանուել. պարզ հասկացայ, որ Գեղանը կամենում է իր աննախանձելի գրութեան կենդան վկային՝ ինձ փակել հիւանդանոցում, որ ինձ համար գերեզման էր դառնալու:

Ինձ փրկեց մի դժբաղդ դէպք—մեծ եղբօրս գիմազիաւարտ որդու ծանր հիւանդութիւնը, որովհետեւ բժիշկների խորհրդով ստիպուած էի նրան տանելու Զվլիցերիա, ուր եկաւ մի ամսից յետոյ նաև Գեղանը:

Ճանապարհուելիս ասելի էի իրան որ գալիս մի 1,000 ոռորդի բերի հետը իմ սեպհական փողից: Սակայն այս անգամ ևս կրկնուեց նոյնը, ինչ որ մեր առաջին ճամբորդութեան ժամանակ. որովհետեւ նա աւելի էր կռպտացել, աւելի ժլտացել և... աւելի անառակացել:

Բժիշկները. եղբօրս որդու վիճակը գտան վտանգաւոր և խորհուրդ տուին Զվլիցերիայում թողնել հիւանդին: Ես նրան տեղաւորեցի սանատօրիայում ու մենք հեռացանք Զվլիցերիայից: Երբ հասանք Վիեննա, փողս ուղեցի, բայց չտուաւ՝ առարկելով թէ ծախսել է, մնացածը հաղիւ բաւականանայ ճանապարհածախսին:

Ճանապարհին, չեմ յիշում որ երկրում, մեր կուպէն մտան երկու երիտասարդ օրիորդներ իրանց եղբօր հետ: Ամուսինս նստած էր իմ դիմացը: Քաղաքավարութիւնը պահանջում էր, որ նա ամբողջ նստարանը զիջէ նորեկներին և ինքը նստէ իմ կողքին, բայց նա բարուք համարեց նեղուել օրիորդների մօտ և նրանց էլ նեղել: Երբ այդ մասին նկատողութիւն արի, նա ամենայն ցինիզմով ասաց.

—Այստեղ աւելի հաճելի է ինձ համար:

Բանն այնտեղ հասաւ, որ օրիորդները կանչեցին կօնդուկտորին և խնդրեցին իրանց ուրիշ տեղ տալ և դուրս եկան մեր կուպէից՝ սպանիչ արհամարհական հայեացք զցելով ամուսնուս վրայ:

Վերջապէս հասանք Գեղանի պաշտօնավայր քառքը: Այդտեղ, հարկաւ, վերականգնեցին մեր նախկին լարուած յարաբերութիւնները:

Պատմեմ մի դիպուած, որ, կարծեմ, կարող է նոր լոյս սփոել ամուսնուս բարոյական նկարագրի վրայ:

Մի օր ամուսինս առաջարկեց ինձ նոր բացուած ճաշարանում ընթրելու և հրաւիրեց նաև միենոյն բանկում ծառայող Տարատինովին, նրա կնոջը և միւս ծառայովին: Ջարմացայ, երբ ճաշարան մտնելով տեսայ Տարատինովին ու կնոջը մի անծանօթ պարոնի հետ արդէն նստած այնտեղ, ուր մենք ևս պէտք է նստէինք: Թէև զարմանալու բան չկար. աւելի շուտ այն կը լինէր զարմանալին, եթէ նրանք այնտեղ չլինէին, քանի-որ պարզ տեսնում էր ամուսնուս վիրաբերմունքը դէպի տիկին Տարատինովան:

Հէնց-որ նստեցինք ընթրիքի, հիւսիսից եկած երիտասարդ պարոնը՝ անպատկառօրէն աչքերը յառած վրաս, շարունակ ժպտում էր լրբարար: Այդ աստիճան լրբենի յանդգնութիւնը ուղղակի զզուանք յարուցեց իմ մէջ, ուստի միքանի անգամ խնդրեցի ամուսնուս՝ տուն գնալ:

—Ինչժաւ ես շտապում, հարցրեց ոռւսերէն:

—Որովհետև ինքդ էլ պարզ տեսնում ես, որ այդ պարոնը իք լկտի հայեացքով վիրաւորում է ինձ, պատասխանեցի հայերէն:

—Հարբած է, ուշադրութիւն մի դարձնիլ:

—Բայց հէնց սկզբից նա լիրը էր և յանդուգն. իսկ եթէ հարբած է եկել, աւելի վատ:

Ամուսինս կատաղութիւնից կրծոտեց շրթունքները, բայց զսպեց իրան: Ուզեցի մենակ գնալ, բայց յետոյ մտածեցի որ այդ անյարմար է, որովհետև այդպիսով ես առիթ տուած պէտք է լինէի պատուոյ զգացմունքից զուրկ և խնքնասիրութիւնից թափուր ամուսնուս՝ վատաբանել ինձ բացակայութեանս, ուստի մընացի: Եթէ խնդիրը միայն ինձ վերաբերէր, հարկաւ ես կը պաշտպանէի պատիւս, բայց ներկայ էր ամուսինս, հետևաբար շօշափվում էր և նրա պատիւը:

—Ինչպէս էք հաւանում այդ պարոնին, —շշնջաց ականջիս տիկին Տարատինովան, —դա մեր ամենամօտ ծանօթն է և շատ էլ հարուստ է:

—Այն, —հարցրի հեգնօրէն:

—Այն, մօտերքս նրա հայրը վախճանուեց և ահագին ժառանգութիւն թողեց: Միայն մօտ կէս միլիօն ուութի ունի այն բանկում, որի տեղական բաժնի կառավարիչը ձեր ամուսինն է: Շատ գեղեցիկ երիտասարդ է, այնպէս չէ. բանաստեղծի կամ նկարչի դէմք ունի: Զեզ դիւր չի գալիս:

—Տիկին, հաւատացէք, ինձ բոլորովին չի հետաքրքրում ոչ այդ պարոնը, ոչ նրա դէմքը և ոչ էլ մանաւանդ նրա հարստութիւնը, —ասացի ես ձանձրացած և երեսս շուռ տուի. սակայն այդ երկրորդ անպատութիւնը չկարողացայ տանել, ուստի նորից խնդրեցի ամուսնուս շուտով աւարտել ընթրիքը և պատմեցի տիկին Տարատինովայի ասածները, որպէսզի մտնի դրութեանս մէջ և ազատէ ինձ այդ անպատիւ ընկերակցութիւնից. բայց նա, կարծես ինձ աւելի զայրացնելու համար, շամպայն պահանջեց: Եւ այդպէս, ես ստիպուած եղայ մինչեւ գիշերուայ 2 ժամը տանել լկտի երիտասարդի ինձ համար՝ արդէն գարշելի սեղանակցութիւնը:

Ընթրիքից յետոյ պարոն Տարատինովն ինձ ա-
սաց, որ ամուսինս մի որոշ բաժին է ստանում այն:
դրամագլխի տոկոսներից, որ երիտասարդ պարոնն
ունէր պատուելի ամուսնուս կառավարած բանկում:

Ի՞նչպէս ես հաւանում, սիրելիս, նախկին իդէա-
լիստի այդ վարմունքը, հը...: Այն, նա այդ տոկոսների
համար աւելի էր հոգում, քան իրա կնոջ ու սեպհական
պատուի մասին:

Յաւիտեան չեմ մոռանալ իմ երրորդ ճամբորդու-
թիւնը դէպի եւրոպա: Ախ, այն ի՞նչ սոսկալի տրա-
մադրութիւն էր, որ պաշարեց ինձ, երբ եղբօրս որ-
դու հեռագիրը ստանալով, ուզելորուցի Զվիցերիա:
Նա ինձ կանչում էր իրա մօտ: Նա՝ որ իմ միակ մխի-
թարութիւնն էր, իմ մոայլուած հոգուս լուսաւոր կէտը:
Նա՝ որի համար կեանքս չէի խնայիլ: Ես զգում էի,
որ խեղճ պատանու վիճակն աւելի յուսահատական է,
քան հեռագրի հաղորդածը: Եօթն օք շարունակ լալիս
էի երկաթուղիների վագոններում:

Տեղ հասայ այն-ժամանակ, երբ անրուժելի ախ-
տըն արդէն կատարել էր իր կործանիչ դերը և այլիս
պնկարելի էր որևէ միջոցով օգնել նրան:

Մեռաւ անուշ պատանին, թողնելով տառապեալ
հոգուս մէջ յաւիտենական կսկիծ, որ ոչ մի երջանկու-
թիւն չի ամոքելու երբէք:

Դիբաղդ պատանուն շատ էի սիրում. մոայլ կեան-
քիս մէջ միակ պայծառ աստղն էր ինձ համար, իմ
միակ մխիթարութիւնն ու միակ սփոփանքս: Փափա-
գելով որ նրա յիշատակը անմոռաց մնայ, կամեցայ
մի գումար տալ բարեգործական նպատակով, բայց
տես թէ ի՞նչ ասաց նախկին իդէալիստ ամուսինս.

—Ուզում ես քո սեպհականութիւնից տաս, որ

յետոյ մնաս իմ վզին, սակայն լաւ իմացիր ու քեզ
պահողը չիմ:

Եւ առանց կարմրելու այդ ասաց այն մարդը,
որ մի ժամանակ առանձին իմն յաւակնոտութեամբ
էր պարծենում, թէ հազարաւոր օրիորդներից միայն
ինձ էր ընտրել, որ կեանքն անգամ չէր խնայիլ ինձ
համար, և էլի հազար ու մի անամօթ ստութիւններ,
որոնք հարկաւոր էին իբրև դիմակ՝ նպատակին հա-
նելու համար:

Այսպէս ուրեմն, սիրելիս, ամուսինս նախ ծնող-
ներից, ապա իմ սեպհականութիւնից՝ ուզածին չափ
օգտուելով, իրա համար դիրք, անուն, հարստութիւն
ձեռք բերաւ ու այդ հարստութեամբ անբարոյական
կանանց հետ միշտ կենակցեց. բայց որպէսզի ոչ-ոք
չմեղադրէր իրան՝ վարած անբարոյական կեանքի հա-
մար, սկսեց՝ բարոյապէս ստոր ընկած մարդուն միայն
վայել զրապարտութիւններ տարածել իմ մասին, որպէս
թէ ես հիւանդ եմ, խելագար եմ, այս եմ, այն եմ:

Նրա այդ տմարդի արարքներից վերջի-վերջոյ
եկայ այն խորին համոզման, թէ նրա ուղեղը իրօք
հիւանդ է, որ հետեւանք էր անշուշտ ամուրի ժամա-
նակ ստացած վատ ցաւի, կամ գուցէ ժառանգական
էր այդ հիւանդութիւնը: Ասում եմ գուցէ, որովհետեւ
հէնց անցեալ տարի քոյրը խելագարուեց, որի որդուն
Գեղանը տարաւ. գժատուն. միւս ազգականներից մէկի
սրդին, որ վաղուց գժատանն էր լինում, հերու մե-
ռաւ...:

Այլևս ոյժ չունէի շարունակելու այդ անտանելի
կեանքը օտարութեան մէջ, խորթ շրջաններում:

Եւ ես գնացի իմ ծննդավայրը: Ամուսինք էլ եկաւ,
մի առժամանակ մնաց ու վերադարձաւ իրա պաշտօ-

նատեղին: Երեք ամիս անցած հետևեալ նամակն ստացայ ոռւսերէն գրած:

«Հկատերինողար, 11 մ. 1911 թ.

«Ես հոգով համակրում եմ Ձեզ, Տիկին, որովհետեւ Ձեր ամուսինը արդարեւ անարժան ոմն է: Դուք նրան մենակ թողիք, բայց նա իրան մենակ չի դում: Այժմ նա կենակցում է տիկին Մեղվեդկովայի հետ: Դա մի սանձարձակ կին է, որքան անբարոյական, նոյնքան և այլանդակ: Նիհար, դեղնած, պշկած, ուկրները դուրս ցցուած, նա յիշեցնում է սոված կատուի: Ձեր թշուառ ամուսինը ամեն օր նրան ծաղիկներ ու թանկագին նուէրներ է ուղարկում:

«Տիկին, թէև Ձեզ հետ շատ քիչ եմ ծանօթ, բայց շատ բան գիտեմ Ձեր կեանքից: Ձեր կոպիտ ամուսինը անկման այս աստիճանին չէր հասած երբէք: Եւ ումանի է փոխարինել Ձեզ: Մի արարածով; որին կարելի է գնել 5 ուուրլով. ինքս էլ գնել եմ:

«Տիկին, վախկոտութիւն չհամարէք, որ ներկայ նամակը չեմ ստորագրում: Իմ ազգանունը Ձեզ ոչինչ չի կարող ասել: Ես Ձեզ հանդիպել եմ ընդամենը երկու անգամ, բայց գիտեմ, որ այստեղ ամբողջ հասարակութիւնը յարգում է Ձեզ: Սակայն միթէ Դուք, որ ուրիշներից այդքան յարգուած էք, չէք կարող ազդել Ձեր ամուսնու վրայ: Ցաւալի է: Զէ՞որ նա լուրջ մարդ է համարվում և հասարակական աչքի ընկնող դիրք ունի: Բայց փոյթ չէ, վաղ թէ ուզ նա կը զղջայ... Ձեզ բարեցակամ Ն... Ն...»:

ՓԲ

Երբ կարգացի այդ նամակը, ուզեցի դէն շպրտել արհամարհանքով, ինչպէս շպրտում են առհասարակ

անստորագիր նամակները, բայց չարի, որովհետեւ արդէն չափից աւելի էր իմ ատելութիւնը դէպի Գեղանը: Ես պատրաստ էի ամեն մի փաստ գրկաբաց ընդունել՝ նրա անկումը աւելի ու աւելի մատնանշելու: Ես մի համառոտ նամակ գրելով շնորհաւորեցի նրան իր նոր ցաղթանակից համար: Ի միջի այլոց նաև գրեցի: «Դրում եմ ոռւսերէն, որպէսզի ձեր նոր հոմանին էլ կարդայ ու իմանայ, թէ ինչ տեսակ անձնաւորութեան հետ է կապուել յանցաւոր կապով:

«Խնդրում եմ անմիջապէս ուղարկէք բոլոր իրեղներս և հոգաք ապահարզանի մասին, քանի՞որ այդ ձեզ համար գժուար բան չէ, մանաւանդ-որ դրանով ձեր կեանքի մէջ գոնէ մի հատ լաւ բան արած կը լինիք:

«Իրերս ստանալուս պէս անյապաղ ձեզ կ'ուղարկեմ ինձ տուածդ նշանը—զմրուխտ ակով քրօշկանա: Ահա այդ նամակիս պատասխանը:

«Գոհարինէ, դժւ ես ինձ նախատում, դժւ՝ որ թողիր ինձ ու գնացիր: Միթէ ես իրաւունք չունիմ մօտ լինելու մի կնոջ, որ ծերութեանս ու տկարութեանս միջոցին խնամում է ինձ, ինչ որ անհրաժեշտ կարիք է ինձ համար: Թէև այդ դեռ չեմ արել, սակայն նպատակ ունիմ անելու, երբ հանգամանքներն ստիպեն:

«Այդ անստորագիր նամակը, որի հեղինակը համարում եմ տիկին, Տարատինովային, ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ քսու զրպարտութիւն: Իսկ այդ զրպարտութիւնը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ նախանձի արդիւնք:

«Լսիր, Գհհարինէ. այդ կինն է եղել քո իսկական թշնամին և ոչ ես կամ մի ուրիշը: Նա է՝ որ ամեն կերպ աշխատել է մեր մէջ խռովութիւն ու գրժութիւն զցել: Պատճմոն ես ուզում իմացնալ: Կսիր,

ուրեմն. Նա ուզում էր բռնել քո տեղը...: Այս, այս: Ես փաստեր ունիմ, ահա նրանցից մէկը. հէնց-որ դու այստեղից հեռացար, հէնց-որ իմացաւ, որ այլևս մենք բաժանուած ենք, իսկոյն առաջարկից ինձ միասին կենակցել: Նա մինչև անգամ խոստացաւ թողնել իրա զաւակներին: Ես մերժեցի, և ահա նու վրէժ է առնում ինձանից այդ ստոր միջոցով: Իմացիր նաև, որ նա թշնամի է իրա տեգօր կնոջը և աշխատում է ամեն կերպ ստորացնել նրան:

«Բայց ես կը պատժեմ այդ անառակին: Կը պատժեմ յանուն իմ պատուի և քո հոգեկան հանգստութեան: Ուղարկիր ինձ այդ անստորագիր նամակը: Թոյլ տուր, որ տիսնեմ նրա ձեռագիրը: Ազնիւ խօսք եմ տալիս, որ կը վերադարձնեմ քեզ: Այս, պէտք է այդ անպատկառին պատժել: Եւ ես այսօր նրա ամուսնուն ասացի, որ այլևս չի կարող մեր բանկում ծառայիլ:

«Դու խնդրում ես, որ իրեղէններդ ուղարկեմ քեզ: Ներիր, որ առայժմ չեմ կարող: Ամառը մօտենում է: Երեկ դու կ'երթաս որևէ ամարանոց: Լաւ չէ որ նըրանք առժամանակ ինձ մօտ մնան: Այստեղ նրանք աւելի պահով կը լինին կողոպուտից: Սակայն դու գիտես. եթէ կամենում ես, իսկոյն կ'ուղարկեմ:

«Կրկին խնդրում եմ՝ ուղարկիր ինձ այդ անստորագիր նամակը կամ գոնէ նրա պատճէնը: Այդ լիրը հէնց այն օրերին, երբ ինձ առաջարկում էր միասին կենակցել, խաղում էր մի ուրիշի հետ: Մեր բանկի ծառայողներից երկուսը գիշերուայ երկու ժամին փողոցում նրան տեսել են Պաստուխովի հետ թեակցած մի կասկածելի տանից դուրս գալիս: Ահա թէ որպիսի արարած է յանդանում արատաւորիլ մի կնոջ, որի միակ հոգս զաւակների կրթութիւնն է:

«Բայց գուցէ նամակագիրը տիկին Տաղատինովան չէ, գուցէ նա իսկապէս մի տղամարդ է: Այնժամանակ թոյլ տուր հարցնեմ՝ ինչ գաղափար կարելի է կազմել մի տղամարդու բարոյականի մասին, որ ինքն էլ եղել է այն կնոջ սրտակից մտերիմը, որին այժմ այդպէս վայր է զարնում: Հարցրո՞ւ այդ մարդուն, եթէ ճանաչում ես: Եթէ ինքը ևս գնել է այդ կնոջը փողով, հապա ինչ իրաւունքով է քննադատում մի ուրիշի այդպիսի վարմունքը, եթէ նրա մեղադրանքը մինչև անգամ ճիշտ էլ լինէր իմ մասին:

«Ես չիմ ուրանում, որ մի-մի անգամ լինում եմ այդ՝ յանիրաւի զրաբարտուած անմեղ կնոջ տանը, որի հայրը, ի միջի այլոց ասած, ժեներալ է: Բայց միթէ յանցանք է լինել մի պատուաոր ընտանիքում և այնտեղ միքանի վայրկեան հոգով հանգստանալ նրա զաւակների շրջանում:

«Ներիր, որ երկարացրի: Գրում եմ ոչ թէ ինձ արդարացնելու, այլ քո աչքերը բանալու համար: Գոռհարինէ, մտածիր՝ թւմ ինչ գործն է, թէ ով ինչպէս է ապրում, կամ ինչ իրաւունքով են մարդիկ խառնը-վլում ուրիշների ինտիմ կեանքի մէջ, եթէ նրանք որևէ անձնական պատճառ չունին, եթէ նրանց ինքնասիրութիւնը վիրաւորուած չէ:

«Սակայն ինչ եմ ասում. մտածիր իմ մասին, ինչ կամենաս, անուանիր ինձ՝ զաւածան, անառակ, հաւատափոխ անգամ, ինձ համար միննոյնն է: Ես պատասխանատու եմ միայն իմ խղճի առաջ: Իսկ իմ խղճը մինչև այսօր եղել է հանգիստ և յոյս ունիմ այսուհետեւ էլ կը մնայ նոյնը:

«Մի անգամ ևս խնդրում եմ՝ ուղարկիր ինձ այդ անստորագիր նամակը:

Գեղան...

Տեսնում ես, սիրելիս, թէ ինչ ճիզուիտութիւն
է քուրում այդ նամակից։ Այժմ լսիր ինձ։

Վկայ է Աստուած, որ ես ամուսնական առագաստի մաքրութիւնը համարել ու համարում եմ սբրազան պաշտամունք, և յանուն այդ պաշտամունքի, ես ոչմիայն փափագել եմ որ իմ օրինական կողակիցը ինձ չափ անարատ լինի, այլև անթիւ անգամ հաստատելով նրա բարոյական անկումը, միշտ էլ աշխատել եմ պաշտպանել նրան օտարների առաջ։

Իսկ ինչ է արել նա ինքն իմ վերաբերմամբ։ Այն՝ ինչ-որ, երեի, պիտի անէր նրա նման մի անգութական շահախնդիրը։ Նա ամենայն սառնասրտութեամբ զրկել է ինձ կեանքի տարրական բարիքներից։ Նա դաւաճանել է ինձ ամեն քայլափոխում։ Նա ինձ անարգել է, հայոյել, ծեծել, ստորացրել։ Նա չի խնայել նոյնիսկ իրա ինքնասիրութիւնը և անուանարկել է ինձ օտարների առաջ, մեր ծանօթների և թէ անծանօթների մօտ։

Իրան յատուկ սովորութեամբ ինձ մեղադրում է որ ես թողել-հեռացել եմ իրա ծերութեան և տկարութեան ժամանակ, բայց մոռանում է որ ծեր ու տկարը չի կարող և չպէտք է երիտասարդ կնոջը շարունակ մենակ թողնէ տանը ու ինքը անբարոյական կանաց հետ լուսացնի գիշերները, ու երբ լուսադէմին տուն գայ, շրջապատղներին երդմամբ հաւատացնի թէ կարմնը ու անյետաձգելի գործով էր զրադուած ողջ գիշեր։

Անամօթաբար գրում է թէ իրան մենակ եմ թողել, այդ պատճառով էլ լինում է այն կող տանը և նրա երեխաների շրջանում միսիթարիվում։ Իսկ երբ իրան չէի թողել և առան էի, հապա ինչու ինքը տա-

նը չէր լինում համարեա գիշեր ու ցերեկ և խարում թէ մինչև վիզը թաղուած է գործի մէջ։

Միթէ եթէ բարոյապէս փչացած չինէր և ուզենար՝ չէր կարող իրա համար պատուաւոր շրջան գըտնել, ուր երկուսն էլ կարողանայինք թեթեացնել միր առօրեայ կեանքի ձանձրոյթը, քանի-որ ոչ մի զուարծատեղ չէր տանում ինձ, թէն ինքը միշտ էլ բաճախում էր նման վայրերը։

Եթէ նա պատուաւոր շրջան գտած լինէր, հիմա կարող էր օրինաւոր մարդկանց մէջ անցկացնել իրա օրերը և ոչ թէ անբարոյական կող յուսով կը մնար, որին ժեներալի աղջիկ է անուանում, ինչպէս որ առանց ամաչելու միւս փողոցային ծանօթումիներից մէկին բարոնում էր կոչում, միւսին կոմսուհի, երրորդին յայտնի ինժենէրի կին... ուրեմն էլ ինչ իրաւունքով է հիմա մեղադրում ինձ, որ ես իրան լքել եմ։

Նա ողբում է իրա մենակութիւնը կոկորդիլոսի արցունքներով։ Բայց ինչ էր նա այն-ժամանակ, երբ մենակ չէր, այլ ինձ հետ։ Միթէ ինքը այն-ժամանակ էլ նոյնը չէր, ինչ որ այժմ։ Միթէ չէր լիզում անառկների կօշիկները և տուն գալով անլուր անարգանքներ թափում վրաս։ Միթէ ես չէի զգում մենակութեան դառնութիւնը, երբ նա ինձ թողնում էր տամնը մենումենակ և ինքը գնում զուարծանում ամենուրեք, ուր քաշում-տանում էին իրան իր այլանդակ կրքերը։ Եւ նա թողնում էր ինձ մենակ նոյնիսկ այն-ժամանակ, երբ հիւանդ.. էի լինում և կարօտ իրա օգնութեան։ Եւ նրա դաժանութիւնն երբեմն այնտեղն էր հասնում, որ բարոյապէս ընկածին միայն վայել լկտիութեամբ, առանց կարմրելու, ասում էր։

— Ես հեռանում եմ տանից և գնում այն կանանց

մօտ, որոնց հետ ժամանակս աւելի ուրախ է անցնում, քան քեզ հետ:

Նա այժմ պարսաւում է տիկին Տարատինովային. բայց արդեօք շատ ժամանակ է անցել այն օրից, երբ այդ կինը նրա իդէալն էր:

Բայց ինդիրն ինձ համար պարզ է. Գիղանի անհաշտ, գուեհիկ ընաւորութիւնը՝ ինչպէս երեսում է, այդ կողջն էլ է դէն հրել իրանից, ինչպէս հրել է շատ շատերին:

Նայիր, սիրելիս, մարդկային խղճի հակասութիւններին: Նա դատապարտում է այն անձանց, որ խառնվում են ուրիշների ընտանեկան կեանքի մէջ: Այս, ես էլ եմ դատապարտում, որովհետև վերին աստիճանի վատ բան է այդ մի օրինաւոր մարդու համար՝ լինի նա կին թէ աղամարդ: Բայց ուր էր նրա այդ աշխարհայեցքն այն-ժամանակ, երբ գեռ ոչ-ոք չէր դիպել նրա ինքնասիրութեանը: Ինչու այն միջոցներին նա իրաւունքի ինդիր չէր յարուցանում: Ինչու նա չէր դատապարտում իր հրէայ սիրուհուն՝ իր սքանչելի Քահսային, որ ստորագրած ու անստորագիր նամակներով չէր դադարում պղտորել մեր ընտանեկան կհանքի անդորրութիւնը, այլ ընդհակառակը՝ նրան դարձրել էր իրա զինակիցը, որպէսզի իմ՝ առանց այն էլ ապարազդ գոյութիւնս աւելի թունաւորի:

Վերջապէս ինչու նա ինքը խառնուեց հէնց այդ հրէուհու ընտանեկան կեանքի մէջ և բաժանեց նրան ամուսնուց:

Անբարոյականներն ու սուտ ասողները ոչ-միայն յիշողութիւն չունին, այլև լօգիկա, որովհետև անձօթ են:

Որպէս թէ ինքը «խղճի դէմ ոչինչ չի արել»:
Հիանալի է, չՅ: Նա՝ որ ամեն քայլափոխում

ստել է, կեղծել, խաբել. Նա՝ որի գիմակը հարիւր անգամ պատուել իմ. Նա՝ որի անամօթութիւնն այն տեղը հասաւ որ՝ նիւթական շահի համար, խաղում էր իմ անարատ անուան հետ մի միկոնատէր լկտի երիտասարդի քմահաճոյքի համար. Նա՝ որ պաղարիւնութեամբ իր երեկուայ կուռքին այսօր կոխկոտում է ոտների տակ....

Օ՞՛ որին միամտաբար տաքացրել էի կրծքիս վրայ, որպէսզի յետոյ ինձ կծէ: Գիշատիչ գաղան՝ որ ծանր հիւսնդ ժամանակս անգամ չէր վարանում բոռնցք բարձրացնել վրաս զուալով.

—Վէր կաց, դու հիւսնդ չես, դու կեղծում ես:

Գաղանները իրանց զոհին միանգամից են յօշտում և վերջ տալիս նրա տանջանքներին: Մարդը անհունապէս վատթար է գաղանից, և ես խոնարհվում եմ այն իմաստասէրի առաջ, որ ասել է.

«Որքան շատ եմ ուսումնասիրում մարդկանց, այնքան աւելի եմ սիրում անասուններին»,

Այս, մարդը մարդուն միանգամից չի լափում, այլ կամաց-կամաց, սառնարիւնութեամբ, սիստեմատիքաբար, որպէսզի իր գարշելի ախորժակը չաւրէ: Իսկ ամուսինս տասն'ութ տարի առողջ արիւնս կաթիլ-կաթիլ ծծելով, քամեց ինձ:

Քայքայուեց պղղպատեայ կազմուածքս, կորաւ ծաղիկ երիտասարդութիւնս, այլանդակուեց անարատ հոգիս, բրտացաւ զգայուն սիրտս:

Եւ այսօր, երբ մի յետադարձ հայեացք եմ զցում անցեալիս վրայ, սառը քրտինքը պատում է մարմնիս: —Սարսափի՞ց: —Այս, ինչպէս նաև ամօթից ու թուլութեանս գիտակցութիւնից, թէ ինչպէս կարողացայ կրել այդ բոլոր տառապանքները լուռ ու անտրտունչ, ողորմելի նոխազի պէս:

Իմ միակ պահանջն էր կեանքից՝ սիրել այդ մարդուն և սիրուել նրանից, որին մի անգամ արդէն կեանքիս ընկեր էի ընտրել: Ընտրել էի թէկուզ կուրօրէն, թէկուզ առանց մի վայրկեան քննիլու և վերլուծելու նրա հոգեկան արժանիքները:

Միթէ գոնէ այդքանը պահանջելու իրաւունք չունէի մի մարդուց, որի ջերմ երդումներովն էի ապրել ու շնչել հարսնացու ժամանակս: Զէ-որ մինչև սուրբ սեղանին մօտենալը նա հազար անգամ իր բիբտ ձեռների մէջ սեղմելով իմ՝ յուզմունքից գողացող ձեռքը, գոչել էր.

—Գոհարինէ, Գոհարինէ, երդվում եմ բոլոր սըրբութիւններով, որ իմ արտաքին կոշտ կեղեկի տակ մի կը ակոտ սիրտ կայ, որ քեզ և միմիայն քեզ համար է բարախում, որ նա քեզանով և միմիայն քեզանով պիտի մնայ լի մինչև գերեզման:

Ուրիշ ի՞նչ երաշխաւորութիւն կարող է պահանջել մի անմեղ աղջիկ մի տղամարդուց:

Դիցուք ես այնքան միամիտ էի և անփորձ, որ չկարողացայ թափանցել նրա հոգու մէջ, բայց միթէ իրաւունք ունէի չհաւատալու նրան: Դիցուք նա այն-ժամանակ կեղծում էր, բայց միթէ կարող էի իմ կասկածներով վիրաւորել նրա ինքնասիրութիւնը, նրա խելքն ու բանականութիւնը:

Գեղանը զազրելի դարձաւ ինձ համար ոչ-այնքան իր դաւաճանութեամբ, խաբերայութեամբ, ստով ու կեղծիքով և մանաւանդ զզուելի ժլատութեամբ, որքան այն ձևերով, որ կատարում էր այդ ամենը:

Մի սկ օր էր այն: Արտասահմանից նոր էր վերադարձել՝ սիրտ լի վշտով: Մի առաւօտ բաց արի տուալետիս սեղանը և տեսայ այնտեղ մի կանացի ռմանիկրը—եղունգներ մաքրելու գործիք:

—Այս ի՞նչ է,—գոչեցի, չհաւատալով աչքերիս: —Զգիտեմ, —պատասխանեց, չհամարձակուելով ուղիղ նայել աչքերիս:

—Ասա, այս ի՞նչ է,—կը կնեցի, աւելի ու աւելի տարուելով չար կասկածով:

—Զգիտեմ,—կը կնեց նա, այս անգամ կարմրելով: Պարզ էր. հրէշն ապականել էր նաև իմ անկողինը....

Ես միամտաբար մի սնոտի յոյս էի փայփայում՝ ուղղել մի խառնուածք, որ անուղղելի էր միանգամայն:

ՓՊ

Ես մի նամակ ուղարկեցի բանկի պաշտօնեաներից մէկի անունով, խնդրելով նրան, որ անձամբ կարդայ պարոն ամուսնուս մօտ:

Այդ նամակում թուելով Գեղանի արարքները՝ անառակութիւնից սկսած մինչև վրաս ձեռք բարձրացնելը, վճառպէս յայտնում էի որ այլևս չեմ վերադառնալու ամուսնուս մօտ, ու խնդրում էի՝ շտապեցնել նրան՝ իմ բոլոր իրերն ուղարկելու:

Անշուշտ բանկի պաշտօնեան կամ գուցէ ինքը Գեղանը նամակս կարդացել էր տիկին: Տարատինովայի մօտ, որովհետեւ շատ չանցած այդ կնոջից հետևեալ գրութիւնն ստացայ, որ առաջ եմ բերում Գեղանի բարոյական նկարագիրը լրացնելու համար.

«Սիրելի Տիկին Գոհարինէ Բ-եան.

«Ձեր ամուսինն՝ ինձ զրպարաել է, այս կարող եմ ասել նախ և առաջ: Եւ զրպարաել է ամենայն անամօթեամբ: — Ինչու, կը հարցնէք: — Պատճառն ինձ համար պարզ է, կ'ասեմ: Պէտք է խոստովանել, որ

այդպիսի անսկզբունք ու անկիրթ, ընտրութիւնների մէջ խտրութիւն չդնող մարդու չեմ պատահած կեանքում։ ուստի շտապում եմ ասել, որ նա ոչ կարող է վիրաւորել ինձ, ոչ վշտացնել և ոչ մանաւանդ խախտել ամուսնուս ունեցած հաւատը դէպի իմ հաւատարմութիւնը։

«Տամանուերեք տարի է ինչ ես ամուսնացած եմ և այդ երկար ժամանակամիջոցում երբէք չեմ անջատուել իմ ամուսնուց։ Մենք եղել ենք միշտ միասին՝ ամառ թէ ձմեռ։ Եւ լինելով միշտ միմեանց աշքի առաջ, վայելելով անդորր ընտանեկան կեանք, մենք այնքան լաւ ենք ուսումնասիրել միմեանց, որ ոչոք չի կարող պղտորել մեր յարաբերութիւնները, բացի մեզանից, եթէ, ի հարկէ, որևէ պատճառով մենք կը փոխենք մեր յարաբերութիւնները, որոնք ներկայումս լի են փոխադարձ սիրով ու յարգանքով։

«Դուք ևս լաւ էք ուսումնասիրել Զեր ամուսնուն։ Դուք ևս գիտէք, որ նա աշխատում է ամեն մի կնոջ հրապուրել իրա ոսկիներով։ Անձամբ ես շատ անգամ եմ լսել նրանից, թէ ինքը շատ հարուստ է։ Ես հասկանալով նրա յետին միտքը, միշտ նկատում էի ինձ համար դրամը ոչ մի արժէք չունի, վասնզի կեանքիս մէջ նրա կարիքը երբէք չեմ զգացել, որ ես Աստծու պարգևած բոլոր բարիքներն ունիմ՝ և՛ սեպհական տուն, և՛ ազնիւ ու սիրող ամուսին, և՛ մի սքանչելի զաւակ՝ դուստր։

«Տիկին, միթէ նա կարող է հրապուրել մի պատճառուր կնոջ իրա հարստութեամբ։ Իսկ նրա ապականուած հոգին, այլանդակուած աշխարհայեմցքը, նրա արտաքինը վերջապէս։ միթէ այդ բոլորը ոչինչ են։ Եթէ ես լինէի նոյնիսկ դրամով հրապուրուող մի կին, դարձեալ դէն կը հրէի Զեր ամուսնուն, որովհետեւ գի-

տեմ նրա առասպեկտական ժլատութիւնը։ Նա առատաձեռն է միայն խօսքով։

«Տիկին, մենք այդ մարդուն ընդունեցինք մեր յարկի տակ՝ համարելով նրան կրթուած ու զարգացած։ Ընդունեցինք, որովհետեւ նրան մեղ ներկայացրեց մեր ազգական Պլետնիկովը։ Եւ հիասթափուեցինք ու զղացինք չարաչար։ Ի՞նչ է նշանակում այս Այն՝ որ մենք կանայքս անզգուշութեամբ ամեն մէկին տուն չպէտք է թողնենք, ոչ էլ ամեն մէկի հետ ծանօթութիւն ունենանք։ Զեր ամուսինն այն մարդկանցից է, որոնք իրաւունք չունին օրինաւոր տան շէմքի վրայ ուս դնելու։

«Այս, Տիկին Գոհարինէ. Դուք իրաւացի էք. լաւ պիտի ճանաչել Զեր ամուսնուն՝ նրա մասին ճիշտ գաղափար կազմելու համար։ Նա շատ ճարպիկ է իրա թերութիւնները ուրիշներից քօղարկելու մէջ։ Նրա լեզուն կարող է շատերին խաբել, և ես չեմ զարմանում, որ Դուք խաբուել էք Զեր պատանի հասակում։ Նա՝ բացի արատաւոր լինելուց, անամօթ զրպարտող էլ է։ Եւ քանի՛քանի անգամ է զրպարտել Զեր հէնց մեղ մօտ, ասելով թէ՝ Դուք հիւանդ էք, ներվային, թէ՝ Դուք թունաւորում էք նրա գոյութիւնը։

«Անչափ ցաւում եմ, Տիկին, որ այն-ժամանակ չկարողացանք աւելի մօտ ճանաչել Զեր, երբ դեռ ապրում էիք այստեղ։ Դրա պատճառն այն էր որ Զեր ամուսինը շատ էր աշխատում հեռու պահել Զեր ծանօթներից և վերջիններին էլ Զեզանից։ Նա այնպիսի սարսափելի բաներ էր պատճում մեղ Զեր մասին, որ մենք վախենում էինք մօտիկ յարաբերութիւն ունենալ Զեր հետ։

«Չգիտեմ թէ այլևս ի՞նչն էր կապում Զեր մի այդպիսի հրէշի հետ, երբ մի անգամ արդէն ճանաչե-

ցիք նրան։ Գուցէ անձնասիրութիւնը, ամօթի զգացմունքը, հասարակական կարծիքը եթէ այդպէս է, հասկանալի է Զեր ազնիւ զոհաբերութիւնը։

«Ես ուրախ եմ Զեզ համար, որ վերջապէս ազատուել էք արատաւոր ամուսնուցդ, բայց նա դեռ յոյս ունի, թէ մի օր Դուք պիտի վերադառնաք իրա մօտ։ Նա ամենքին ասում է՝ թէ Դուք մի տարուց աւելի չէք կարող մնալ առանց իրան։ Որպիսի վստահութիւն, այնպէս չէ։

«Արդեօք նկարագրեմ, թէ նա ի՞նչ անվայել կեանք է վարում հիմա։ Ո՞չ, չարժէ, զգուելի է։ Ես շատ ուրախ եմ, որ մենք ոչ մի տեղ չենք հանդիպում միմեանց։ Ես դադարել եմ նրան բարեկելուց. տեսնելիս երեսս շըջում եմ նրանից։ Նրան ծաղրում և արհամարհում է ամբողջ հասարակութիւնը, իսկ նա այնպէս է ձևացնում թէ չի նկատում։ Նրա մէջ ինքնասիրութեան նշոյլ անդամ չի մնացել։

«Նրա համար այժմ այն կանայք են բարձր բոլորից, որոնք նրա անտակութեան առարկաներն են, որովհետև բացի անասնական կրքից նրա մէջ չկայ հչ մի զգացմունք դէպի կինն առհասարակ։ Ես նոյնիսկ զարմանում եմ թէ նրա իշխանաւորները ի՞նչպէս են թողնում նրան պատասխանատու պաշտօնի մէջ։ Զէ-որ մի այդպիսի մարդ իր կեղտոտ ձեռներով կարող է ապականել ամեն բան, ինչին որ ձեռը տայ։

«Միշիթարուեցէք, յարգելի Տիկին. որքան նա արհամարհուած է, այնքան զօրեղ է հասարակութեան համակրանքը դէպի Զեզ։ Անկեղծ հոգով ցանկանում եմ Զեզ հոգեկան անդորրութիւն, որին այնքան կարօտ էիք Զեր ամուսնու յարկի տակ։ Գոնէ այժմ ապրեցէք հանգիստ։ Դուք իրաւունք ունիք, Դուք չափից դուրս վատ էք անցկացրել Զեր լաւագոյն օրերը։

Դուք՝ որ ամեն միջոց ունէիք երջանիկ ապրելու։

«Ենչ վերաբերում է Զեր ամուսնու դրածներին իմ մասին, ես միանգամայն անտարբեր եմ։ Ինձ համար նրա լուտանքները հաւասար են, ներեցէք ասելու շան հաջոցին։ Իմ կեանքն ընթանում է այնքան լաւ ու երջանիկ, որ աւելին պահանջելու իրաւունք չունիմ։ Ինձ միայն մի բան է վշտացնում. այն՝ որ Դուք գեռ հաւատում էք Զեր ամուսնուն և գրում էք Զեր ծանօթներից մէկին, թէ իբր ես կամեցել եմ բաժանուել իմ ամուսնուց և թողնել սիրեցնեալ զաւակիս անմայր։ Եւ ում համար, Աստուած իմ։ — մի մարդու, որ ընդհանուր ծաղրի ու արհամարհանքի առարկայ է։ Այս, սիրելիս, նա կերմոնտովի դեն է…… Ֆի։

«Բայց բաւական է։ Ներեցէք, որ Զեզ ծանծրացրի։ Ասում են՝ Զեր պարոն ամուսինը փափագում է գնալ հանքային ջրերը, բայց չի կարողանում, որովհետև նրա այժմեան հոմանին արգելում է և ստիպում նրան տապակուել այստեղ անտանելի շոքերում։

«Ամուսին Զեզ ջերմ բարեներ է յղում։

«Ճանկանում եմ Զեզ ամենայն բարիք։

«Միշտ յարգող եկ. Տարատինովա։

Ուսւ տիկնոջ այդ նամակի ընթերցումը շատ յուղեց ինձ, նորից բացուեցին իմ հին վէրքերը, և ես անյագ փափագ զգացի մի անդամ ևս բարոյապէս հարուածել ինձ հալածողին, իմ կեանքը խորտակողին։

Ես մոռացել եմ զրելու նրա մի այլ անհաւատալի վարմունքը. վարմունք՝ որ նրա կոպտութեան ու ժլատութեան զենիթն էր։ Լսիր։

Մի անդամ, մի չէկ գրեցի և գնացի բանկը իմ սեպհական դրամագլխից մի գումար վերցնելու։ Նոր էի չէկը տուել հաշուապահին որինա մատեանում նշա-

նակէ, երբ յանկարծ երեաց ամուսինս, կոպտաբար խլեցէկը հաշուապահից և՝ բանկի ծառայողների ներկայութեամբ պատռեց...:

Ես մնացի ապշած:

Ապշեց նաև հաշուապահը. ապշեցին և միւս ծառայողները, որոնք ներկայ էին:

Ի՞նչ անէի:

Բարւոք համարեցի լոել:

Շրթունքներս կրծոտելով ու դողոջուն բայլերով դուրս եկայ բանկից՝ տանելով հետո մի խումբ օտարների ծաղրը, գուցէ նաև կարեկցութիւնը, ի՞նչ իմանամ:

ՓՊ

Եղեռնագործի համար բարձրագոյն պատիժն է քսան տարի տաժանակիր աշխատանք. իմ ամուսնական կեանքը ինձ համար եղաւ աւելի քան տաժանակիր աշխատանք: Նա եղել է անընդհատ ինքվիզիցիա՝ հոգեպէս և ֆիզիքապէս:

Նորերս ծանօթացայ մի պարոնի հետ, որ անմիջապէս սկսեց հետամուտ լինել ինձ այն լրբենի յանդգնութեամբ, որ միայն տղամարդկանց է յատուկ: Երբ այդ պարոնին զգալ տուի, որ շատ է շտապում, ասաց.

—Տիկին, շատ վաղուց է ինչ հետաքրքրվում եմ ձեզանով. արդէն^ո վաղուց է ինչ դուք գրաւել էք իմ ուշադրութիւնը:

Ես չկարողացայ զսպել իմ դառը հիգնանքը և գոչեցի.

—Միթէ... Ա՛խ, որքան երջանիկ եմ և միաժամանակ նաև յիմար, որ այդ չգիտէի:

Նա շփոթուեց, ապա սկսեց նկարագրել իրակեանքը տխուր գոյներով, Պարզուեց, որ «իսեղճը» անհուն տառապանքներ» է կրել: Ա՛հ, չես կարող երևակայել, թէ որպիսի հոգեկան հաճոյքով էի լսում, իմանալով որ այդ տառապանքների պատճառը կանայք են եղել: Այդ յագուրդ չստացած վրիժառութեան զգացումն էր, որ բորբոքուեց իմ մէջ մի վայրկեան: Ես նախանձեցի այն կանանց, որ գիտեն տղամարդկանց տանջել գիտեն խորովել՝ նրանց սեպհական իւղի մէջ:

Ես անխօս էի, իսկ «նահատակ» պարոնը շատ էր զգածուած: Նա նոյնիսկ արտասուեց՝ յիշելով իրա անցեալը: Բայց նրա արցունքները թուացին ինձ այնչափ միայն անկեղծ, որչափ անկեղծ եղան Գեղան Կոռւանեանի սիրոյ երդումները:

—Բաւական է, —գոչեցի ես նոյն հեգնութեամբ: — դուք՝ տղամարդիկդ տկար էք միայն այն-ժամանակ, երբ մենք՝ կանայքս սառն ենք դէպի ձեզ, և դաժան հրէշներ՝ հէնց այն վայրկեանց սկսած, երբ մենք հաւատում ենք ձեզ: Ձեզ չեմ հաւատում:

Գիտես ինչ է անում այժմ իմ նախկին ամուսինը: Զուր չեն ասում, թէ մարդ որ մի անգամ ուտ է զնում թեք ու սահուն հարթութեան վրայ, նա պիտի շարունակ գլորուի, մինչև հասնի անդունդի յատակը:

Գեղանը կոռւել է իր վերջին հոմանու հետ, այն քնքուշ էակի, որին ժեներալի դուստր էր անուանում: Ասում են՝ նա այժմ հիասթափուած է բոլոր տեղական կանանցից: Ի-հարկէ, ..մը կինը կարող է գնահատել նրա... քնքուշ հոգին, զգայնն սիրու, խելքը, բարութիւնը, մանաւանդ առատաձեռնութիւնն ու բարեկրթութիւնը:

Սակայն մուսաստանն ընդարձակ է, աշխարհը

լայնածաւալ: Եւ ահա ծերունի տարփամոլը ինչ է ա-
րել՝ հէնց իրա բարեկամների ասելով:

Զգիտեմ Պետերբուրգում թէ Մոսկվայում մի
բուլվարյին լրագիր է հրատարակվում, որը եթէ չեմ
սխալվում, կոչվում է „Բրաчնա գազետ“։ Ահա այդ
լրագրում մի որոշ համարի տակ նա յայտարարել է,
թէ այս-ինչ հասակի, բնաւորութեան, գոյնի՛ կեանքի
«ընկերունի» է փնտուում։ Հարկաւ, նրա հրաւէրն ար-
ձագանք է գտել. եկել են ցանկալի էակները, ապրել
է նրանց հետ մի կարճ ժամանակ և բաժանուել. Երկի
նախկին իդէալիստի համար նորագոյն իդէալներ որո-
նելու ժամանակակից ձև է։

Ինձ ցոյց տուին նրա հետեւեալ յայտարարու-
թիւնը.

«Համար (այս-ինչը), միջին տարիքի, միանգա-
մայն առողջ, բարի, հանգիստ, ցանկանում է ունենալ
բարեկամունի, որ լինի երիտասարդ, սիրուն, Դիմել...»։

Ցիշեալ լրագրի 35—36 համարում է մի
երիտասարդ սիրուն կին, որ հէնց սկզբից հետեւեալ
պայմաններն է առաջարկել պարոնին։

—Եթէ գուք, պարոն, կամենում է՞ ձեր ա-
ռատածենութիւնը և թէ ձեր ապագայ ընկերունուն
ձեր սէրն ու բարութիւնը ցոյց տալ, ապա պէտք է
այդ ընկերունուն՝ նոր կեանքի համար աւանս տաք
գոնէ մի 10,000 ռուբլի, որպէսզի ամուսնական շղթա-
ները աւելի ամուր լինին։ Բացի դրանից, գուք պէտք
է մնաս բարով ասէք ձեր հին կեանքին, հագնուիք ա-
մենավերջին տարագով, պիտի թրաշէք ձեր բեղերն ու
միրուբը, գլխիդ պարիկ—կեղծամազ դնէք՝ տաղ գա-
գաթդ ծածկելու, և մի մեծ շուն էլ պէտք է գնէք,
որ հետներս միշտ ման գայ։

Այդ անգիտացած չնաշխարհիկ դոյզը երեխ ար-

դէն հասած կը լինի լիակատար երջանկութեան, որով-
հետև Գեղանի մօտիկ բարեկամներից մէկն ինձ ասաց
թէ պարոնը երեսին կրեմ է քսում, որպէսզի թէ երե-
սի չէչերը լցուին և թէ միքիչ սպիտականայ։

Սակայն մի այլ աւելի՝ որբան հետաքրքրական,
նոյնչափ էլ անհաւատալի բան պատմեմ քեզ ու վերջ
տամ գրութեան։

Դու արդէն տեսար, թէ պարոնը ինչպէս անձ-
նուէր ասպիտի պատրաստակամութիւն էր ցոյց տալիս
իրա նամակի մէջ դէպի ինձ՝ իրերս ուղարկելու վե-
րաբերմամբ։ Բայց այդ բոլորը ևս ցածահոգի մարդուն
միայն յատուկ կեղծ ու սին խոստումներ էին, որ նա
շույլում էր նամակների մէջ, սակայն անընդունակ է
կեանքի մէջ տուած խօսքը կատարելու, ասածները
մի հատիկ գործով ապացուցանելու։ Նա մինչև օրս
ոչ մի բան չի ուղարկել իմ զարդերից, չնայելով կըր-
կին ու կրկին պահանջելուս՝ թէ ուղղակի իրանից,
թէ ուրիշների միջոցով բերանացի թէ գրաւոր։

Համոզուելով որ բնաւորութեամբ գոեհիկ մար-
դուց ազնիւ գործ սպասելն իզուր է, կարծես մի ներ-
քին դրդմամբ մօտս մնացած զմբուխտ ակով գնծիկը—
բրոշկան—որ պարոնը նշան էր տուել ինձ—տարայ
ակնավաճառ Զիլ-ովին և խնդրեցի գնահատել։

Ակնավաճառը գնծիկը ձեռքն առնելուն պէս ա-
սաց։

—Այստեղ գնահատելու ոչինչ չկայ, տիկին, այս
կեղծ ակն է, բոլորովին հասարակ, միայն կոպէկներ
արժեցող ապակի։

Զարմանքից վեր քաշուեցի. այդ բանը սաստիկ
դիպչելով ինքնասիրութեանս, վրդովուած նկատեցի.
—Ի՞նչ էք ասում, պարոն, այդ ինձ է ընծայուած։

թէ իբրև իսկական զմբուխտ և թէ իբրև թանկագին
հնութիւն:

— Տիկին, պատասխանեց ակնավաճառը, այդ ձեզ
ընծայողը պարզիպարզոյ խարել է ձեզ: Կրկնում եմ
այդ մի հասարակ ապակի է: Եթէ այդ ակը իսկական
զմբուխտ լինէր, առնուազը 3,000 ռուբլի կ'արժենար:

Ես չհաւատալով գրան, դիմեցի մի ուրիշին՝ Մայլ-
սոն ակնավաճառին: Դա ևս ձեռքն առնելուն պէս
համարեա թէ միևնոյն բանն ասաց, ինչ որ առաջին
ակնավաճառը:

Սարսափելի էր այդ ինձ համար: Ուրեմն կեղծ
ակով զարգարելիս եմ եղել կուրծքս քսան տարի
շարունակ:

Թէկ իսկն ասած՝ այդ շատ էլ բնական էր, որով-
հետեւ կեղծ մարդու ընծան նուիրաբերողի նման կեղծ
ու անարժէք պէտք է լինէր անշուշտ:

Այժմ ինձ համար պարզ է թէ ինչնւ չի ուղար-
կում իմ հազարներ արժեցող իրերս, որպէսզի փոխա-
րէնը յետ ստանայ իր գոօշանոց ապակու կտորը, որը՝
առանց մի օր իսկ ուշացնելու, ուղարկեցի պարոնին
հետեւալ գրութեամբ.


Возвращаю вамъ вашъ свадебныйъ подарокъ
оказавшійся фальшивымъ. Отдаю справедливость
цѣльности вашей натуры: съ первого дня до по-
слѣдняго вы были проникнуты одною фальшью.

Ես վերջացրի: Շնորհակալ եմ, սիրելիս, որ ա-
ռիթ առիր սիրս թեթևացնելու:

Այժմ ես ազատ եմ և հոգեկան անդորրութեան
մէջ, անդորրութիւն՝ որ չունեցայ քսան տարուայ ա-
մուսնական կեանքիս մէջ:

Քեզ սիրող Գոհարինէ:

1913 թ. Թիֆլիս:



111
112

111

ՀՀ Ազգային գրադարան



NL0345031

22480

33423

m

W.B. 1

m 0